ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ



ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Կ.ՊՈԼՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ (1918-1923 ԹԹ.)

ՄԱՐԻԱՄ ՎՈՒԱՄԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Կ.ՊՈԼՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ (1918-1923 ԹԹ.)

ՄԵՍՐՈՊ ՍՐԲ. ԱՇՃԵԱՆ ARCH. MESROB ASHJIAN

ՄԱՏԵՆԱՇԱՐ BOOK SERIES

202 202

ԵՐԵՎԱՆ
2020

ՀՏԴ 94(479.25):070
ԳՄԴ 63.3(5Հ)+76.02
Հ 872

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագիր՝ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆ. Ալբերտ Խաչատրյան

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԱՐԻԱՄ
Հ 872 Հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրները Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում (1918-1923 թթ.)/ Մ. Հովսեփյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020.- 192 էջ:

Աշխատությունը, հիմնվելով Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի հրապարակումների վրա, 1918-1923 թվականների կտրվածքով ներկայացնում է հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրները, ինչպես նաև Հայաստանի Առաջին հանրապետության և Թուրքիայի պետական ու հայ ազգային կառույցների կողմից դրանց լուծման նպատակով իրականացված ծրագրերն ու նախաձեռնած կարևոր ձեռնարկները: Պարբերականի հավաքածուն կարող է ծառայել որպես սկզբնաղբյուր, քանի որ թերթի էջերում առաջին ձեռքից տպագրվել են Հայկական հարցին ու մասնավորապես հայ գաղթականների ու որբերի հիմնախնդիրներին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր:

Գիրքն ունի գիտագործնական նշանակություն: Այն նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, հայ մամուլի պատմությունն ուսումնասիրողների և թեմայով հետաքրքրված ընթերցողների համար:

ՀՏԴ 94(479.25):070
ԳՄԴ 63.3(5Հ)+76.02

ISBN 978-9939-860-92-3

©ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Առաջաբան.....4
2.Տարագիրների և որբերի հիմնախնդիրները «Ճակատամարտ» թերթի «Վերապրողները», «Գավառի ձայներ», «Հայկական կյանք» և «Մեր խոսքը» խորագրերի ներքո.....6
3.Հայ գաղթականների վերադարձի և նրանց լքված գույքերի ճակատագրին առնչվող խնդիրներն օրաթերթի էջերում.....21
4.«Ճակատամարտի» հրապարակումները բռնի իսլամացված հայ որբերի ու հայուհիների մասին 31
5.«Ճակատամարտի» ռեպորտաժների շարքը «Ինչպե՞ս կապրին մեր որբերը» խորագրի ներքո 41
6.«Ճակատամարտի» անդրադարձն որբերի ստացած կրթության որակին ու մակարդակին.....55
7.Հայրենիքի տուրքի գաղափարը և «Ճակատամարտը».....58
8.Գաղթականների և որբերի համար Հայաստանի Առաջին հանրապետության կիրառած ջանքերի լուսաբանումը «Ճակատամարտ» օրաթերթում.....83
9.Գաղթականների և որբերի ներգաղթի խնդիրների անդրադարձը «Ճակատամարտի» էջերում.....89
10.Հայաստանի Առաջին հանրապետությունում որբերի և գաղթականների խնամատարության գործի լուսաբանումը «Ճակատամարտ» թերթում 97
11.Խորհրդային Հայաստանում գաղթականների և որբերի հիմնախնդիրների լուսաբանման առանձնահատկությունները թերթի հրապարակումներում.....108
12.Տարագիրների և որբերի հիմնախնդիրները «Ճակատամարտի» 1922-1923 թվականների հրապարակումներում 112
13.Վերջաբանի փոխարեն 179
14.Անձնանուններ.....182
15.Տեղանուններ.....185

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց ցեղասպանության և որբերի ու տարագիրների մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ ու մենագրություններ հայ և օտարազգի պատմաբանների, ցեղասպանագետների և հիշյալ հիմնախնդրով զբաղվող այլ բնագավառների մասնագետների կողմից: Այս մենագրության շրջանակներում փորձ է արվում ներկայացնել հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրները Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի էջերում 1918-1923 թվականների կտրվածքով: Այս պարբերականը 1909-1915 թվականներին Կ. Պոլսում լույս տեսած ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի մամուլի պաշտոնական օրգան «Հզատամարտ» օրաթերթի շարունակությունն էր, թեև այլևս այդ կուսակցության խոսափողը չէր: Պարբերականի փորձառու աշխատակազմի շնորհիվ թերթի հրապարակումներն ամենօրյա պարբերականությամբ պատկերացում էին տալիս Մուդրոսի զինադադարից հետո Թուրքիայում տիրող իրավիճակի, Հայկական հարցին առնչվող գործընթացի, արևմտահայության բեկորների գոյատևության, Հայաստանի Առաջին հանրապետության անցումային ի և այլ երկրների հետ ունեցած փոխհարաբերությունների, աշխարհաքաղաքական փոփոխությունների և ընթացիկ զանազան հարցերի մասին: Չափազանցություն չի լինի, թերևս, եթե ասենք, որ «Ճակատամարտի» 1918-1924 թվականների հավաքածուն կարող է լույս սփռել այդ ժամանակահատվածի հայոց պատմության վիճահարույց դրվագների դեռևս մշուշոտ պատկերի վրա: Շատ դեպքերում այն նույնիսկ կարող է ծառայել որպես սկզբնաղբյուր, քանի որ թերթի էջերում առաջին ձեռքից տպագրվել են Հայկական հարցին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր,

թիվ փաստաթղթեր, որոնք որևէ այլ պարբերականում կամ գրքում չենք գտնի: Դա առավել ցայտուն կերպով երևում է օրաթերթի կողմից մասնավորապես հայ գաղթականների ու որբերի հիմնախնդիրների լուսաբանման ժամանակ:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ տարագիր հայության ճակատագիրը, առօրյա հոգսերն ու ապագան գտնվել են ոչ միայն «Ճակատամարտի» խմբագրության և ընթերցողների, այլև մեր ժողովրդի ու հայկական պետականության ուշադրության և մտահոգության կիզակետում: Հայության համախմբված ջանքերով իրականացվել են բազմաթիվ ծրագրեր՝ հայ տարագիրների կյանքը բարվոքելու, նրանց հասարակության մեջ ներգրավելու և ի վերջո արժանապատիվ կենսապայմաններ ապահովելու նպատակով: Այդ ամենն արվել է տարաբնույթ դժվարություններ հաղթահարելու գնով: «Ճակատամարտի» հրապարակումները փաստում են, որ այդպես էլ անլուծելի մնաց բնօրրան հայրենիք վերադառնալու կամ ներգաղթելու և իրենց հայրենի բնակավայրերում վերստին ապրելու արևմտահայ տարագիրների բուն ցանկությունն-պահանջը: Ահա այս ամենն է վերլուծաբար ներկայացված սույն մենագրության մեջ, որն ամբողջական է դարձել թեմայի վերաբերյալ մասնագիտական ուսումնասիրություններում առկա աղբյուրագիտական արժանահավատ փաստերի համադրմամբ և վկայակոչմամբ:

ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԵՎ ՈՐԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ԹԵՐԹԻ «ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԸ», «ԳԱՎԱՌԻ ՁԱՅՆԵՐ», «ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔ» ԵՎ «ՄԵՐ ԽՈՍՔԸ» ԽՈՐԱԳՐԵՐԻ ՆԵՐՔՈ

1918 թվականի հոկտեմբերի 30-ին Մուդրոսում Անտանտի և թուրքական իշխանությունների միջև կնքված զինադադարի պայմանագիրը հնարավոր դարձրեց թուրքերի կողմից բռնի կերպով տեղահանված հայերի վերադարձը Կ.Պոլիս և իրենց նախկին բնակավայրերը[1]: Այդ փաստաթուղթն Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիայում բնակվող ազգություններին տալիս էր խոսքի և հասարակական գործունեության ազատություն:

1918-1919 թվականները նմանվում էին 1908 թվականի հուլիսին Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջմանը հաջորդած ժամանակահատվածին:

«Գինովութեան նոր շրջան բացուեր էր: Ճիշտ՝ ինչպէս որ եղեր էր 1908 յուլիսին: Հիմա ալ ազատութիւնը եկեր էր, բայց ի՞նչ սպանդէ մը յետոյ[2]»,- իր հուշերում վկայում էր արևմտահայ հայտնի գրող և հրապարակախոս, Կ.Պոլսի «Ազատամարտ» թերթի (1909-1915 թթ.) պատասխանատու խմբագիրներից մեկը՝ Հակոբ Սիրունին (Ճոլոյյան): Օգտվելով երկրում ստեղծված հանգամանքներից՝ գաղափարակից ընկերների հետ նա որոշել էր հրատարակել «Ճակատամարտ» օրաթերթը՝ որպես «Ազատամարտի» իրավահաջորդ[3]: Այս մասին Հ. Սիրունին գրում էր հետևյալը.

---

[1]«Թուրքիայի Հանրապետության պատմություն», Ե., 2010, էջ 14:

[2]Սիրունի Յ., «Ինքնակենսագրական նօթեր», Ե., 2006, էջ 204:

[3]«Ճակատամարտ» օրաթերթը լույս է տեսել Կ.Պոլսում 1918-1924 թթ.: Խմբագիրը Հակոբ Սիրունին էր: Պատասխանատու տնօրեններն էին

«Առաջին հերթին մեր մտահոգութիւնն եղաւ «Ազատամարտը» վերսկսիլը: «Ճակատամարտ» կոչեցինք զայն՝ ի նմանութիւն «Ազատամարտին»: Առաջին թիւը լոյս տեսաւ 1918 նոյեմբեր 20-ին: Քիչ յետոյ Շաւարշ Միսաքեանն ալ ելաւ բանտէն, ու միասին վարեցինք այլևս թերթը»[1]:

«Ճակատամարտը» 1918-1922 թվականների գրեթե բոլոր համարներում անդրադարձել է հայ գաղթականների ունեզրկման և որբերի ուծացման խնդիրներին:

«Գաղթակա՛ն...Անունն է այս այն անհամար բազմութիւններուն, որոնք աշխարհէ աշխարհ, քաղաքէ քաղաք ման կուգան կապոցներով, որպէս զի շնչելու տեղ մը գտնեն: Անունն է այն բիւրահազար դժբախտներուն, որոնք իրենց հայրենիքին մէջ անգամ չունեցան անկիւն մը կամ ողջ մնալու ապահովութիւն և ափ կ'առնեն ո՛ւր որ կրնան: Գաղթական է, մէկ խօսքով, մայր-երկրի բնակչութիւնը կէս առ կէս, եթէ՝ ոչ աւելի»[2],- գրում էր թերթը:

«Ճակատամարտի» խմբագրականներից և հոդվածներից շատերում օբյեկտիվորեն ու առանց չափազանցությունների ներկայացվում էին վերադարձող տարագիրների առջև թուրքական իշխանությունների կողմից հարուցված դժվարությունները, որոնց հետևանքով գաղթականի կարգավիճակում հայտնված արևմտահայությունը կամ մահացու հիվանդանում էր, կամ սովամահ էր լինում տունդարձի

Մանուկ Ասլանյանը և Շավարշ Միսաքյանը: Արտոնատերը Վրթանես Սարուհիյանն էր: Թերթն ունեցել է 3 անվանում՝ «Արդարամարտ» (1918, թիվ 1-12), «Արիարմարտ» (1918, թիվ 13-32) և «Ճակատամարտ» (1918, թիվ 33-ից մինչև վերջին համարը):

[1]Միրունի Յ., նշվ. աշխ., էջ 205:

[2]«Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1922, թիվ 963 («Պետք է պարտադրել, որ պարպեն»):

ճանապարհին, կամ ծննդավայր հասնելով՝ չէր կարողանում տիրանալ իրենից խլված տուն ու տեղին, գույքին և հողակտորին, թեև Մուդրոսի զինադադարի պայմանագրով նախատեսվում էր թուրքերի գերեվարած և նրանց կողմից բռնի կերպով տեղահանված հայերի վերադարձը Կ.Պոլիս[1]:

Տարագիրների և որբերի հիմնախնդիրներին «Ճակատամարտն» անդրադառնում էր «Վերապրողները», «Գավառի ձայներ» և «Հայկական կյանք» խորագրերի ներքո, ինչպես նաև՝ «Մեր խոսքը» վերնագրով խմբագրականներում: Դրանցից մեկում՝ «Ինչպես կը վերադառնան տարագիրները» վերլուծական հոդվածում[2] տարագրված հայերի վերադարձը բնորոշվում էր որպես նոր աքսոր: Կոնիայի կայարանում մեկ շաբաթից ավել էր, ինչ 2000 հայեր սպասում էին, որ իրենց տրամադրեին անվճար վագոններ և հատկացվեր որոշակի գումար, որպեսզի կարողանային վերադառնալ իրենց ծննդավայրերը: Նրանցից յուրաքանչյուրը մինչև Կոնիա հասնելը 15-20 ոսկի էր վճարել կառապաններին, ծախսել էր խնայողությունները և արդեն «աւուր հացի կարօտ վիճակի մէջ» էր[3]:

Տարագիրներից շատերը Հայոց ցեղասպանության տարիներին մի կերպ փրկվելով՝ ապաստանել էին տարբեր գյուղերում, իսկ 1918 թվականի նոյեմբերի վերջերից տեղական թուրք պաշտոնյաները նրանց բռնի տեղահանում էին՝ իբր թե նրանց բնակավայրերը պետության կողմից վերա-

---

[1]«Թուրքիայի Հանրապետության պատմություն», նույն տեղում:

[2]«Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1918, թիվ 12 («Ինչպես կվերադառնան հայ տարագիրները»):

[3]Նույն տեղում:

ազատ են վերադառնալու, թէ Գոնիա ձրի վակօններ իրենց կը սպասեն, բայց եղեր են գիւղեր ալ, ուր ժողովուրդը ժանտարմաներով հանուեր է: Ուրիշ ընտանիքներ ալ ստիպուեր են աճապարել իրենց հասած աղջիկները հետապնդումներէ ազատելու համար»,- գրում էր օրաթերթը[1]:

Կոնիայի կայարանում կուտակված հայ գաղթականներին բաժանվել էր 13 վրան, ինչը բավական չէր գաղթականների բազմությանը տեղավորելու համար: Նրանց մեծամասնությունը նիհար, դժգույն և ցնցոտիապատ էր: Հոդվածագիրը փաստում էր, որ վերջին 15 օրվա ընթացքում 25 հոգի մահացել էր հենց այդ կայարանում[2]: Եվ դա այն դեպքում, երբ, կառավարության որոշման համաձայն, Կոնիայի կայարան մտնող յուրաքանչյուր գնացքի 2 վագոնը պետք է հատկացվեր հայ գաղթականների վերադարձի համար: Դրան հակառակ «բազմաթիւ հայ ընտանիքներ կայարանը կը սպասեն ցուրտին ու անձրևին տակ, և կայարանի հրամանատարը միշտ կը մերժէ իրենց վակօն տրամադրուելու համար եղած դիմումները»[3]:

Առաբազարի Արիֆյեի կայարանում հայ գաղթական 10 ընտանիք էր 8 օր բաց երկնքի տակ դեկտեմբերյան ցուրտ եղանակի պայմաններում սպասում իրենց իբրև թե տրամադրվելիք վագոններին, բայց ապարդյուն[4]: Կառավարությունը 3 փոքրիկ վրան էր հատկացրել Գաթմայի կայարանում ծվարած 300 տուն հայ, հույն և արաբ գաղթական

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1918, թիվ 20 («Ցիրուցան տարագիրները»):

[4]Նույն տեղում:

ընտանիքներին, որոնք «Մուսուլի նահանգէն ճամբայ հանուած էին իրենց տեղերը վերադարձուելու համար»[1]:

Ի վերջո Կոնիայի կայարանում գտնվող հայ գաղթականներին տրամադրվում է ապրանքատար 13 բաց վագոն: Դրանց մեջ տեղավորված 500 հայերը 2 օրվա ճանապարհը 10-15 օրում անցան, քանի որ գնացքի երթևեկության համար անհրաժեշտ քանակությամբ ածուխը միտումնավոր միանգամից չէին տրամադրում, որ այդ օրերին տեղացող տեղատարափի անձրևի տակ բաց վագոններում խռնված հայերը մրսեին, հիվանդանային, մահանային[2]: Նույն վիճակի մեջ էին հայտնվել նաև Սուլթանյե կայարանում կուտակված 3000 տարագիր հիմնականում հայուհիները, որոնց սպառնում էր «Սպիտակ ջարդը» կամ հայերին առանց զենք-զինամթերքի կոտորելու նոր եղանակը[3]: Նրանք «դատապարտուած էին ցուրտէն և քաղցէն հիւանդանալու և մեռնելու»[4]:

«Ճակատամարտը» համոզված էր. եթե թուրքական իշխանությունները կամենային, ապա բնօրրան-հայրենիք վերադարձող հայ գաղթականները կապահովվեին գնացքի վագոններում: Թերթը հիշատակում էր այն փաստը, որ Առաջին աշխարհամարտի թեժ շրջանում էր կատարվել հայության տեղահանումն իրենց ծննդավայրերից դեպի Սիրիայի անապատները, դեպի մահ: «Կառավարութիւնը երկաթուղիի գիծերուն վրայ ահագին զինուորական առաքումներով ու փոխադրութիւններով զբաղած էր, բայց այն ատեն հայ ժողովուրդը իր դահիճներուն ձեռքը ձգելու համար ոչ միայն

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1918, թիվ 12 («Ինչպես կվերադառնան հայ տարագիրները»):

[3]Նույն տեղում (տե՛ս «Ո՞վ է պատասխանատուն» խմբագրականը):

[4]Նույն տեղում, 1918, թիվ 13 (տե՛ս «Սպասող տարագիրները» հոդվածը):

վակօն չը պակսեցաւ, այլ մէկը միւսին յաջորդող ամբողջ կառաշարներ յատկացուեցան»[1]:

Վեյվեի էջմե գիւղը 180 տուն հայություն ուներ, որոնցից 15-20 տուն էին կազմում Եղեռնից հետո ծննդավայր վերադարձողները: Նրանք հայտնվել էին անպատսպար և անօգնական վիճակում, քանզի նրանց տները բռնազավթել էին թուրք կամ իսլամ գաղթականները, որոնք չէին ուզում դուրս գալ և բնակարանները հանձնել դրանց բուն տերերին[2]:

Մալկարայից թերթին տեղեկացնում էին նմանօրինակ իրավիճակի մասին, երբ տեղական մարմինների ներկայացուցիչները «չէին ուզեր յանձնել վերադարձողներուն գոյքերը»[3]:

Պարտիզակի թղթակիցը գրում էր այն մասին, որ այնտեղի թուրքական որբանոցը ավազականոցի էր վերածվել[4]: Վերջին 3 տարվա ընթացքում այդ որբանոցի թուրք աշակերտները Պարտիզակի հայերի լքված տներից գողացել ու վաճառել էին դրանցում եղած պիտույնի և արժեքավոր իրերը:

Երբ 1918 թվականին Պարտիզակ վերադարձած գաղթականի վերածված հայերը այդ գողոնի մեջ ճանաչում էին իրենց պատկանած իրերը և պահանջում էին վերադարձնել, միևնույնն է, նրանց արդարացի պահանջն ու բողոքի ձայնը անլսելի էին մնում: Նրանց անգամ չէին թողնում Պարտիզակի եկեղեցում հայերի կողմից ի պահ թողնված ու դեռևս չգողացված իրերից վերցնել օգտագործման համար[5]:

---

[1]Նույն տեղում, 1918, թիվ 10 («Ադաբազարի հայերը»):
[2]Նույն տեղում, 1918, թիվ 12 (տե՛ս «Վեյվեի հայերը» հոդվածը):
[3]Նույն տեղում, 1918, թիվ 28 («Գավառի ձայներ»):
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:

Թերթի տպագրած տեղեկությունների համաձայն՝ Ադանայում թուրքական իշխանություններն աճուրդի էին հանում հայերից գողացված և յուրացված անբավ հարստությունները նույնիսկ Մուդրոսի զինադադարից հետո[1]:

«Ծախելու կը պատրաստուի տարագրեալ Հայերուն հարիւր հազարներով ոսկի արժող ինչքերը, հազարներով գորգեր ու կապերտներ, որոնց նմանը Պոլսոյ և ոչ մէկ գորգավաճառին քովը կարելի է գտնել: Կուրասիներ, թանկարժէք իրեղէններ եւ այլն»,- գրում էր «Ճակատամարտը»[2]: Ադանայում հայ գաղթականների կալվածքները «Էմվալը մեթրուքե» էին հայտարարվել իթթիհատական կառավարության կողմից և վարձու էին տրվել թուրքերին: Վարձակալները քարոզանդ էին արել հայերին պատկանող պտղաբեր այգիները, նարնջի ու լիմոնի ծառաստանները: Նրանք հողին էին հավասարեցրել հայերի տները՝ վաճառելով կամ վառելով դրանց վերջին տախտակն անգամ[3]:

Մուդրոսի զինադադարից հետո, բավական դժվարություններ հաղթահարելով, հայրենի Ադաբազար էին ներգաղթում այդտեղից բռնությամբ տարագրված հայերը: Նրանք տարբեր կայարաններում ստիպված սպասել էին 20 օրից ավել: Այդքան սպասեցվելը պատճառաբանվել էր իբրև թե շոգեքարշերի անբավարարությամբ[4]: Այս գաղթականները կայարաններում սպասել էին դրսում՝ մնալով անխնամ ու հացակարոտ վիճակում:

Ադաբազարը Կ.Պոլսին մոտ գտնվող հայահոծ քաղաք էր: Ադաբազարցիներին իրենց ծննդավայրից 3 օրվա ընթաց-

---

[1]Նույն տեղում, 1918, թիվ 20 («Զգայացունց հայտնություններ»):
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում, 1918, թիվ 10 («Ադաբազարի հայերը»):

քում բռնությամբ տեղահանելուց որոշ ժամանակ առաջ ատաջնորդարանի կողմից կատարված վիճակագրության համաձայն՝ այդ քաղաքում ապրում էր ավելի քան 20.000 հայ[1]: Նրանք տարագրվել էին և կոտորվել: Հայաջինջ ընդհանուր կոտորածից փրկվել էր 5000 ադաբազարցի, այսինքն՝ գրեթե նրանց ¼-ը[2]:

Համազգային սպանդից հրաշքով ազատված, բայց 4 տարի ամեն օր և ամեն ժամ մահվան այհավիրքն ապրած «ափ մը գաղթական ատավազարցի հայեր, հայրենաբաղձութենէ մղուած և յոյսով լի» վերադառնալով հայրենի Ադաբազար, հուսախաբվում են[3]: Քաղաքի հայկական թաղերն սվերակ էին դարձել, իսկ թուրք «բարեկամներին» ի պահ տրված նրանց գույքերը և ապրանքները թալանվել ու յուրացվել էին[4]:

Ադաբազարում 3500 տուն և ավելի հայություն կար մինչև 1515 թվականի Եղեռնը[5]: Նրանց տների կեսից ավելին հիմնահատակ կործանել էին թուրքերը, իսկ դեռևս կանգուն մնացածների մեծ մասը կիսաքանդ էին և դարձել էին բնակվելու համար ոչ պիտանի:

Ադաբազարից ուղարկված թղթակցության մեջ բերված էին փաստեր առ այն, որ տեղի թուրքերը ոչ միայն տեղահանության օրերին հայերի՝ 100 ռսկի արժեցող ապրանքները 100 փարայով էին գնել կամ սպառնալով՝ ձրի տիրացել էին դրանց, այլև հայերին դեռ քաղաքից չհանած ու դեռ նրանց՝ կայարանում գտնվելու ժամանակ մտել էին արդեն

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում, 1918, թիվ 31 («Ահա եկեր են, բայց ի՞նչ կը գտնեն»):
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:

ամայի դարձած հայկական տները ու թալանել-տարել էին արժեքավոր ամեն ինչ[1]: Տարել էին նմանապես հայերի բոլոր բնակարանների ապակիները, դռները, կողպեքները: Թաքցված գանձեր գտնելու ակնկալիքով քանդել էին հայերի տների սանդուղքները, առաստաղները, հատակները:

Հայերին տեղահանելուց հետո թուրքական կառավարությունը նրանց դեռևս կանգուն մնացած տներում անմիջապես սկսել էր տեղավորել Բալկանյան պատերազմից Թուրքիա եկած իսլամ դավանող գաղթականներին և Առաջին աշխարհամարտի ժամանակ հակառակորդի գրավված տարածքների իսլամ ազգաբնակչությանը[2]: Այսինքն՝ նրանց անվճար և անհատույց տրամադրվել էին հայերի տները, ունեցվածքը, մշակովի հողատարածքներն ու բերքատու այգիները, ինչպես նաև պետական նպաստ, վառելիք ու սերմացու:

Իրենց բնակավայրերը վերադարձող հայ գաղթականներին թուրքական իշխանությունները չէին տալիս նրանց ունեցվածքը, բացի այդ չէին տրամադրում պետական նպաստ և գոնե առաջիկա ձմեռվա համար վառելիք, իսկ գարնանացանի համար սերմացու[3]:

Ցեղասպանությունը վերապրած 3000 հայ գաղթականներ «թշվառութեան էին մատնուած» Խարբերդում և շրջակա գյուղերում[4]: Եթե նրանցից յուրաքանչյուրին օրական տրամադրվեր մեկ կամ մեկուկես հաց, ապա, ըստ թերթի հաշվարկների, ամսվա կտրվածքով անհրաժեշտ կլիներ ծախ-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1918, թիվ 28 («Միշտ առաջադիմ»):

[4]Նույն տեղում, 1918, թիվ 25 («Վերապրողները»):

սել 10.000 ռսկեդրամ[1]: Թերթը նշում էր նաև, որ 1916 թվականին Խարբերդում և շրջակա գյուղերում ապաստանած հայ գաղթականների թիվն իրականում ավելի շատ էր՝ 5000[2]: Նրանց օգնում էին այդ շրջանում գործող ամերիկյան միսիոներները: Գաղթականների թիվը գնալով պակասում էր, որովհետև նրանց մի մասը վերադարձել էր հարազատ բնակավայրերը, իսկ մի մասն էլ, անսնունդ և անխնամ մնալով, մահացել էր: Խարբերդի գրեթե 3000 հայ գաղթականներից 2000-ը որբեր էին՝ «բոլորն ալ շատ աննպաստ պայմաններու տակ»[3]:

«Գավառի ձայներ» բաժնում զետեղված տեղեկատվության համաձայն՝ Յալովայի Մերտեկյոզ գյուղ վերադարձած ավելի քան 83 տուն կազմող 180 հայ գաղթականները տեղի հայերին պատկանած 269 տներից 121-ն էին կիսականգուն գտել[4]: Ընդ որում, հայերի 94 տների հետքն անգամ չէր մնացել, իսկ 54-ը բացարձակապես պիտանի չէին բնակության համար: «Նոր 300 հոգի գալուն կը սպասուի: Ասոնցմով դեռ մէկ երրորդն ալ դարձած չըլլար»,- գրում էր «Ճակատամարտի» թղթակիցը[5]: Նա նաև ասում էր, որ Յալովայի Յալաքտերե գյուղ էին հասել 74 գաղթական կամ 39 ընտանիք հայեր: Տեղի 239 հայկական տներից 146-ն էին դեռևս բնակելի համարվում, 37-ը կիսակործան էին, 56-ը՝ հիմնահատակ փլցված[6]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում, 1918, թիվ 32 («Գավառի ձայներ»):
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

«Ճակատամարտի» հրապարակումները փաստում էին, որ Մուդրոսի զինադադարից հետո թուրքական «կստավարութիւնը հրահանգ տուաւ տարագրեալ Հայերը իրենց բնակավայրերը վերադառնալու»[1]: Բացի դա՝ երկրի ղեկավարությունը «կ'արտօնէ, որ ամեն մարդ իր հայրենիքը երթայ, ճամբորդութեան ծախքերը և ապահովութիւնը երաշխաւորելով»[2]: Օրաթերթում տպագրված այս և բազմաթիվ այլ հոդվածներն ու ռեպորտաժները հակառակն էին վկայում:

«Ճակատամարտը» գրում էր, որ թուրքական կառավարության «գործը խօսքին հակառակ» էր[3]: Բերում էր հետևյալ փաստարկը: Զինադադարից հետո վարչական կարգադրությամբ պետք է վերջ տրվեր հայերի հալածանքին, իսլամացված հայերը պիտի դառնային իրենց դավանած նախկին կրոնին, իսկ հայ որբերն ու բռնի առևանգված հայ աղջիկները և կանայք պիտի վերադարձվեին հայ համայնքին[4]: Միևնույն ժամանակ գաղթական դարձած հայերը պետք է վերադառնային իրենց բնակավայրերը՝ վերատիրանալով իրենցից խլված «կալուածներուն և յափշտակուած ինչքերին»[5]: Հայկական գավառներից հասնող լուրերը, սակայն, վկայում էին, որ «այդ բոլորը խօսքի սահմանէն անդին չանցան, ամեն բան կը մնայ Թալէաթի կարգադրութեան համաձայն»[6]: Թերթին էր դիմել Մարզվանից առևանգված օրիորդ Փառանձեմ Եփրեմյանը, որը, քաջալերվելով կառավարության հրամանից, փախել էր իրեն առևանգած թուրքի տնից,

---

[1]Նույն տեղում, 1918, թիվ 20 («Իթթիհատական նոր դաւ մը»):
[2]Նույն տեղում, 1918, թիվ 25 («3000 հայեր թշվառության մատնված»):.
[3]Նույն տեղում, 1919, թիվ 106 («Խոսիլը բավական չէ»):
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

գաղրութեան համաձայն»[1]: Թերթին էր դիմել Մարզվանից առևանգված օրիորդ Փառանձեմ Եփրեմյանը, որը, քաջալերվելով կառավարության հրամանից, փախել էր իրեն առևանգած թուրքի տնից, բայց ենթարկվում էր հետապնդման՝ կառավարության գաղտնի հրահանգի համաձայն[2]:

«Ճակատամարտը» պնդում էր, որ բռնի թրքացված հայ կանայք չէին կարողանում վերադառնալ դեպի քրիստոնեություն և ըստ այդմ՝ նրանք չէին կարող հայ մարդու ժառանգորդը լինել, քանի որ արդեն համարվում էին թրքուհիներ[3]: «Կալուածներու խնդիրը գրեթէ անլուծելի է, որովհետեւ ամենաբարձր պաշտօնեաներէն մինչեւ ամենախոնարհը, միևնոյն յանկերգը ունին իրենց բերնին մէջ՝ Մարկոսին, Յարութիւնին, Յովհաննէսին կալուածները Շաքէին և Լ.ութիֆիէին. չիյնար»,- կարդում ենք «Ճակատամարտում»[4]:

Ըստ թերթի հրապարակումների՝ 1918 թվականին, Մուդրոսի զինադադարից հետո, թուրքական կառավարությունը թեև չեղյալ էր հայտարարել հայերի վերաբերյալ իթթիհատական կառավարության ընդունած բացառիկ օրենքները (մասնավորապես Լքյալ գույքերի (Էմվալը մեթրուքե) օրենքը[5]) և կարգադրել էր գաղթական կամ տարագիր հայերի բոլոր կալվածքները վերադարձնել դրանց նախկին տեղերին, բայց 1919 թվականին Թուրքիայի Ներքին գործերի նախարարությունը որոշակի սրբագրումներ էր կատա-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում, 1922, թիվ 1052 («Արդեն տեր եղան»):

ռել այդ կարգադրության տեքստում[1]: Դրանց համաձայն՝ «տարագրեալներէն անոնք, որ կը վերադառնան և անձնապէս իրենց կալուածները կը պահանջեն, անմիջապէս պիտի ստանան, իսկ անոնք, որ անձնապէս չեն ներկայանար (մեռած, կորսուած, կոտորուած), անոնց մօտաւոր կամ հեռաւոր ժառանգորդներուն չպիտի յանձնուին կալուածները»[2]: Այստեղից թերթը հետևություն էր անում, որ հայերի անտեր մնացած կալվածքները կամ պիտի մնային դրսնք բռնագրաված թուրքերի ձեռքերում, կամ պիտի դառնային «արքունական կալուած»[3]: Այնինչ, պարբերականի կարծիքով, թուրքական կառավարությունն իրավական ու բարոյական ոչ մի հիմք չուներ այդպես վարվելու համար: «Հայերու կալուածները անտէր չէին մնար, եթէ Հայերը իրենց կամքէն անկախ, բնաջնջումի դատապարտուած չըլլային: Զոհերն իրենք մեղաւոր չեն: Ուրեմն և կառավարութիւնը իրաւունք չունի այդպիսիներու կալուածները յափշտակելու: Այդ կալուածները պէտք է յանձնել ուղղակի տէրերուն, իսկ անոնց չգոյութեան պարագային, անոնց ազգականներուն: Իսկ այն կալուածները, որոնց ժառանգորդներուն ազգականութիւնը օրէնքի նախատեսած սահմաններէն հեռու են, պէտք է վերադարձուին պատկանեալ համայնքներուն»,- ահա սա էր թերթի դիրքորոշումն այս խնդրում[4]:

«Ճակատամարտը» գրում էր, որ արևմտահայերը սխալվել էին՝ կարծելով, թե զինադադարից հետո իրենց համար

---

[1]Նույն տեղում, 1919, թիվ 90 («Տարագիրներու կալվածները»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

ստեղծվելու էր բնականոն և տանելի կացություն[1]: Իրականում թուրքական իշխանության տակ գտնվող հայությունը կրկին օրենքից դուրս էր համարվում, ճիշտ այնպես, ինչպես զինադադարին նախորդող տարիների ընթացքում: Հայ ժողովուրդն իր հայրենիքում թափառական էր և անպաշտպան, զուրկ էր տուն ու տեղից, ընտանիքից, ունեցվածքից, նաև ենթակա էր ջարդի սպառնալիքին: «Ա...էն կը գրեն մեզի, թէ կառավարութիւնը խստիւ արգիլած է բոնութեամբ իսլամացած Հայերու իրենց նախկին կրօնքին վերադարձը: Բ...էն կը գրեն, թէ հայ ժողովուրդին չեն վերադարձներ իր տունը և կալուածները, վերադարձողները փոդոցները կը թափառին: Գ...էն կ'իմացնեն, թէ նախկին ջարդարարները դեռ կը մնան իրենց պաշտօններուն վրայ և կը սպառնան հայ ժողովուրդի վերջին մնացորդներն ալ կոտորել»[2],- այսպիսի բազմաթիվ փաստեր էր բերում պարբերականը:

1919 թվականի օգոստոսին թերթը տեղեկացնում էր թուրքական կառավարության այն որոշման մասին, որով գավառային իշխանություններին հրահանգ էր տրվել տասանորդի տուրք գանձել բոլոր հայկական գյուղերից, որոնցում դեռևս նոր-նոր էին պատսպարվել գաղթից վերադարձող հայ տարագիրները[3]: Եվ դա այն դեպքում, երբ արևմտահայ գավառներում հայերի դատարկ մնացած տներում կառավարության հրամանով տեղավորված իսլամ և թուրք գաղթականներին ոչ միայն ազատում էին տասանորդի տուրքից, այլև մնացած նահանգների ազգաբ-

---

[1]Նույն տեղում, 1919, թիվ 97 («Վաղվան համար»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1919, թիվ 232 («Վերադարձող տարագիրները և տասանորդի տուրքը»):

նակչության կողմից մուծված տասանորդի տուրքից հավաքված հացահատիկը ուղարկում էին նրանց որպես օգնություն[1]: «Այս պատկերին առջև մարդ կը մնայ ապշած. մի՞թէ աշխարհի վրայ կը գտնուի կառավարութիւն մը, որ ըլլայ այնքան անողորմ, որ մտքէն անցնէ տասանորդի տուրք գանձել այնպիսի ժողովուրդէ մը, որ վերջին 5-6 տարիներու ընթացքին յայտա- բարուած էր օրէնքէ դուրս, անոր մեծ մասը մարդ գազաններու և վայրենի գազաններու կեր դարձած է, թափառած է պետութեան զանազան մասերը, առանց գործի, առանց բնակարանի, կորսնցուցած ամեն բան, մերկ վերադարձած է իր աւերուած օճախը»[2],- սեփական վերաբերմունքն այսպես էր արտահայտում թերթը:

«Ճակատամարտը» պահանջում էր թուրքական իշխանություններից վերջ տալ հակամարդկային քաղաքականությանը և պետական միջոցներով հոգ տանել հայ գաղթականների և որբերի խնդիրների մասին այնքան ժամանակ, մինչև որ նրանք ոտքի կկանգնեին ու կվերակազմավորվեին[3]: Որպես հիմք թերթը նշում էր Թուրքիայի այն օրենքը, որի համաձայն՝ գաղթականությունը մինչև 7 տարի տուրքերից ազատված էր[4]: «Թուրք կառավարութիւնը չի կրնար արդարութեամբ կառավարել»[5],- եզրակացնում էր պարբերականը:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԼՔՎԱԾ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱԿԱՏԱԳՐՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՕՐԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ

1918 թվականի դեկտեմբերի 10-ին թերթն անդրադարձել էր հայ գաղթականների վերադարձի և հայ ազգերի հիմնահարցերի լուծման համար պետության հովանու ներքո ստեղծվելիք խստը հանձնաժողովի աշխատանքներին[1]: Այդ հանձնաժողովում Բ. Դոան կողմից նշանակվելու էին հայ և թուրք անդամներ, ինչին համաձայն չէր օրաթերթը, որի համոզմամբ՝ հայ անդամները պիտի ընտրվեին հայ ներկայացուցիչների կողմից և իրենց հրահանգներն էլ պիտի ստանային նույն աղբյուրից[2]:

Թերթը ձախողված և կորստաբեր էր համարում հայ գաղթականների անծրագիր ու հախուռն վերադարձի որոշումը, ինչի հետևանքով ավելորդ զոհեր էին գրանցվում ամեն օր: Տեղեկացնում էր նաև, որ պետությունն արդեն ցանկանում էր վերադարձած հայ գաղթականներին այլևս չտեղափոխել նրանց նախնին բնակավայրերը, այլ պահել այն վայրերում, որտեղ նրանք հայտնվել էին աքսորվելու կամ տարագրվելու պատճառով: Հենց այդ վայրերում պիտի «լուծում ստանային» նրանց կարիքները[3]:

Հայ-թուրքական պետական հանձնաժողովը և Հանձնաժողովական ուժերի կողմից հայ գաղթականների վիճակի ուսումնասիրության նպատակով կազմվելիք մարմինը պի-

---

[1]Նույն տեղում, 1918, թիվ 16 («Որոշումը չի բավեր»):
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:

տի լինեին հայ տարագրյալների բնակավայրերում և աքսորավայրերում՝ տեղում նրանց խնդիրներին ծանոթանալու և դրանց հումար լուծումներ առաջարկելու նպատակով[1]: Թերթը թելրահավատորեն էր մոտենում այդ հանձնաժողովների աշխատանքների այդյունավետությանը: Գտնում էր, որ Կ. Պոլսում և Օսմանյան կայսրությունից դուրս գտնվող հայկական կայացած գաղթօջախներում գործող ազգային կառույցները պիտի զբաղվեին հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրներով՝ հումատեղ մշակված ծրագրերով ու ռազմավարությամբ: Կարևոր էին յուրաքանչյուր օրն ու ժամը: Չէ որ աքսորավայրերում կամ տարագրության շրջաններում տարաբնույթ չարչարանքների էին ենթարկվում հայ գաղթականներն ու որբերը, որոնց ամեն վայրկյան սպառնում էին մահն ու կոտորածը[2]:

«Հայաջինջ սարսափները» խորագրի ներքո տպագրված Սուրեն Պալթանյանի լուրից ընթերցողները տեղեկանում էին, որ դեպի Հալեպ տարագրված հայերի մեկ երրորդն ուղարկվել էր Մոսուլի Հանապարհի վրա գտնվող Ռես-Յուլ-Այն (Ռեայուլայն) գյուղ[3]: Հայ գաղթականների վրանները թուրքերով և չեչեններով բնակեցված այդ գյուղից կես ժամվա հեռավորությամբ էին տեղադրված: Ռես-Յուլ-Այնի գյուղապետը հայ գաղթականներին կեղծ խոստում էր տվել՝ նրանց չքշել անապատ ու բնակեցնել գյուղում, եթե նրանք իրենց ուժերով և մոտները եղած գումարով կառուցեին 3 մեծ շինություն, որոնք պիտի ծառայեին որպես զորանոց թուրք զինվորների համար: Երբ հայ գաղթականները ավար-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում, 1918, թիվ 13 («Ռես-Յուլ-Այնի կոտորածը»):

տում են այդ շինությունների կառուցումը, գյուղապետը դրժում է խոստումը և նրանց վաճառում է ոչխարների հոտի պես[1]: Մեկ «հոտը» բաղկացած էր 800-1000 հայ գաղթական և որբ պարունակող վրանից և վաճառվում էր 900-1200 կարմիր ոսկիով[2]: Գնված հայ գաղթականներին և որբերին մեկ ժամ ճանապարհով քշելուց հետո բոլորին մերկացնում էին և այրում խարույկի մեջ, իսկ այնուհետև նրանց դիակներն էին բզկտում ոսկուց պատրաստված ատամներ գտնելու հույսով[3]:

Ռես-Յուլ-Այնում եղած հայ գաղթական գեղեցիկ աղջիկներին կամ վաճառում էին արաբներին «1 կամ 2 օխա պանիրի փոխարեն», կամ թալանում ու սպանում էին[4]: Մինչև 1918 թվականի նոյեմբեր ամիսը 5-10 տարեկան բազմաթիվ հայ որբերի օրական 1 հացի դիմաց մերկանդամ քար հավաքել էին տալիս Ռես-Յուլ-Այնի շրջակայքում կառուցվող երկաթուղու ճանապարհի համար[5]:

Մուդրոսի զինադադարից հետո հոդվածագիր Ս. Պալթանյանի կողմից այդ որբերից ընտրվել էին 20 հոգի (աղանացի և կեսարացի.- Մ.Հ.), տարվել էին Ադանա և հանձնվել էին նրանց ազգականների խնամքին[6]:

Ցեղասպանությունից փրկված ու «յանուն Հայրենիքի և Ազատության զոհուող մաս մը Սասունցիներ՝ 3560 անձ» հայտնվել էին Հյուսիսային Կովկասի Արմավիրի շրջա-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

նում[1]: Նրանք 1919 թվականի հոկտեմբերի 25-ին նամակ էին ուղարկել արևմտահայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանին[2]: Այդ նամակից պարզվում էր, որ սասունցիները զրկված էին պետական ամեն կարգի աջակցությունից: Նրանք խնդրում էին շուտափույթ օգնել իրենց: Հակառակ դեպքում, նշում էին, որ կմատնվեին սովամահության կամ ցրտահարության, քանի որ բնակարան չունենալու պատճառով բացօթյա կացարաններում էին պատսպարված[3]:

1919 թվականի հոկտեմբերին Հայ ազգային միության կողմից ազգային կենտրոնական իշխանություններին ուղղված մեկ այլ նամակում տեղեկացվում էր, որ Կիլիկիայի շրջանում ապաստան փնտրող Այնթապից ու Արևմտահայաստանի գավառներից եկած հայ գաղթականների թիվը հասնում էր 20.000-ի[4]: «Այսքան պատկառելի թուով թշուառ ու կարօտ հայութիւն մը ամեն օր ամեն տեսակ դիմումներ կը կատարէ Միութեանս մօտ, և որոնք մեծ մասով կը մնան անպատասխան դրամի չգոյութեան պատճառաւ»[5],- գրված էր նամակում: Նամակագիրը հայտնում էր նաև, որ Այնթապում ապաստանած հայ գաղթականությունը մինչ նամակը գրելու օրը ոչ Ազգային կենտրոնական իշխանություններից, ոչ ազգային բարեգործական մարմիններից և ոչ էլ մի ուրիշ մարմնից որևէ նպաստ չէր առացել[6]:

Կիլիկիայի շրջանից մեկ այլ Անտիոքի և Սուեդիի (Սուէտի) Հայ ազգային միությունից ստացված գրությունն անհա-

---

[1] Նույն տեղում, 1919, թիվ 300 («Սասունցիներու վիճակը Հյուս. Կովկասի մեջ»):
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, 1919, թիվ 310 («Կացությունը Կիլիկիո շրջանին մեջ»):
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:

սյուղ օգնություն էր պաղատում, քանզի տեղի հայ գաղթականներն ու որբերն, «անօթութենէ վերջ, հիմա կը տառապին մալարեայի ու թիֆոյի պէս վոնանգաւոր և փոխանցիկ հիւանդութիւններէ, և մահերու թիւը օրէ օր կ'աւելնայ»[1]:

Հայ գաղթականների և որբերի խնդիրների մասին հոգացող ազգային Ընդհանուր մարմինը, օրաթերթի կարծիքով, կարիք ուներ համազգային կարող ուժերի համախմբմանը, համագործակցությանը, այդ թվում՝ Հայաստանի Առաջին հանրապետության աջակցությանը[2]:

Անհրաժեշտ էր գործել մի քանի ուղղությամբ: Նախ՝ Համազգային տուրքի հավաքման և դրա շնորհիվ հայ գաղթականների ու որբերի խնդիրների լուծման մասին էր խոսքը[3], ապա՝ պոլսաբնակ մի խումբ փաստաբանների և իրավագետների կողմից նախաձեռնված հայ գաղթականների սպասիսվազրական գումարների և ընդհանրապես ցեղասպանված հայերից բռնազավթված հոգևոր և նյութական ունեցվածքի վերադարձի ու փոխհատուցման ուղղությամբ տարվող աշխատանքների կարևորումն էր թերթի կողմից[4]:

«Ճակատամարտն» ընթերցողների ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ թուրքական իշխանությունները, Մուդրոսի զինադադարով պայմանավորված, իբրև թե պարտադրված էին զբաղվում հայ տարագրյալների վերադարձի և կյանքի ապահովման հիմնահարցերով[5]: Իրականում նրանք ամեն ինչ անում էին, որ այդ խնդիրները չլուծվեին, որ Ցեղասպանությունից հրաշքով ողջ մնացած և

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:

գաղթական դարձած հայերը կրկին անիրավազուրկ մնային և, չկարողանալով հոգալ իրենց ապրուստի ու կեցության վայրի հետ կապված խնդիրները, մատնվեին սովամահության, ինչպես նաև հիվանդանային ու մահանային կամ էլ բռնի թրքացվեին և իսլամացվեին:

1922 թվականին «Ճակատամարտն», անդրադառնալով Թուրքիայի Ազգային ժողովի ապրիլի 30-ին ընդունած այն օրենքին, որը հիմնականում վերաբերում էր արևմտահայության անշարժ գույքերի ճակատագրին ու մասնավորապես Կիլիկիայի վերջնական հայաթափումից հետո ստեղծված իրավիճակին, գրում էր, թե վերջինը լրացնում էր իթթիհատական կառավարության ընդունած «Լքյալ գույքերի մասին» օրենքը[1]: Ապրիլի 30-ի օրենքի համաձայն «աճուրդով պիտի ծախուին թշնամիին գրաւումէն ազատուած վայրերու փախստականներուն շարժուն ստացուածքները, իսկ անշարժ կալուածներն ու ցանքերը պիտի մատակարարուին կառավարութեան կողմէ, և, ծախքերը զեղչուելէ յետոյ, հասոյթը պիտի գանձուի ելմտական սնտուկներուն»[2]:

Այս նոր օրենքը «Էմվալը մեթրուքե»-ն, գործադրվելու էր նաև պատերազմական ու քաղաքական պատճառներով փախած կամ բացակա ճանաչված անձանց համար[3]: Թերթը հիշատակում էր, որ Կիլիկիայի վերջնական հայաթափումից առաջ թուրքական «միլլի կառավարութեան մունետիկները» թուրք ազգաբնակչությանը հանձնարարում էին ոչինչ չգնել հայերից նույնիսկ 50% զեղչով, «քանի որ ամեն բան մեզի պիտի մնայ»[4]:

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 1052 («Արդեն տեր եղան»):
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

«Ճակատամարտը» նշում էր, թե առանց այս նոր օրենքի ընդունման էլ հանրությունը գիտեր, թե ի՛նչ է տեղի ունեցել Կիլիկիայում և հայաբնակ մյուս վայրերում. «1915-16-ի սարսափներու շրջանին, բոլորս ալ գիտէինք, թէ ի՛նչ եղած են տեղահան և անհետ կորած մէկ միլիոն մեր հայրենակիցներու գոյքերն ու կալուածները»[1]:

Օրաթերթը վստահեցնում էր, որ Կարսի խորհրդաժողովից և Տաճկահայաստանը Քեմալական Թուրքիային հանձնելուց հետո ամեն ինչ արվում էր Հայկական հարցը վերջնականապես լուծելու նպատակով[2]: Իր այս պնդումը «Ճակատամարտը» հիմնավորում էր թուրքական «Իգտամ» թերթից թարգմանաբար արտատպած հեռագրում հայտնված տեղեկատվությամբ[3]: Ըստ այդ լուրի՝ «այն յանձնաժողովը, որ կը զբաղի արեւելեան նահանգներու աշիրէթներու գործով, օրակարգի նիւթ ունեցած է «լքեալ գոյքերը բաժնել Քիւրտերուն»»[4]:

Թերթի հավաստի աղբյուրներից մեկն իր հերթին տեղեկացնում էր, որ Մուստաֆա Քեմալը «տենդոտ աշխատանքի մէջ է՝ Տաճկահայաստանը Թուրքերով և Քիւրտերով լեցնելու համար: Թուրք, Թաթար և Քիւրտ ազգաբնակութիւնը արագօրէն կը տեղաւորուի Վանի, Պիթլիսի և Էրզրումի վիլայէթներուն մէջ: Միլլի վարիչները մտածեր են միջոց մը՝ Թուրքերով, Քիւրտերով և Թաթարներով լեցնել ամայի նահանգները և փաստել արտաքին աշխարհին առջեւ.

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում, 1922, թիվ 988 («Համիդապատում»):
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

- Ահա տեսէք, այս նահանգներուն բնիկներն են Թուրքեր և Քիւրտեր: Հազիւ համբանքով հայեր կը գտնուին: Արդարութի՞ւն է, որ ասոնք պարպենք և Հայերուն տեղ տանք»[1]:

1923 թվականին Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո արդեն իրենց հայրենիքից հայերի վոնդման և ոչնչացման ծրագիրը բացահայտորեն սկսեց կիրառվել՝ հիմնավորվելով ընդունված օրենքներով ու կառավարական որոշումներով: 1923 թվականին թուրքական իշխանությունները փորձեցին վերջնականապես լուծել արևմտահայերի գույքը նրանց երբեք չվերադարձնելու հարցը:

1923 թվականի ապրիլի 15-ին Թուրքիայի Ազգային ժողովը (Մեջլիսը) ընդունեց «Լքյալ գույքի մասին» օրենքը, որի համաձայն պիտի բռնագրավվեին այդ պահին Թուրքիայում չապրող հայերի ունեցվածքը և գույքը[2]: Ընդ որում, այդ օրենքում անտեսված էր այն հանգամանքը, որ արևմտահայությունը բռնի կերպով և թուրքական իշխանությունների պարտադրանքով էր լքել իր բնօրրանը, տուն ու տեղը և նրան անգամ հնարավորություն չէր տրվել նախապես կարգավորել սեփական ունեցվածքի հետագա ապահով ճակատագիրը:

1923 թվականի սեպտեմբերին Թուրքիայի «Հաշվառման մասին» օրենքով Կիլիկիայի և երկրի արևելյան նահանգների բնակիչներ եղած հայերին արգելվում էր վերադառնալ ոչ միայն իրենց բնակավայրերը, այլև Թուրքիա, քանի որ նրանք իբրև թե ինքնակամ արտագաղթել էին երկրից[3]:

---

[1]Նույն տեղում:

[2]«Թուրքիայի Հանրապետության պատմություն», նշվ. աշխ., էջ 78:

[3]Նույն տեղում:

Ըստ 1926 թվականի փետրվարի 2-ին Թուրքիայում ընդունված օրենքի՝ հայերին չէր վերադարձվելու մինչև 1924 թվականի օգոստոսի 19-ը (մինչև Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելը.- Մ.Հ.) նրանցից բռնագրավված գույքը[1]:

Արևմտահայերի հետագա պահանջները՝ նրանցից բռնագավթված սեփականության և գույքի նկատմամբ չեզոքացնելու նպատակով 1927 թվականի մայիսին Թուրքիայում ընդունվում է օրենք, որով արևմտահայությունը փաստացի չէր կարող համարվել այդ երկրի քաղաքացի, եթե 1923-1927 թվականների ընթացքում չէր բնակվել իր իսկ հայրենիքում, այլ ստիպված լքել էր այն[2]: Հիշյալ օրենքում չէր նշվում, որ այն տարածվում էր նաև ցեղասպանված հայերի և Թուրքիայի սահմաններից դուրս ապրող և Եղեռնից փրկված նրանց ժառանգների վրա:

Հետագա տարիներին և մինչև 1970-ական թվականների վերջը թուրքական իշխանություններն, ընդունելով տարբեր օրենքներ ու որոշումներ, գրեթե վերջնականապես լուծված համարեցին արևմտահայության ունեզրկման գործընթացը:

Ամփոփելով արևմտահայերի գույքի և ունեցվածքի, հողատարածքների և ընդհանուր առմամբ հայության հայրենիքի բռնագրավման փաստերի ու Հայ դատի պահանջատիրական առաջարկների ներկայացման առումով «Ճակատամարտի» հրապարակումները, ինչպես նաև թերթի վերլուծականներում արտահայտված տեսակետները, պետք է ասել հետևյալը:

- Պարբերականի համոզումը վճռական էր առ այն, թե «զոյութեան իրաւունք չունի վարչութիւն մը, որ բռնի կը խլէ կոտորուած, ցիրուցան ժողովուրդի մը հայրենիքը, կը յափշտակէ անոր գոյքերը (Էմվալը մեթրուքե) և,

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:

պարագաներէն օգտուելով, փախստականներու հողերուն վրայ կը հաստատէ ուրիշ բազմութիւններ»[1]:

- «Ճակատամարտը» հիշատակում էր այն հանգամանքը, որ իթթիհատական իշխանությունները օսմանյան պետության փրկությունը գտան հայ ժողովրդի բնաջնջման մեջ: Նրանց և նրանց իրավահաջորդ «Էնկիւրիի վարիչներ»ին» թերթը հավաստիացնում էր, որ հօդս են ցնդելու հայ ժողովրդին հուսահատեցնելու նպատակով կատարված «ամենէն գարշելի, ամենէն բարբարոս փորձերը»[2]: Հայրենի երկրից վտարված հայ բնիկների բնակավայրերը եկվոր թուրքերին կամ քրդերին տալով ու հայերի գույքը և ունեցվածքը յուրացնելով թուրքական պետությունը չէր կարողանալու լուծում տալ Հայկական հարցին[3]:

- «Հայ ժողովուրդը կը մնայ տէրն ու տիրականը իր երդիկին, իր ճակատագրին, իր հայրենիքին: Կա՞յ ուժ մը, որ կարենայ խորտակել անոր աննկուն կամքն ու հաւատքը»[4],- այսպիսին էին պարբերականի դիրքորոշումն ու համոզմունքը:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

«ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ ԲՈՒՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ԵՎ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բոնի իսլամացված հայ որբերին և հայուհիներին առնչվող հարցերի կապակցությամբ կարող ենք նշել, որ արդեն 1918 թվականի դեկտեմբերի 21-ին «Ճակատամարտը» տեղեկացնում էր թուրքական իշխանությունների այն կարգադրության մասին, ըստ որի՝ թուրքերի և քրդերի տներում պահված հայ որբերի և հարեմներում գտնվող հայ կանանց հետագա ճակատագրի որոշումը հանձնվել էր թուրք ոստիկանությանը, այսինքն՝ «անոնց, որ ամենէն սև դերը կատարեցին հայաջինջ սարսափներուն մէջ»[1]:

Երբ հարազատները կամ հայ համայնքի ներկայացուցիչները երկար ջանքերից հետո որևէ թուրքի տանը հայտնաբերում էին թաքցված կամ թրքացված հայ որբուկի և ոստիկանությանը պահանջ էին ներկայացնում նրան վերադարձնելու մասին, վերջինները «հայ տղեկ մը չյանձնելու համար ամեն պատրուակ կը ստեղծեին»[2]: Նրանք իբրև թե քննում էին մանկիկի հայ կամ քրիստոնյա լինելը: Թերթը հավատ չէր տածում քննությունը վարելու նրանց մեթոդներին ու ձևերին: «Ո՞ւր, ի՞նչպէս և ի՞նչ միջոցներով կը կատարեն քննութիւնը՝ պահանջուած որբին Հայ կամ իսլամ ըլլալը ապացուցանելու համար, այդ կը մնայ գաղտնիք»[3],- գրում էր պարբերականը: Փաստերի հիման վրա նաև պնդում էր, որ իսլամացված ու թրքացված հայ որբերի, աղջիկների ու

---

[1]«Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1918, թիվ 27 («Երկու գաղտնիք»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

կանանց՝ իրենց համայնքին վերադարձնելու գործընթացն ոստիկանության կողմից ձգձգվում էր, և նրանք հիմնականում մնում էին հափշտակիչ թուրքերի կամ քրդերի մոտ՝ «ենթակայ անոնց բոլոր քմահաճոյքներուն կամ բարբարոսութեանց»[1]:

«Ճակատամարտի» կարծիքով՝ անհրաժեշտ էր անմիջապես իրավական ճանապարհով փորձել հայ համայնքին վերադարձնել ցեղասպանված հայերի կյանքի և գույքի ապահովագրական գումարները, ինչը «հարիւր հազարաւոր ոսկիներու կրնայ հասնիլ»[2]:

Թերթը գրում էր, թե բազմաթիվ հայ ընտանիքներ ամբողջությամբ կոտորվել էին, ժառանգորդ չունեին, շատերն էլ որպես ժառանգորդ թողել էին մի փոքրիկ որբուկ[3]: Ըստ պարբերականի՝ «ազգը առաջիններուն ուղղակի ժառանգորդը, իսկ երկրորդներուն փոխանորդը պէտք է դառնայ»[4]:

Հոդվածագիր Վահան Հարությունյանը գիտակցում էր, թե որքան կնճռոտ ու բարդ էր այս խնդիրը, բայց առաջարկում էր հայ իրավագետների նորակազմ միությանը[5] լրջորեն զբաղվել արևմտահայերի ապահովագրական գումարների վերադարձի հիմնախնդրով, քանզի այդ գումարները նպաստելու էին հայ որբերի ապագան կառուցելու գործընթացին[6]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում, 1918, թիվ 18 («Մեր բոլոր իրավունքները անխտիր պաշտպանենք»):
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում, 1918, թիվ 20 («Մեր խոսքը»):
[6]Նույն տեղում, 1918, թիվ 18 («Մեր բոլոր իրավունքները անխտիր պաշտպանենք»):

«Մեր դատը» խորագրի ներքո «Ճակատամարտը» տպագրել էր 1919 թվականի հունվարի 10-ին Կ.Պոլսի իրավաբանական վարժարանի 50-ից ավելի շրջանավարտների առջև հայտնի իրավաբան Հմայակ Խոսրովյանի ներկայացրած «Հայուն վնասները» թեմայով դասախոսությունը: Նա թվային փաստերով պնդում էր, որ «Հայերու կորսնցուցած կարասին, զգեստեղէնն ու զարդերը միայն, ամենէն հաւեստ հաշիւով 385 միլիոն ոսկիէն աւելի պիտի ըլլան»[1]: Հ. Խոսրովյանի կարծիքով՝ իրենց կրած վնասների փոխհատուցման խնդրով հայերը պիտի դիմեին ոչ թե թուրքական, այլ միջազգային հեղինակավոր և վստահություն վայելող դատարան[2]: Առաջադրվում էին այս պահանջները.

- տարագրութեան պատրվակով կոտորված կամ հոգնածությունից ու չարչարանքներից, սովից և հիվանդություններից մահացած բոլոր հայերի կյանքի արժեքի փոխհատուցում,
- հայերի նյութական կորուստների հատուցում,
- տարագրության, հանիրավի բանտարկության հետևանքով աշխատանքային կորցրած վարձատրության փոխհատուցում[3]:

Ըստ Հ. Խոսրովյանի՝ վնասների փոխհատուցման գործընթացում հայերի համար կարող էր օգտակար լինել Ջեյմս Բրայսի «Կապույտ» գիրքը, որը «հայ եղեռնի մանրամասն պատմութիւնն է, ներկայացուած զօրաւոր ու անհերքելի

---

[1]Նույն տեղում, 1919, թիվ 48 («Հայուն վնասները»):
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:

փաստերով»[1]: Դրանք հավաքված էին «զանազան վայրերու մէջ և տարբեր աղբիւրներէ, որոնք երբեք իրարու հետ կապ ունեցած չեն, բայց բոլորն ալ միևնոյն բանը կ'ըսեն»[2]:

Հ. Խոսրովյանի կարծիքով այդ անհերքելի փաստերն ապացուցում էին, որ ոչ թե թուրքական կառավարության ներկայացուցիչներն էին պատասխանատու Հայոց ցեղասպանության համար, այլև թուրքական պետությունն իր «հաւաքական մարմիններու ներկայացուցիչներուն գործած շահատակութեանց, ապօրինութեանց և վայրագութեանց, եղեռնին պատասխանատու է»[3]:

Այսինքն թուրքական պետությունն էր իրականում պատասխանատու Հայոց ցեղասպանության, դրա հետևանքների և հատկապես հայ գաղթականների ու հայ որբերի հիմնահարցերի առաջացման և չլուծված մնալու համար[4]:

Անխնամ, բոկոտն ու թուրքերի կողմից հալածվող հայ որբերը, թերթի համոզմամբ, հաղթահարելու էին իրենց տանջող ցավը և դառնալու էին ինքնավստահ հոգիների խորքերում կրելով կյանքից ստացած դասերն ու սեփական ժողովրդի հարատևության գաղտնիքը[5]:

«Որբը մարմնացումը պիտի ըլլայ Հայի լաւագոյն յատկութիւններուն: Գուրգուրանք ձեզ, հա՛յ որբուկներ, մեր ապագայ Յոյսեր, վաղուան Արևներ»[6],- գրում էր Հմայակ Մաթևոսյանը:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում, 1918, թիվ 10 («Որբերուն իրավունքը»):
[6]Նույն տեղում:

Հայոց ցեղասպանությունից հետո Թուրքիայում դեռևս բնակվում էր ավելի քան 200.000 հայ[1]:

«Ճակատամարտը», հենվելով իր վստահելի սկզբնաղբյուրների վրա, փաստում էր հետևյալը վերոհիշյալի կապակցությամբ:

«Մեր տեղեկատուները կը հաւաստեն, որ իւրաքանչիւր նահանգի կամ գլխաւոր քաղաքի մէջ կը գտնուին հարիւրաւոր, տեղ-տեղ քանի մը հազարեակ բեկորներ, որոնք իրենց գոյութիւնը կը պարտին բացառիկ հանգամանքներու: Այսպէս, Տիգրանակերտ բարգաւաճ, հոծ հայութենէ մը այսօր կը համրէ մօտաւորապէս 3400 խլեակ, Խարբերդ աւելի քան 3000, Վան՝ հազարեակ մը: Առիւծասիրտ Տարօնէն միայն Սասունն է, որ կը շնչէ քանի մը հարիւր հոգիով, Քիւրտերու հետ խառն: Ստոյգ տեղեկութիւններ չկան Կարինէն և Սեբաստիայէն»[2]:

Օսմանյան կայսրության մեջ բնակվող 2,5 միլիոն հայությունից հայաջինջ եղեռնից փրկված 850.000 հայերից 200.000-ը (հիմնականում կանայք ու երեխաներ) բռնությամբ կրոնափոխվել էին ու դարձել մահմեդական[3]:

Ռուսաստանում ապաստան գտած հայ գաղթականներն առավելապես տեղափոխվում էին Արևելյան Հայաստան, որտեղ նրանց մեծամասնությունը կնքում էր մահկանացուն սովից, ցրտից կամ շոգից և համաճարակներից: Նրանց փրկելու նպատակով ստեղծված բարեգործական միությունների ու կազմակերպությունների (Երևանի և Մոսկվայի «Եղբայրական օգնության» կոմիտեները, Բաքվի

---

[1]«Հայ ժողովրդի պատմություն», Ե., 1981, հ. 6, էջ 575:

[2]«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1918, թիվ 37 («Աչքե հեռու, սրտե հեռու»):

[3]«Հայ ժողովրդի պատմություն», նշվ. աշխ., էջ 575:

Հայկական ընկերությունը, Բաքվի Նպաստամատույց կոմիտեն, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, Հայ օգնության կոմիտեն և այլն) ջանքերով մահվան ճիրաններից փրկվեցին բազմաթիվ գաղթականներ և որբեր:

Կարեն Խանլարյանը հիշատակում է տարբեր աղբյուրներում վկայակոչվող տվյալները, մասնավորապես Ստամբուլի «Նոր Մարմարա» թերթում ներկայացված հետևյալ մեջբերումը: Դրա համաձայն 1918 թվականին «տեղահանութիւնից յետոյ հայ բնակչութեան թիւը մօտաւորապէս 600.000 է: Յայտնի չէ, թէ մահմեդական ընտանիքների կողմից որդեգրուած հայ երեխաների թիւը ինչ է, բայց ծանօթ է, որ այս թիւն էլ շատ բարձր մի թիւ է»: Միջին հաշվով 330.000 է համարում Ցեղասպանությունը վերապրած հայերի թիվը[1]:

Արևմտահայ հայտնի հասարակական գործիչ Ա. Մաքսապետյանի տվյալներով 1919 թվականի ամռանը արևմտահայ գավառներում և Կիլիկիայում ապրում էր ավելի քան 360.000 հայ[2]:

Եթե 1923 թվականին Կ.Պոլսում ապրում էր 148.990 հայ, ապա թուրքական իշխանությունների հայահալած քաղաքականության հետևանքով հայության թիվը տարեցտարի նվազել էր և արդեն 1935 թվականին հասել էր 57.599-ի[3]:

Թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի վերլուծությունների համաձայն Թուրքիայում արևմտահայերի գաղթերը եղել են բնույթով ներքին և արտաքին. «Ներքին գաղթերը վերաբերել են գավառներում պահպանված հայության բեկորներին, որոնք

---

[1]Խանլարի Կարէն Հ., «Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.)», Ե., 2005, էջ 20-21:

[2]ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 92:

[3]«Թուրքիայի Հանրապետության պատմություն», նշվ. աշխ., էջ 82:

կանգնած են եղել բարդ երկընտրանքի առաջ՝ մնալ գավառում և բռնել վերջնական ուծացման ճանապարհը կամ տեղափոխվել Ստամբուլ և, ինտեգրվելով հայ համայնքին, փորձել վերագտնել աղճատված ինքնությունը»[1]:

Այսպիսով՝ 1920-ական թվականներին արևմտահայ գավառից հայերի գաղթին դեպի Կ.Պոլիս և այլ քաղաքներ ու երկրներ նպաստել է թուրքական իշխանությունների վարած այն քաղաքականությունը, ըստ որի՝ վերջնականապես պիտի հայաթափվեին Թուրքիայի արևելյան նահանգները:

Ցեղասպանությունը վերապրած գաղթականներին, որոնք գերակշիռ մասով կանայք էին և որբ մանուկներ, սպառնում էին թե՛ կրոնափոխություն, թե՛ ուծացում Թուրքիայում: Եթե հայ երեխաներին հեշտ էր սյլադավան և այլազգի դարձնել, ապա հայ կանանց և չափահաս աղջիկներին բռնությամբ էին այդպիսիք դարձնում:

Մուդրոսի զինադադարից հետո թուրքական իշխանությունները պարտադրվեցին հայ համայնքին վերադարձնել բռնությամբ թուրքացված հայուհիներին ու հայ որբերին: Այս ուղղությամբ ջանքեր էին թափում Զարեհ արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը և Կ. Պոլսի պատրիարքարանն իր Հայահավաք հանձնաժողովով ու մի շարք բարեսիրական և միսիոներական կազմակերպություններ: Համատեղ ճիգերի շնորհիվ մի քանի հազար բռնի թուրքացված հայուհիներ և հայ որբեր վերադարձվեցին հայկական համայնքին[2]:

1920 թվականի հունիսին Կիլիկիայում, Սիրիայում և Լիբանանում գտնվում էին ավելի քան 8399 հայ որբեր[3]: Ադանայում

---

[1]Մելքոնյան Ռ., «Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը», Ե., 2010, էջ 22:

[2]Նույն տեղում, էջ 66:

[3]ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 338, թ. 11:

կային 1297, Մերսինում՝ 1055, Դյորթյոլում՝ 779, Այնթապում՝ 2000, Ուրֆայում՝ 150, Հաճնում՝ 750, Մարաշում՝ 800, Հալեպում՝ 1400, Լիբանանում՝ 150 հայ որբեր[1]:

1921 թվականի սկզբին պատրիարքարանի պատրաստած զեկույցում նշվում էր, որ մուսուլմանների ընտանիքներում դեռևս պահվում էին ավելի քան 63.000 հայ որբեր[2]:

Թուրքիայում ստեղծված սոցիալ-քաղաքական անբարենպաստ հանգամանքների, Միլլի և Քեմալական շարժումների հետևանքով արևմտահայության համար առաջացած հայաջինջ նոր վտանգներն ստիպում են Կ. Պոլսում գործող հայոց ազգային մարմիններին ու մասնավորապես պատրիարքարանին ուղիներ փնտրել գոնե հայ որբերին երկրից դուրս հանելու ճանապարհով նրանց կյանքը փրկելու համար: Այդ գործընթացն սկսվում է 1922 թվականին՝ հանդիպելով նաև ընդդիմության հատկապես հայ մտավորականության որոշ շրջանակների ներկայացուցիչների կողմից, որոնց կարծիքով, հայրենիքից հեռանալով օտար երկրներ, այդ հայ մանկիկներն ու պատանիները մոռանալու էին իրենց ազգային ավանդույթները, մայրենի լեզուն և աստիճանաբար ուծանալու էին:

1922 թվականին Կ.Պոլսից հայ որբերին պատրիարքարանն ուղարկում էր Հունաստան, Սիրիա, Լիբանան, Գերմանիա, Անգլիա, ԱՄՆ: 1921-1923 թթ. Սիրիայի, Լիբանանի և Եգիպտոսի Ամերկոմի որբանոցներ Արևմտյան Հայաստանից տեղափոխվել են 7500 հայ որբեր՝ տեղաբաշխվելով համապա-

---

[1]Նույն տեղում:

[2]Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 66:

տասխանաբար Հալեպի, Դամասկոսի, Բեյրութի և Ալեքսանդրետի որբանոցներում[1]:

Հիշյալ խնդիրներն իրենց արձագանքն են գտել «Ճակատամարտի» էջերում: Թերթի խմբագրակազմը համոզված էր, որ, հայրենիքից հեռացվելով օտար երկրներ, հայ որբերն աստիճանաբար ուծանալու էին:

Հայ որբերին գտնելու և հավաքելու գործը բավականին բարդ էր: Թուրքերի մոտ փակի տակ պահվող հայ փոքրիկներին կարելի էր կորցրած համարել, որովհետև նրանց հիշողությունը պահպանած չէր լինի ազգային և ընտանեկան սովորությունները, մայրենի լեզուն[2]: Անհրաժեշտ էր մտածված կերպով գործել արդյունքի հասնելու համար, այլապես թուրքերի կողմից կալանավորված հայուհիների և հայորդիների շունչն անգամ չէր հասնելու նրանց փնտրող ազգակիցներին: Դրան զուգարվում էին ոստիկանների հարուցած ձնականությունները ու թղթարարությունը:

Հոդվածագիր Սարգիս Սարունին առաջարկում էր հայ որբերի ինքնության հաստատման գործը վերցնել ոստիկանների ձեռքերից և հանձնել այդ գործի համար ստեղծվելիք հատուկ մարմնին, որի աշխատակիցներն ոստիկանները չպիտի լինեին, այլ «սիվիլ, սրտցաւ և բարեդէմ անձեր»[3]: Չէ որ մանկահասակ երեխաները, թուրք ոստիկաններին տեսնելով, պիտի հիշեին, թե ինչպես հենց այդ համակարգի ներկայացուցիչները ջարդեցին ու կոտորեցին իրենց ծնողներին ու հարազատներին: Բացի այդ Ս. Սարունին կոչ էր անում կառավարությունից պահանջել, որ որոշված ժամկետներում հայտնաբեր-

---

[1] Ավետիսյան Ս., նշվ. աշխ., էջ 133:

[2] «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1918, թիվ 16 («Շողերը փրկելու համար»):

[3] Նույն տեղում:

ված հայ որբերին պատրիարքարանին չհանձնող թուրքերին ամենածանր պատժի ենթարկեին[1]:

Հայ որբերին փնտրելու, ցուցակագրելու, նրանց գտնվելու ճշգրիտ հասցեները նշելու գործով, ըստ թերթի, պետք է զբաղվեր հայ համայնքի կողմից այդ նպատակով ստեղծվելիք մեկ ընդհանուր մարմինը, և ոչ թե դա պիտի արվեր հախուռն ձևով ու ցաքուցրիվ ուժերով[2]:

«Որբախնամ» կազմակերպության Կ.Պոլսում գործող Կենտրոնական մարմինը «Ճակատամարտի» միջոցով ընթերցողներին տեղեկացնում և հիշեցնում էր, որ այս կառույցը զբաղվում էր միայն մինչև 14 տարեկան հայ որբերի հոգածությանն առնչվող խնդիրներով[3]: Բարեգործական այդ կառույցը խնդրանք էր ներկայացրել առ այն, որ Արևմտահայաստանի գավառներից գտնված 14 տարեկանից բարձր տարիքով որբերին չբերեին Կ. Պոլսի «Որբախնամի» կենտրոնատեղի, քանզի «Որբախնամը, գէթ առ այժմ, ոչ նիւթական միջոցները ունի, ոչ իսկ ժամանակ ունեցած է այսպիսիններու դաստիարակութեան և պատսպարման գործով զբաղելու հազիւ հասնելով բոլորովին աննեցուկ ու անտէր մնացած որբ մանուկներու սնուցման ու պատսպարման նախնական պէտքերը հայթայթելու»[4]:

1920-1923 թվականներին «Ճակատամարտը» ներկայացրել է հայ գաղթականների և որբերի վիճակը, նրանց հանդեպ թուրքական իշխանությունների վարած քաղաքականությունը, ինչպես նաև ազգային կառույցների կողմից տարագրյալների համար իրականացվող ծրագրերը:

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1918, թիվ 32 («Գավառեն հասած որբերը»):

[4]Նույն տեղում:

«ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» ՌԵՊՈՐՏԱԺՆԵՐԻ ՇԱՐՔՆ «ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՊՐԻՆ ՄԵՐ ՈՐԲԵՐԸ» ԽՈՐԱԳՐԻ ՆԵՐՔՈ

«Ճակատամարտ» օրաթերթն ոչ միայն պաշտպանել էր տարագրյալ հայերի շահերն ու իրավունքները, այլև թղթակցությունների, ռեպորտաժների և թղթակցությունների միջոցով պատկերացում էր տվել նրանց կյանքի և կենցաղի մասին: Այս ծիրում քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ թերթի առաջարկները, սակայն, ինչպես նաև Եղեռնից մազապուրծ եղած հայ գաղթականների և որբերի իրավունքները մնացել էին մերժված ու ոտնահարված թուրքական իշխանությունների կողմից, որոնք արեցին ամենը՝ հայությանը սեփական հայրենիքից վտարելու և ունեզրկելու համար:

1922 թվականին «Ճակատամարտը» ռեպորտաժների շարք էր սկսել, որոնք ամփոփված էին «Ինչպե՞ս կապրին մեր որբերը» խորագրի ներքո:

Վազգեն Շիրակունին ներկայացնում էր Գուլելիի հայկական որբանոցի վիճակը[1]: Այստեղ ապրում էին 930 հայ որբ երեխա և 25 ուսուցիչ[2]: Որբանոցին հատկացրել էին Գուլելիի նախկին զինվորական վարժարանի շենքը: «Ի՜նչ տխուր է պատկերը, կարելի չէ առանց վրդովումի և կսկիծի դիտել այդ բազմութիւնը, որ կատարեալ թշուառութեան պատկեր մը կը ներկայացնէ»[3],- գրում էր թերթի լրագրողը: Նրա խոսքերով՝ որբերը դեղնած դեմքեր ունեին, բայց դա ոչ թե

---

[1]«Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1922, թիվ 963 («Քանի մը ժամ Կեղր. որբանոցին մեջ»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

ցրտից էր, այլ «զգալի էր, որ անոնք կը ծիւրին»[1]: Շաւտերը կմախքացած էին:

Որբերն ոտաբոբիկ էին և հագնված էին մուրացիկների պես: Ցնցոտիապատ մարմինների վրա նրանք վերարկու չունեին, որ հագնեին ձմռան ցրտին:

Որբանոցի ընդհանուր մթնոլորտը թղթակցին մեկ անգամ ևս համոզել էր, որ պետական և ազգային մարմիններն աչքաթող էին արել հայ որբերին:

Որբուկները, չնայած իրենց կացարանի անհրապույր և անտանելի պայմաններին, պատրաստվում էին դիմավորել Նոր տարին և նշել Կաղանդը: Նրանք զարդարում էին սենյակները՝ դրանց պատերին փակցնելով նաև մեր ազգային հերոսների՝ Աղբյուր Սերոբի, Անդրանիկի, Պողոս Նուբարի և այլոց՝ իրենց նկարած նկարները: «Կը կարծէք պահ մը, թէ նկարիչներ պատրաստած են այդ նկարները: Որքա՜ն տաղանդներ կան այդ մանուկներուն մէջ»[2],- փաստում էր թղթակից Վ. Շիրակունին:

Լրագրողը սրտի ցավով նկատում էր, որ աղտոտ ցնցոտիների մեջ գտնվող հայ որբերը քնում էին խարխուլ մահճակալների վրա ու դրանց կողքին՝ հատակին շարված իոտե անկողիններում: «Տղոց վերմակները չուլեր են, որոնք կը գործածուին ախոռները՝ ձիերը ծածկելու համար: Անկողինները խոտեր են, բայց փտած են թէ՛ վրայի չուլը և թէ՛ ներսի խոտը»[3]: Անկողինների մեջ ոջիլն էր վխտում[4]:

Այս որբանոցում սնունդը չափավոր էր, սակայն՝ անորակ և անբավարար քանակով: Հիմնականում որբերին տալիս

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

էին հուցով թեյ ու ձիթապտուղ, շաբաթը մեկ անգամ՝ մսով ճաշ: «Տղաքը երբեմն անօթի կը մնան, բացարձակ իմաստով, և կերակուր չեն ուտեր, որովհետեւ ուտուելիք բան չըլլար»[1],- կարդում ենք ռեպորտաժում:

Որբերը, սակայն, ըմբոնումով էին մոտենում տիրող կացությանը. «Մենք ոևէ դժգոհութիւն չենք յայտներ՝ նկատելով, որ, եթէ դրամ ըլլայ, անշուշտ, մեզի ալ լաւ կը նային»[2]: Որբանոցի տնօրինությունը նույնպես դա էր նշում՝ ակնկալելով ըմբոնում, որովհետև խնայողության ռեժիմով էր աշխատում:

Ինջաւենյակները և դասարանները դեկտեմբերի վերջին էին սկսել «քալօրիֆէրով» տաքացնել, ընդ որում՝ դասարանների պատուհաններն ապակի չունեին[3]: Աշակերտները դժգոհում էին տնօրենի պահվածքից, որը միայն իր սենյակն էր տաքացնում միշտ և որը խրախուսում էր ուսուցիչների կոպիտ վերաբերմունքն աշակերտների նկատմամբ. «Ծեծը գլխաւոր միջոցն է եղած կարգ-կանոնը հաստատելու»[4]:

Իր ռեպորտաժը Վ. Շիրակունին ավարտում էր որբանոցի տնօրենին ուղղված կոչով առ այն, որ նա բարելավեր որբերի կենսապայմանները: Նաև հույս էր հայտնում, թե գալու էր այն օրը, երբ որբերն այլևս սենյակների պատերին չէին գրելու՝ սոված ենք[5]:

«Ճակատամարտում» ռեպորտաժ կար Էսայան կամ Բերայի որբանոցից[6]: Այստեղ բնակվող 90 որբերի կենսապայ-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում, 1922, թիվ 980 («Էսայան որբանոց»):

մանները համեմատաբար տանելի էին: Երեխաները բոլորն էլ առողջ էին, կայտառ ու աշխույժ, կոկիկ, մաքուր և կրում էին նոր հագուստներ: Որբանոցը տեղակայված էր Կեդյոնականի և Էսայանի գիշերօթիկ վարժարանի մասնաշենքում[1]:

10x12 քառ. մետր տարածությամբ միակ ննջարանում քնում էին 10-19 տարեկան որբեր: Նրանց միակ դասասենյակը բաժանել էին մի շարք փոքր անկյունների: Թերթի թղթակցուհին՝ Տաթևիկը, առաջարկում էր որբանոցը հանել այդ գիշերօթիկ վարժարանի շենքից և, թաղային բյուջեից գումար վերցնելով, կառուցել նոր շինություն այդ նպատակով[2]: Որբանոցի սաները քնում էին աղտոտ ու գաղջ մթնոլորտ ունեցող ընդհանուր ննջարանում, որտեղ 90 մահճակալները խիտ-խիտ դրված էին իրար կողքի այնպես, որ անհնար էր տեղաշարժվել:

Որբերին կերակրում էին որոշակի սննդակարգով: Նրանց տալիս էին բարձրորակ հաց, ընդեղեն, յուղով եփված բանջարեղեն, մսով լցոնված բանջարեղեն, չամիչ, չոր սալորով խոշաբ:

Տաթևիկի կարծիքով՝ Բերայի կամ Էսայան որբանոցին պակասում էր որբ աշակերտների և ուսուցիչների միջև պահանջվող ներքին կապը[3]:

Վազգեն Շիրակունու պրպտումները մեկ ուրիշ անգամ նրան տարել էին Պեշիկթաշի որբանոց[4]: Այն գտնվում էր Պեշիկթաշի՝ հայ գաղթականներին ու որբերին տրամա-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում, 1922, թիվ 985 («Պեշիկթաշի կայանին և որբանոցին մեջ»):

դրված ժամանակավոր կացարանի կողքի երկհարկանի շենքում[1]: Այնտեղ կենտրոնացվել էր 168 որբուհի:

Ննջարանները մաքուր էին և կոկիկ հարդարված: Անկողիններին գցված էին ճերմակ ծածկոցներ, որոնք փոխնորդ չունեին. «Այնպէս որ, մինչեւ լուացուիլը սանտիները խոտի վրայ կը մնան»[2]:

2 սենյակ ծառայում էին որպես բուժկետ: 6-7 աղջիկ բորոտությամբ էին տառապում, և նրանց առանձին սենյակ էին տրամադրել շենքի ներքնահարկում[3]:

Որբանոցի ամսական ծախսը կազմում էր 1250 ոսկի[4]:

Որբերին տրվում էր բավարար քանակությամբ սնունդ: Նրանք ամեն օր սպիտակ հաց էին ուտում. «Հացը կը կտրուի և մէջտեղ կը դրուի, ինչպէս կ'ըլլայ տուներու մէջ, փոխանակ կշիռքով տալու»[5]:

Որբուհիների կրթության հարցերը դրված էին նորմալ հիմքերի վրա: Ունեին 4 ուսուցչուհի: «Պէշիկթաշի որբանոցն ընդհանրապէս լաւ տպաւորութիւն կը թողու այցելողին վրայ»[6],- այս խոսքերով էր ավարտվում ռեպորտաժը:

Կարո Գևորգյանի ռեպորտաժը Գատըգյուղի ազգային որբանոցից էր[7]: Այն Կ. Պոլսում բացված հայկական որբանոցների մեջ ամենաբարվոք վիճակում էր գտնվում: Դա պայմանավորված էր այդ թաղի հայության բարեկեցիկ վիճակով: Որբանոցը տեղավորված էր Արամյան վարժարանի

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:
[7]Նույն տեղում, 1922, թիվ 1001 («Գատըգյուղի Ազգային որբանոցը»):

շենքի կողքին կառուցված եռահարկ շինության մեջ: Այդտեղ հավաքված էին միայն տղա որբեր:

6-17 տարեկան այդ 106 որբերն իրենց կրթությունն ստանում էին Աշուամյան վարժարանում: 2 որբի 1 դասագիրք էր հատկացվում:

Կայտառ ու կարմրաթուշ էին որբերը. «Բոլորի երեսին գոհունակության ժպիտ մը կը ցոլայ: Երջանիկ կը թուին և իրաւունք ալ ունին, որովհետեւ որբանոցը օժտուած է երախաներուն պահանջները գոհացնող բոլոր յարմարութիւններով»[1]:

Որպես ասվածի ապացույց՝ Կ. Գևորգյանը վկայակոչում էր 3 տարի առաջվա և 1922 թվականին արված ընդհանրական լուսանկարները. «Երեք տարի առաջ հիւծախտաւորներու նմանող այդ որբերը ֆիզիքական խոշոր փոփոխութիւններ կրած են»[2]:

Որբերի առողջ ապրելակերպին նպաստում էր հատուկ նրանց համար մշակված սննդակարգը. «Որբերը եղանակի պահանջին համաձայն սնունդ կը ստանան»[3]: Նրանք իբրև նախաճաշ ստանում էին թեյ և հաց, շաբաթական 2 անգամ՝ մսով կերակուր, իսկ մնացած օրերին՝ բրնձով, մակարոնով կերակուրներ, ձեթով ու ամերիկյան կարագով եփված ընդեղեն և բարջարեղեն, առատ մրգեր, երբեմն՝ անուշեղեն:

Որբերի ննջարանը գտնվում էր շենքի վերնահարկի լուսավոր և ընդարձակ սրահում: Յուրաքանչյուր որբ քնում էր իր մահճակալում, սավանով ծածկված խոտե անկողնում:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:

Որբերին տրված էր 2 ձեռք սպիտակեղեն, որը փոխում էին շաբաթը մեկ անգամ: Որբանոցի մաքրությունը նպաստում էր այն բանին, որ որբերը զերծ մնային մակաբույծ միջատներից և մաշկային հիվանդություններից:

Ընդհանուր առմամբ՝ Գատրգյուղի ազգային որբանոցի բյուջեն կազմում էր 10.000-11.000 ռսկի, ընդ որում՝ այս գումարը կրկնապատկվում էր Ամերիկյան Նպաստամատույցի կողմից[1]:

Տիրուհի Ազատյանը Խասգյուղի որբանոցն «տրախոմի դժոխք» էր անվանում[2]: Այս բարձրադիր, ծովահայաց գեղակառույց շենքում Կ.Պոլսի հայկական տարբեր որբանոցներից հավաքվել էին աչքի վերոհիշյալ հիվանդությամբ տառապող 120 աղջիկ: Իրականում Խասգյուղի որբանոցն ավելի շատ հիվանդանոց էր, որտեղ միջին հաշվով 5 ամիս մնալու և բուժվելու էր այդ աղջիկներից յուրաքանչյուրը[3]: Նրանցից շատերի աչքերը հիվանդության պատճառով 8-9 ամիս չէին տեսել արևի լույսը՝ փակված ատրճանակների պատճառով: Լրագրողուհին գրում էր, որ հիվանդ աչքերով աղջիկների համար, թեև շենքի առաջին հարկում 4 սենյակ հատկացված էին դասեր անցկացնելու համար, բայց դասարանները հիմնականում դատարկ էին մնում:

Խասգյուղի որբանոցում կար մանկապարտեզ 40 սաներով, որոնց խնամում էր մեկ մանկապարտիզպանուհի[4]: «Նախակրթարան կամ մանկապարտէզ շատ տկար են իրենց ամբողջ կազմով, սկսած գրասեղաններէն, որոնք ան-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 992 («Ճակատամարտի» պրպտումները. Խասգյուղի որբանոցին՝ տրախոմի դժոխքին մեջ»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

բաւական են աշակերտուհիներու թիւին անգամ»[1],- պնդում էր Տիրուհի Ազատյանը:

Որբուհիներն այս որբանոցում նախադպրոցական կամ դպրոցական ծրագրերով կրթություն չէին կարողանում ստանալ, այլ միայն կրկնում էին նախկինում իրենց սովորածները[2]: «Մանկավարժութիւնը շատ լայն միջոցներ կը տրամադրէ մեզ, մանկապարտէզէն սկսելով մինչեւ վեր, առրվեցնել առանց անոնց աչքերու աջակցութեան, առանց գիրքի, առանց գիրի: Թիւով իսկ սնբաւական այդ պաշտօնէութեան մօտ որակը փնտռել միամտութիւն պիտի ըլլար»[3],- եզրակացնում էր Տիրուհին:

Խասգյուղի որբանոցում պատսպարված աղջիկների մեծամասնությունը տառապում էր նաև ոջիլներից, թեև նրանց հագուստը և անկողնու սպիտակեղենը մաքուր էին[4]:

Որբանոցում միևնույն ժամանակ գրիպի համաճարակ էր: Դրան նպաստում էր այն, որ ննջարանների պատուհանները ապակեպատ չէին, այլ ծածկված էին տախտակներով կամ լաթերով[5]:

Դեղերը հայթայթվում էին Կ. Խաչի Կ. Պոլսի կենտրոնից, սակայն դրանց պատրաստումը 4-5 օրով, երբեմն էլ շաբաթով ուշացնում էին[6]:

Տիրուհի Ազատյանը Խասգյուղի որբանոցի նյութական պայմանները տանելի էր համարում՝ հիշատակելով, որ որբուհիներից ամեն մեկի համար 9-11 ռուբի էր ծախսվում,

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

րում[1]: Անգործությունը և թշվառությունը տարագրյալներին դարձրել էին կովազան ու ջղագրգիռ: «Նպաստի ակնկալությունը տեւ:ակ մը բռնատրութեան կը մղէ շատ-շատերը, տեղ-տեղ թայֆայութիւններ ձեւացնելով: Խնամատարութիւնը իր աշխատութեան կարեւոր մէկ մասը պէտք էր յատկացնէր կայանները կարելի եղածին չափ կրճատելու կամ գոնէ զանոնք աշխատանոցներ դարձնելու»[2],- այս առաջարկով էր ավարտում իր վերլուծությունը Տիրուհի Ազատյանը:

Օրթագյուղի Աղջկանց որբանոցում լինելուց հետո Տիրուհի Ազատյանը իրենց թերթի ընթերցողներին քաջալերում էր իր ստացած տպավորություններով[3]: 1918 թվականի Մուդրոսի զինադադարից հետո բացված այս հաստատությունում էին տեղավորվել 250-ից ավել որբուհի՝ բորոտ ու կիսամերկ, խոցերով պատված մարմիններով[4]: 1922 թվականին նրանց թիվը 160 էր[5]:

Աղջկանց որբանոցի բոլոր սաներն առողջ և կայտառ տեսք ունեին, մաքուր ու կոկիկ էին հագնված՝ սկսած կոշիկներից մինչև տաքուկ վերարկուները: Յուրաքանչյուր որբուհի ուներ 3 ձեռք ներքնազգեստ: 2-3 շաբաթը մեկ նրանց բաղնիք էին տանում և փոխում էին անկողինների սպիտակեղենը[6]:

Որբանոցին հատկացված էր 2 շենք: Դրանցից մեկը վեցամյա դպրոց էր՝ նախապատրաստական մեկ նախակրթարանի 5 բաժնով: Դպրոցում դասավանդում էին 3 հիմնական և 4

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում, 1922, թիվ 1024 («Ճակատամարտի» պրպտումները. Աղջկանց որբանոց, Օրթագյուղ»):
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

հրավիրյալ ուսուցիչ-ուսուցչուհիներ: Նրանք և դպրոցի տնօրենը դասավանդում էին տարբեր առարկաներ, այդ թվում սովորեցնում էին ֆրանսերեն ու անգլերեն: Այս դպրոցում աշակերտուհիները սովորում էին նաև ասեղնագործություն, կար ու ձև[1]:

Աղջկանց որբանոցն ուներ նվագախումբ և քառաձայն երգչախումբ[2]:

Տիրուհի Ազատյանը գոհացուցիչ էր համարում Օրթագյուղի Աղջկանց որբանոցի սննդակարգը[3]: Այնտեղ այնքան սպիտակ հաց ու ճաշ էին տալիս, որ սանուհիները կշտացած հեռանային ճաշարանից: Շաբաթը 2-3 անգամ մսով ճաշ էին մատուցում[4]:

Լիազորուհին եղել էր նաև որբանոցի ննջարանում և համոզվել էր, որ յուրաքանչյուր որբուհի քնում էր առանձին մահճակալում, մաքուր անկողնում: Ննջասենյակի և ոչ մանկատան մաքրությունն ապահովում էին իրենք՝ որբուհիները:

Դրական համարելով աշխատանքային փորձի ձեռքբերումը՝ Տիրուհի Ազատյանը դեմ էր այն բանին, որ 12-14 տարեկան աղջիկներն անձամբ հոգային իրենց կենցաղային բոլոր կարիքները: Բացի այդ՝ նա անընդունելի էր համարում այն, որ տնօրինության որոշմամբ որբուհիները պետք է գործեին ժանյակներ, որոնց վաճառքից ստացված գումարով նրանց համար պետք է գնեին հագուստ:

Այս գործելակերպը Տիրուհի Ազատյանը բնութագրում էր որպես երեխաների աշխատուժի շահագործում. «Եթե որբուհիները շահագործելու միջոց մը չէ այս, առնուազն պայծառ

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

մթնոլորտի մը պակասն է, որ կը մատնէ»[1]: Օրթագյուղի Աղջկանց որբանոցը գոյատևում էր ինամակալության շնորհիվ, որն ամսական 1500 ռսկի էր հատկացնում այս հաստատությանը՝ ամեն մի որբի համար նկատի ունենալով 8 ռսկի[2]:

Տիրուհի Ազատյանը տեղեկացնում էր նաև, որ Օրթագյուղի Աղջկանց որբանոցի 2 սենյակում ապաստանել էին Տարսոնի Ամերիկյան որբանոցից այդտեղ ուղարկված 8 պատանի[3]: Նրանց ծախսերը հոգում էր ամերիկյան բարերարուհի միս Հեսինկսը: Հեղինակը կոչ էր անում թերթի ընթերցողներին հետևել այդ օտարերկրուհու օրինակին և օժանդակել հայ որբերին[4]:

«Պրպտումները» Վազգեն Շիրակունուն տարել էին Օրթագյուղի հայ գաղթականների ու տարագրյալների ժամանակավոր կայան[5]: Վերջինն իրականում տեղավորված էր ոչ թե շենքի ներսում, այլ երկար նրբանցքում: Գաղթականները ծվարված էին կտորներով իրարից բաժանված անկյուններում՝ հողե հատակի վրա: Այս կայանում տեղավորված էին 248 տղամարդ, 198 կին և 196 երեխա[6]: Նրանցից 290-ն էին հաց ստանում ազգային մարմինների կողմից, իսկ մյուսներն իրենք էին հոգում իրենց ապրուստի հարցերը[7]: Հացի խնդիրը լուծելուն հատկացվում էր ամսական 650 ռսկի[8]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում, 1922, թիվ 1007 («Ճակատամարտի» պրպտումները. Օրթագյուղի կայանին մեջ»):
[6]Նույն տեղում:
[7]Նույն տեղում:
[8]Նույն տեղում:

Օրթագյուղի հայ գաղթականների ու տարագրյալների ժամանակավոր կայանում ապրող երեխաներից 50-ը հաճախում էին թաղի վարժարանը, 50 հոգի էլ կեսօրից հետո երկրորդ հերթով էին դպրոց գնում[1]: Վազգեն Շիրակունին խոտուն փաստերով ներկայացրել էր հիշյալ կայանում տիրող անառողջ և ապրելու համար անբարենպաստ պայմանները:

«Կայանին մաքրագործումի խնդիրը անյետաձգելի անհրաժեշտութիւն մըն է: Ամենէն վրդովիչ խնդիրն է կայանին մաքրագործումը: Անհանդուրժելի է այդ թշուառութեան մէջ երկարաձգել խեղճ գաղթականութիւնը: Պէտք է ազատել զանոնք խոնաւ գետիններէն և հոտած մթնոլորտէն»[2],- պնդում էր հոդվածագիրը: Նրբանցքի երկայնքով նշմարվում էին մարդկային աղտեղությունները, որոնցից անտանելի գարշահոտություն էր տարածվում ամբողջ շրջակայքում:

Անապատի կյանքը և աքսորի տառապանքը կարծես դեռ շարունակվում էին հայ գաղթականների համար Օրթագյուղի կայանում, սակայն միայն այն տարբերությամբ, որ նրանց չէին հալածում զինվոր-ոստիկանները, և նրանք շրջապատված էին հայ համայնքի «հոգատարությամբ»: Այդ հոգածությունը և կայանի վիճակը Վազգեն Շիրակունին համարում էր հայ համայնքի «կազմակերպական ապիկարութեան ապացոյցը»[3]:

«Քուրձէ վարագոյրներով» միմյանցից բաժանված վրանային սենյակներից ամեն մեկում ապրում էին 10-15 ընտանիք[4]: Տատիկներից մեկն արտասվելով ասում էր, որ իրենք, ցամաք հաց ուտելով, օրեր էին մթնեցնում. «Օ՜ֆ, ի՜նչ ապրիլ, եավ-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

բում: Մարդ չունիմ աշխարհքիս վրայ, վերը՝ Աստուած, վարը՝ դուք: Տղաքս սպաննեցին, հարսներս, թոռներս բոլորն ալ սպաննեցին, 25 հոգինոց ընտանիքէն 2 աղջիկ թոռներս ինծի մնացին»[1]:

Օրթագյուղի հայ գաղթականների ու տարագրյալների ժամանակավոր կայանում ապրող ցեղասպանությունից մազապուրծ տղամարդիկ հայ համայնքից պահանջում էին իրենց ապահովել ամենօրյա աշխատանքով, որ չմնային ցամաք հացն ողորմությամբ ստանալու հույսին և սեփական քրտինքով վաստակեին ամենօրյա ապրուստը[2]:

«Ճեսկատամարտն» անդրադարձել էր Դպրոցասեր տիկնանց վարժարանում խնամվող 200-300 աղջիկ որբերի դաստիարակության և հայեցի նկարագիրը պահպանելու խնդիրներին[3]: Թերթը վկայակոչում էր այդ հաստատության տնօրեն Պ.Գեորգյանի այն տեսակետը, ըստ որի՝ վարժարանն ակամա, հանգամանքների բերումով ստանձնելով որբուհիների խնամքը, «աւելի իր որբերով հետաքրքրութեան առարկայ կ'ըլլայ, քան իր ծրագրով և վերջնական նպատակով»[4]: Միևնույն ժամանակ այդ հոդվածում կարդում ենք հետևյալը. «Դպրոցասէրը, եթէ պարզ որբանոց մը ըլլար, բաղդատմամբ այն դերին, զոր խաղացած է ցարդ, և մանաւանդ անոր, զոր կոչուած է խաղալու այս ճգնաժամային օրերուն, ուր մեր ազգային գոյութիւնը վտանգի տակ է, ուր չափազանց տարուած ֆիզիքական գոյութեան մտահոգութենէն, ապա չի մոռնար ազգային դաստիարակութիւնը, ազգային նկարագրի պահպանութիւնը, որ էական պայմանն է ո և է ազգի գոյութեան

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 1064 («Դպրոցասերի 43-րդ տարեդարձը»):

[4]Նույն տեղում:

համար»[1]: Հիշյալ կրթօջախի ղեկավարը համոզված էր, որ Դպրոցասեր տիկնանց վարժարանը ձգտելու էր դառնալ իգական բարձրագույն ազգային «տիպար» գիշերօթիկ, որտեղ հավասար պայմաններում կրթություն պիտի ստանային աղքատ ու հարուստ, որբ և ծնող ունեցող երեխաները, գյուղաբնակն ու պոլսեցին[2]: Այս վարժարանում պատրաստվելու էին հայ մայրեր և վարժուհիներ, որոնք իրենց հերթին պետք է կրթեին ու դաստիարակեին հայ սերունդներին՝ դառնալով իգական երկրորդական վարժարանի հիմնադիրներ[3]:

43 տարվա պատմություն ունեցող Դպրոցասեր տիկնանց վարժարանը, սակայն, չէր կարողանում ամբողջապես իրականացնել իր առջև դրված խնդիրները և տարիների ընթացքում մշակած կրթական ծրագիրը, թեև թերթը նշում էր, որ այդ նպատակի համար «գրեթէ քայլ մը միայն կը մնայ ընելիք»[4]: Այս հարցի առիթով թղթակիցը զրուցել էր անգամ Զավեն պատրիարքի հետ, որը հավաստիացրել էր, թե քաջալերանքի էին արժանի հայ տիկնանց բոլոր ճիգերը, որոնցով նրանք ձգտում էին նպաստել ազգային կրթության զարգացմանը և ժողովրդի նկարագրի ազնվացմանը[5]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

«ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» ԱՆԴՐԱԴԱՐՁՆ ՈՐԲԵՐԻ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻՆ ՈՒ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ

Թե՛ որբանոցներին նվիրված հոդվածներում, թե՛ կրթական ոլորտի իրավիճակը ներկայացնող նյութերում «ճակատամարտն» անդրադարձել էր նաև որբերին տրվող կրթության որակին ու մակարդակին: Թերթը, մի կողմից, լիովին հասկանում էր, որ ցեղասպանությունից հետո բավական դժվար կամ գրեթե անհնար էր վերականգնել հայկական կրթական համակարգը, բայց, մյուս կողմից, չէր կարողանում հաշտվել որբերի կրթական գործի բարձիթողի վիճակի հետ:

Գ. Շահլամյանը գրում էր, որ բառի բուն իմաստով ոչ միայն անտեր էին մնացել Կ. Պոլսի և արևմտահայ գավառի հայկական դպրոցները, որոնցում այդպես էլ չէին կարողանում միասնական կրթական ծրագրերով և դասագրքերով կազմակերպել ուսուցումը, այլև այդ ամենից անմասն չէին մնում որբանոցները[1]:

«Ուսուցիչներ խմբովին վտարուեցան եւ պատկանեալ մարմինները պատճառաբանութիւններ չպահանջեցին: Տիրեց թոհուբոհ մը: Քմահաճ կարգադրութիւններ եղան: Անկանոնութիւնն ալ երեւի կանոն մըն է»[2],- այս փաստերն էր հիշատակում հոդվածագիրը: Առաջարկում էր Դպրոցասեր տիկնանց վարժարանի կրթական ծրագիրը և տարիներով մշակված դասավանդման մեթոդները դնել «պատրաստուելիք ազգային կրթական ծրագրի» հիմքում[3]:

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 964 («Կրթական կյանքը»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

Սուրեն Սրենցն անբարենպաստ էր համարում հայկական որբանոցների վիճակը բոլոր առումներով[1]: Նա հիշատակում էր դրա օբյեկտիվ պատճառները, ի թիվս որոնց «ահաւոր շրջանի աղէտին ահագնութիւնը, զինադադարէն ի վեր թէ՛ Անատոլուի և թէ՛ Հայաստանի անվերջ դժբախտութիւնները, ընդհանուր յուսալքումը, Ազգ. Ելմտ. Սնտուկին տագնապը»[2]: Այս ամենի հետևանքով «մեր որբանոցներու վիճակը օրէ օր կը ծաներանայ: Եթէ հոս ու հոն բարւոքման յայտնի նշաններ կան, ասոնք կազմակերպական հիմնական կարգադրութիւններու արդիւնք են»[3],- գրում էր Ս. Սրենցը: Նա վկայակոչում էր ևս մեկ հանգամանք: Եթե Կ. Պոլսի թաղերում հաստատված հայկական որբանոցներն ունեին խնամակալներ, սակայն մայրաքաղաքից դուրս գտնվողները զուրկ էին դրանցից[4]: Օրինակ էր բերում Գուլելիի Կեդրոնական որբանոցը, որը, հեղինակի կարծիքով, խնամակալ ունենալու պարագայում «իր շատ մը թերիները լրացուցած պիտի ըլլար»[5]:

Ս. Սրենցի համոզմամբ՝ Մուդրոսի զինադադարից հետո, հակառակ «այն քայքայիչ հարուածին, որ մեր ռղնաշարը կոտրած էր», արևմտահայությունը կարողացավ ստեղծել 2 «լաւ կազմակերպութիւն»՝ Ազգային խնամատարությունը և Ելմտական հանձնաժողովը, որոնք, սակայն, 1922 թվականին թուլացրել էին իրենց աշխատատեմպը և թերանում էին իրենց խնամքի տակ գտնվող հաստատությունների,

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 991 («Ազգ. Ելմտ. տագնապը»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

այդ թվում՝ որբանոցների կեսագործունեության պայմաններն ապահովելու և բարելավելու գործում[1]:

Հոդվածագիրը խոսում էր՝ թվային օրինակներ մեջբերելով: Ըստ այդմ՝ Կ. Պոլսում 1922 թվականի տվյալներով կային 16.000 հայ հարկատուներ, իսկ ամեն թաղում գործում էին Ելմտական հանձնաժողովի մասնաճյուղեր[2]: Այնուհանդերձ, Ս. Սրենցը գրում էր, որ Ազգային Ելմտական սնդուկի համար գանձված գումարները չէին «արդարացներ ո՛չ գոյությունը այդ 16.000 հարկատուներու, ո՛չ ալ այդ թաղային մասնաճիւղերու գոյությունը, առանց վարանման կրնամ ըսել, թէ՝ թաղային մասնաճիւղերը չեն գտնուած իրենց պարտականութեան բարձրութեան վրայ»[3]:

Ազգային Ելմտական սնդուկի հասույթի մեծ բաժինը կազմում էր Հայրենիքի տուրքը, որի հավաքման ու գանձման կազմակերպչական աշխատանքներն անհետևողական էին: Ս. Սրենցի համար անբավարար էր Խնամատարության պատասխանատուներից մեկի տված պատասխանն նրա այն դիտարկմանը, թե որբանոցներն ապահովված չէին երեխաների ապրուստի, հագուկապի, կրթության համար անհրաժեշտ զանազան պիտույքներով և իրերով: Իսկ պատասխանն այսպիսին էր եղել. «Այդ ամենը գիտենք, բայց դրամ չկայ»[4]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏՈՒՐՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ»

«Ճակատամարտ» թերթն իր առաջնորդողներից մեկում այսպես էր արտահայտել կարծիքը Հայրենիքի տուրքի մասին: «Հայրենիքի Տուրքը եկամուտի հաստատուն աղբիւր մըն է հայրենիքի ա՛յն զաւակներուն համար, որոնք- որբ թէ գաղթական- Պոլիս ամփոփուած են վերջին երեք տարուան ընթացքին: Ոչ մէկ հայրենակից իրաւունք չունի իր պարտքէն խուսափելու, եթէ բացարձակ չքաւոր մը չէ: Ամենէն չափաւոր հաշուով, եթէ Պոլսոյ 150.000 հայութենէն միայն 20.000 հարկատուներ ամսական միայն մէկ ոսկի վճարեն, արդէն կը գոյանայ գումար մը, որ Նպաստամատոյցին կողմէ կրկնապատկուելով, գրեթէ պիտի բաւէր Խնամատարութեան ամսական ծախքին: Եւ դեռ նկատի չենք առներ միանուագ վճարումները և մէկ ոսկիէն աւելի ամսականները, որոնք խոշոր գումար մը կը կազմեն»[1]:

Այս կարգի հոդվածներում բերված փաստերն ու դիտարկումներն օգնում են ամբողջական պատկերացում կազմել հայ որբերի կյանքի, դժվարությունների, երբեմն անմարդկային կենսապայմանների մասին, որոնց համար տեղին չէր դատապարտել ազգային մարմիններին: Թերթի աշխատակիցները կամ թղթակիցներն էլ միանշանակ չէին կարող 1922-1923 թվականների իրենց հրապարակումներում ներկայացնել այդ ամենի բուն հեղինակին՝ թուրքական իշխանություններին, որոնց վարած պետական հայաջինջ քաղաքականության հետևանքով էին հայերը զրկվել իրենց հայրենիքից, ունեցվածքից, բոլոր իրավունքներից, իսկ հայ մանուկներն ու պատանիները

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 1049 («Շարունակելիները»):

որբացել էին ու հայտնվել էին պետության խնամքից դուրս գտնվող ազգային որբանոցներում:

Սամվել Ռշտունին հայ որբերի և ընդհանրապես հայ գաղթականության խնդիրները լուծելու համար համախմբման էր կոչում ազգային կառույցներին ու ողջ հայ ժողովրդին[1]: Նա առաջարկում էր հայ գործարարներին կամ գործատուներին իրենց շահույթից ամսական կտրվածքով որբախնամ և տարագրելոց մարմիններին գրավոր կերպով կոնկրետ գումար հատկացնել, իսկ օրավարձու աշխատողներին դիմում էր խնդրանքով, որ նրանք էլ, հնարավորության դեպքում, այդ նպատակով նույն կազմակերպություններին նվիրաբերեին իրենց ստացած մեկ կամ մի քանի օրվա վարձատրությունը[2]: Ընտանիքներին, գիշերօթիկ դպրոցներին ու հասարակական հաստատություններին էլ առաջարկում էր ամսվա մեկ կիրակի օրվա ճաշի պատրաստման համար նախատեսած գումարը փոխանցել Որբախնամին և Տարագրելոց մարմիններին[3]: Բոլոր նրանց, ովքեր «Ազգին Սէրը ունին կամ կը կարծեն ունենալ իրենց սիրտերուն մէջը», հոդվածագիրը կոչ էր անում բաժին ունենալ այդ ազգափրկիչ ծրագրում[4]:

«Ճակատամարտի» էջերում Տարագրելոց կենտրոնական հանձնաժողովն իր հերթին «ստիպողական» կոչով դիմում էր թաղական խորհուրդներին, հայկական թերթերի վարչություններին, հայկական թաղերում կազմված և հանուն տարագրյալների հանգանակություն կատարած բոլոր մարմիններին, որ իրենց ձեռքերում գտնվող այդ գումարները շուտափույթ հանձ-

---

[1]Նույն տեղում, 1918, թիվ 12 («Խոսքը առանց գործի մեռյալ է»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

նեին Օսմանյան բանկի Ղալաթիայի կենտրոնի և Տարագրելոց կենտրոնական հանձնաժողովի հաշվեհամարներին[1]:

Արամ Սաֆրաստյանը ցեղասպանությունը վերապրած հայ գաղթականների և որբերի խնդիրները լուծելու արդյունավետ գործիք էր համարում Ազգային գերագույն մարմնի կամ Ազգային խորհրդի ստեղծումը[2]: Դրա մեջ պիտի մտնեին հայոց բոլոր կազմակերպությունների, միությունների, դասերի և խավերի ներկայացուցիչները[3]:

«Ճակատամարտը» փորձում էր հուշել այն ճանապարհները, որոնք կնպաստեին Ազգային միության մարմնի և ազգային խնամատարության գործի կազմակերպմանը: Օրինակ էր բերում բուլղարահայերի ազգային միության գործունեությունը[4]: Այդ միության մեջ ընդգրկված էին բուլղարահայ գաղութի կարող ուժերը: 20.000 անձից բաղկացած բուլղարահայ համայնքն իր ներդաշնակ գործունեության շնորհիվ կարողացել էր արևմտահայ գաղթականների և որբերի համար հավաքել և ուղարկել 1,5 միլիոն լև ու նույն արժողությամբ 2 վագոն նոր հագուստեղեն[5]:

Ազգային խորհուրդ կամ միություն ստեղծելու պոլսահայերի ջանքերը, սակայն, մնում էին անպտուղ: Հոդվածագիր Մ. Պետրոսյանը ներկայացնում էր, թե ինչպես էին զինադադարից հետո Կ. Պոլսում հայերը կազմել Խորհրդակցական ժողով, որը բաղկացած էր հայ քաղաքական կուսակցությունների, միութ-

---

[1]Նույն տեղում, 1918, թիվ 32 («Ստիպողական կոչ»):

[2]Նույն տեղում, 1919, թիվ 38 («Ազգային խորհուրդ»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1919, թիվ 237 («Ինչպե՞ս կազմակերպել Պոլսո Ազգային միությունը»):

[5]Նույն տեղում:

յունների և մամուլի ներկայացուցիչներից[1]: Այնտեղ քվեարկությամբ ընտրված 40 անդամ ունեցող ժողովը ինքն իրեն պիտի հռչակեր Ազգային խորհուրդ, որի մեջ չպետք է մտնեին լուսավորչական, կաթոլիկ և բողոքական հայ համայնքների երեսփոխանական ժողովների ներկայացուցիչները[2]:

Ազգային խորհրդից ընտրված Վարիչ մարմինը պիտի ղեկավարեր ընդհանուր բնույթ կրող ազգային գործերը՝ պատրիարքարաններին թողնելով զուտ հարանվանական գործերը: Ըստ թերթի՝ այս ծրագիրը կյանքի չէր կոչվել հայ ավանդապաշտ ուժերի լարած ինտրիգների պատճառով[3]:

Մ.Պետրոսյանը կարևորում էր Ազգային միությունը հիմնելու և այդ մարմնի կողմից Ազգային խնամատարությունն ու ներգաղթը կազմակերպելու անհրաժեշտությունը[4]:

«Ինչպե՞ս պետք է կազմակերպել ազգային խնամատարությունը» հոդվածում պարզորոշ արտահայտված էր «Ճակատամարտի» դիրքորոշումը[5]: «Ազգային խնամատարութիւնը, մէջն ըլլալով որբանոցներու գործը, տարագիրներուն և անոքներուն օգնութիւնը, ներգաղթը, անգործներուն աշխատանքի կազմակերպումը, պէտք է համարել ամենածանր հարցը, որ հազիւ թէ ուրիշ ժամանակ հայ ժողովուրդին ներկայացած ըլլայ»[6],- կարդում ենք թերթում:

Պարբերականի համոզմամբ՝ Ազգային խնամատարության գործին ընթացք տալու համար անհրաժեշտ էին նյութական

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում, 1919, թիվ 157 («Ինչպե՞ս կազմակերպել Ազգային խնամատարությունը»):
[6]Նույն տեղում:

մեծ միջոցներ[1]: Խոսում էր թվերով: Որպես օրինակ բերում էր Հայաստանի Հանրապետությանը, որն իր խնամքի տակ եղած 15.000 որբի համար ծախսում էր ամսական 2.250.000 ռուբլի (յուրաքանչյուր որբի համար՝ ամսական 150 ռուբլի), տարեկան՝ 27.000.000 ռուբլի[2]: Իսկ եթե իրենք պահեին Կ.Պոլսից մինչև Կիլիկիա ընկած տարածքում գտնվող 5000 որբի, նաև կերակրեին և օգնեին այդ տարածաշրջանում գտնվող կարիքավոր ու տարուբզիր դարձուածներին, անգործ մնացած 5000 հայի, տեղափոխեին 30.000 գաղթականի ու որբի, ապա միջին հաշվով 3 ամսվա կտրվածքով կծախսվեր 1.106.000 ոսկեդրամ[3]:

Թերթը հիշատակում էր այն փաստը, որ Զավեն պատրիարքը, որպես ազգային իշխանության ղեկավար, հրապարակ էր իջեցրել 1.000.000 ոսկի հանգանակելու առաջարկը[4]: Ազգային այս հանգանակությունը «Ճակատամարտը» պայմանավորում էր Ազգային խնամատարություն ստեղծելու հրամայական անհրաժեշտությամբ[5]: «Հանգանակութեան գումարը, մեր ապագային պահանջներուն հետ բաղդատած, փոքր գումար մըն է, որը պէտք է տրուի: Մեր ժողովուրդի բացարձակ մեծամասնութիւնը կը պահանջէ, որ այդ տուրքը տրուի»[6],- գրում էր պարբերականը:

«Ճակատամարտն» ազգային մեծ հանգանակությունը բացված հռչակվելու օրվանից 2 շաբաթ հետո տեղեկացնում էր, թե «շատերը դեռ խուլ կը մնան հարիւր հազարաւոր դժբախտնե-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

ղու անունով իրենց ուղղուած կոչին, շատեր ալ ճգներ են սակարկել պահանջուած գումարները»[1]: Որպէսզի այդ համազգային տուրքից խուսափողներ չլինեին, թերթն սկսել էր հրապարակել այն հայերի «սև ցանկը», ովքեր խուսափել էին իրենց ազգային այդ պարտականությունից[2]: «Անոնք, որ ետ կը մղեն սազգին կողմէ իրենց կարկառուած ձեռքը, կ'արժէ, որ առարկայ դառնան հանրութեան արհամարհանքին»[3],- կարդում ենք «Մև ցանկը» խմբագրականում:

«Ճակատամարտը» յուրօրինակ հարգալից վերաբերմունք ուներ Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանի՝ արևմտահայոց վերջին պատրիարքի նկատմամբ[4], թեև նա հաճախ հոդվածների ենթատեքստերում արժանանում էր քննադատության, որոնցում հիմնականում հիշատակում էին ոչ թե նրա, այլ պատրիարքարանի գործունեությունը:

Զավեն պատրիարքն իր ապրած ողջ կյանքով բացառիկ ազգասեր ու հայրենանվեր անձնավորություն էր, որը վայելում էր գրեթե ողջ ժողովրդի հարգանքն ու մեծարանքը: Դա արտահայտված էր ժամանակի արևմտահայ մամուլում: Օրինակ՝ «Բյուզանդիոնի» 1913 թվականի օգոստոսի 31-ի համարում լուր կար Ազգային ժողովի այն նիստի գումարման մասին, որտեղ ձայների ճնշող մեծամասնությամբ պատրիարք էր ընտրվել Դիարբեքիրի սառաջնորդ Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը: Քվեարկությունից հետո ատենապետ Ատյանը,

---

[1]Նույն տեղում, 1919, թիվ 134 («Մև ցանկը»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Կ.Պոլսի հայոց պատրիարքության գործունեությունն առասվել հանգամանորեն ուսումնասիրված է Ռ.Մելքոնյանի «Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը» (Երևան, 2010 թ.) աշխատության մեջ:

դրվատելով նորընտիր պատրիարքին, նշում էր, որ առաջնորդական երկարատև պաշտոնավարություններով նա ձեռք էր բերել լավ համբավ: Զավեն սրբազանը մտերիմներին բազմիցս խոստովանել էր, որ իրեն ազգին ծառայելու մղումով համակել էր Բաղդադի ազգային վարժարանում իր առաջին ուսուցիչը՝ Միհրան Սվաճյանը[1]:

Զավեն պատրիարքի գահակալությունն ընթացել էր 2 փուլով՝ 1913-1916 և 1918-1922 թվականներ: Հայր Զավենը պաշտոնավարել էր առանց իր շուրջը մեծ աղմուկ հանելու՝ յուրացնելով կառավարությանը կասկածելի և ազգին անհաճո չդառնալու գաղտնիքը: Նա եպիսկոպոս էր ձեռնադրվել 1910 թվականին: «Տեր Զաւէն եպիսկոպոս նկարագրով լուրջ անձ մըն էր: Երբեք դրամի մարդ չէ եղած և ուր որ գտնուած է, անշահախնդիր վերաբերում մը ցոյց տուած է»,- գրում էր «Բյուզանդիոնը»[2]: «Ժամանակ» օրաթերթը (հանձինս Երվանդ Օտյանի) թեև համեստ ու պարտաճանաչ եկեղեցական էր համարում հայր Զավենին, որն հոժարակամ և կարողությունների չափով պաշտոնավարել էր իր թեմում՝ առանց խռովություններ հարուցելու, առանց զեղծում գործելու և խնդիրներ ունենալու, բայց կարծում էր, որ նրան Մեսիայի պես չպիտի ընդուներ արևմտահայությունը[3]: Այնինչ, Զավեն պատրիարքից նրա ընտրության և պաշտոնավարության շրջանում ժողովուրդը մեծ ակնկալիքներ ուներ: Մտածում էին, որ նա պիտի կարողանար թե՛ ազգային մեքենան շարժման մեջ դնել, թե՛ վերականգնել պատրիարքական պաշտոնի «խոնարհած պատկառանքը ա՛յնպիսի ատեն մը, երբ ամեն կողմ արհաւիրքով լի էր»[4]:

---

[1]«Բյուզանդիոն», Կ.Պոլիս, 1913, օգոստոսի 3:

[2]Նույն տեղում:

[3]«Ժամանակ»», Կ.Պոլիս, 1913, թիվ 1624:

[4]«Բյուզանդիոն», Կ.Պոլիս, 1913, սեպտեմբերի 3:

Հայր Զավենն օժտված էր վարչական կարողություններով, տոկուն կամքով: Հաստատակամ էր և հավատարիմ իր համոզմունքներին: Ուներ մեծ հավատք: Փորձառու հոգևորական էր: Նվիրված էր եկեղեցուն: Նա, մինչև պատրիարք ընտրվելը, զարկ էր տվել կրթական գործին: Նպաստընկալ վարժարաններ էր բացել Սպերի, Դերջանի, Խնուսի ու Բասենի հայաբնակ գյուղերում: Հիմնել էր Կարինի Կարմիր վանքի որբանոցը և շրջակայքից այնտեղ էր հավաքել հարյուրավոր որբուկների, «որոնք իր գուրգուրանքին առարկան եղան մինչև վերջը»[1]: Հայր Զավենն անձամբ էր զբաղվում այդ որբանոցի սաների խնամքով ու դաստիարակությամբ և մտահոգվում էր չափահաս որբերի հետագա ճակատագրով:

Նախորդ պաշտոնավարությունների ընթացքում Զավեն արքեպիսկոպոսի հաջողություններով ոգևորված՝ արևմտահայության մեծամասնությունը հույսեր էր կապում, որ նա կարողանալու էր «պատրիարքական պաշտօնն հասցնել փափաքուած բարձրութեան՝ առանց տարուբերուելու կուսակցական և խմբակցական հովերէ և հոսանքներէ»[2]:

Զավեն պատրիարքը 1913 թվականի սեպտեմբերի 13-ին հանդիպել էր Կարինում իրեն ողջունելու եկած արևմտահայ հավատացյալ համայնքի հետ: Նրանց նա վստահեցրել էր, որ ծանոթ էր հայ գավառի ցավերին ու կսրիքներին, որ ինքը «պիտի ըլլար Գաւառի պատրիարքը և ոչ թէ՝ Պոլսոյ»[3]: Պատրիարքն ասել էր, որ ապրելու էր գավառի հոգսերով և գործելու էր գավառի համար՝ համագործակցելով ժողովրդի ու նրա պաշտոնական մարմինների և հասարակական գործիչների հետ: Հայր

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1913, սեպտեմբերի 25:

Զավենը համոզված էր, որ իր գործունեությունն արդյունավետ կլիներ միայն այն դեպքում, երբ ազգային մարմիններն ու կուսակցությունները համերաշխաբար կաջակցեին իրեն ինչպես այն զորապետին, որը ժողովրդի սյայքարը հաղթանակով պսակվելու նպատակին էր հասցնելու: «Այդ պարագային վստահ եմ, թէ յաղթանակը մեր ժողովրդեանն է, եթէ նոյնիսկ մենք զոհուինք ալ»,- պնդել էր նորընտիր պատրիարքը[1]:

Հայր Զավենը Կարինի թերթերից մեկին տված հարցազրույցում նշել էր, որ կառավարությանը պիտի պարբերաբար դիմեր՝ հայ ժողովրդի նկատմամբ կատարվող ջարդարարական քաղաքականությանը և ապօրինություններին վերջ տալու ակնկալիքով. «Ինծի այնպէս կ'թուի, թէ կառավարութիւնը կամ չէ՛ հասկցած երկրին պէտքեր և կամ նպատակ չունի իրական բարենորոգումներ մտցնել»[2]: 1913 թվականի դեկտեմբերի 5-ին «Բյուզանդիոնը» տպագրել էր Զավեն պատրիարքի հայտարարությունները բարենորոգումների խնդրի վերաբերյալ: Հայր Զավենի կարծիքով՝ եթե թուրքական կառավարությունը հայ ժողովրդին՝ թուրքերին իրավահավասար տարր համարեր, ապա բարենորոգումների «խնդրի մը առջեւ չէր գտնուի»[3]:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում ազգային քաղաքական կյանքում, պատրիարքարանին զուգահեռ, անգամ ավելի մեծ դերակատարում ունեին ազգային կուսակցությունները: Այս հանգամանքը չէր խանգարում, որ հայր Զավենը պատրիարքարանի օրեցօր թուլացող լծակներն օգտագործեր և արևմտահայության հանդեպ կիրառվող բռնարարքների, ալան-թալանի, կոտորածների մասին բողոքներով շարունակ

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1913, դեկտեմբերի 5:

դիմեր կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներին, Կ.Պոլսում տեղակայված հյուպատոսարանների և դեսպանատների պաշտոնատար անձանց, եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում պաշտոնավարող իր գործընկերներին: Նա հնարավորությունների սահմաններում ձգտում էր օգտակար լինել ժողովրդին, փրկել նրան կանխազգացվող եղեռնից, թեև պաշտոնավարության սկզբնական շրջանում արդեն լավ էր պատկերացնում իրերի դրվածքը: «Կեդրոնական կառավարութիւնը այժմ բարեկարգութիւններ մտցնելու ձեռնարկած է, սակայն մինչեւ այժմ եղածները ոչ մէկ հիմնական բան կ'պարունակեն: Ինձի այնպէս կ'թուի, թէ կառավարութիւնը կամ չէ՛ հասկացած երկրին պէտքերը, կամ նպատակ չունի իրական բարենորոգումներ մտցնելու»,- այս կարծիքն էր հայտնել Զավեն արքեպիսկոպոսն իր առաջին ելույթներից մեկում[1]: Օրինակ բերենք, թե Զավեն արքեպիսկոպոսն ինչպես էր համառորեն պայքարում վանքապատկան և եկեղեցապատկան հողատարածքների բռնագրավումների դեմ կամ դրանք ետ վերադարձնելու համար: 1913 թվականի սեպտեմբերի 19-ին «Ազատամարտ» օրաթերթը տեղեկացնում էր, որ Հասան աղան բռնագրավել էր Վարագա վանքի Սալախանե գյուղը՝ առաջարկելով գնել գյուղի հողատարածքը վանքից: Արքեպիսկոպոսը բողոքագրով դիմել էր Վանի կուսակալին և նշել, որ ընդունելի չէին Սալախանեի գնման կամ վարձակալման առաջարկները. «Ազգը կ'պահանջէ, որ գիւղը օրինական թուղթերով վերադարձուի Վարագայ վանքին»[2]:

Զավեն պատրիարքի ժողովրդանվեր գործելակերպը հարուցում էր թուրքական իշխանությունների զայրույթը, որոնք դա-

---

[1]Նույն տեղում, 1913, սեպտեմբերի 25:

[2]«Ազատամարտ», Կ.Պոլիս, 1913, թիվ 1625:

դարեցրել էին բանակցությունները պատրիարքարանի հետ 1913 թվականի մարտին[1]: Նոյեմբերից նրանք սպառնագրեր էին ուղարկում պատրիարքարան: Դրանցից մեկում (1913 թվականի նոյեմբերի 12)[2] պատրիարքին հիշեցնում էին. «Մի՛ մոռնաք, թէ ո՛ւր կ՚ապրիք»[3]: 1914 թվականի նոյեմբերի 16-ին էլ պատրիարքարանն ստացել էր հետևյալ սպառնագիրը. «Ով հայ գյավուրներ, մինչև մոտ ժամանակներս ձեր թերթերը, ձեր պատրիարքը, ձեր ժողովները, բոլորը ձեր գլուխը պիտի անցնենք...Այսօր թուրքերը հանձն առած են և ուխտած են հայ գյավուրները մաքրել»[4]: 1915 թվականի հունիսին հայր Զավենը նշում էր, որ օսմանյան և՛ պաշտոն ունեցող և՛ անպաշտոն անձանց արված բոլոր թախանձանքներն ու «լացերը» կամ օտար պետությունների «ասնպաշտոն և կես պաշտոնական» դիտողություններն որևէ ազդեցություն չգործեցին հայերի նկատմամբ թուրքական պետության որդեգրած ցեղասպան քաղաքականության վրա[5]: 1915 թվականի դեկտեմբերի 28-ին ամերիկահայոց հոգևոր առաջնորդ Արսեն ծայրագույն վարդապետ Վեհունիին Զավեն պատրիարքը գրում էր, որ հայ ժողովրդի ցեղասպանության ծրագիրը հղացել էր թուրքական

---

[1]Ազգային մասիմները և պատրիարքարանն առավել գործուն էին դարձել 1912-1914 թթ.՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների և Հայկական հարցի քննարկման ժամանակաշրջանում (տե՛ս Խառատյան Ա., «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը. 18-րդ դարի սկիզբ 1923թ.» (www.hpi.asj-oa.am)):

[2]Վարդան Լ.ետն, «Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը», Պեյրութ, 1970, էջ 35:

[3]Կիրակոսյան Զ., «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», Երևան, 1982, հ.1, էջ 286:

[4]Նույն տեղում, էջ 287:

[5]Կիրակոսյան Զ., «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», Երևան, 1983, հ. 2, էջ 37:

կառավարությունը. «Հրահանգը կեղրոնեն տրվեցավ և ամեն կողմ գործադրվեցավ անխղճորեն»[1]: «Հայաստան առանց Հայ. այս է Օսմ. կառավարութեան ծրագիրը: Արդէն սկսուած է Հայոց հողերուն և տուներուն մէջ իսլամներ բնակեցնել: Հայութիւնը ամբողջովին բնաջինջ ընելու ծրագիր մըն է այս, առանց կոտորած անունը տալու, նախճիր մըն է այս»,- գրում էր հայր Զավենը 1915 թվականի հուլիսի 30-ին բուլղարահայոց առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանին՝ խնդրելով Ազգային պատվիրակությանը և վեհափառ կաթողիկոսին տեղյակ պահել այն ամենի մասին, ինչին տեղեկանում էին իր նամակներով Հայոց ցեղասպանության վերաբերյալ[2]: Զավեն պատրիարքը կարծում էր, որ անհրաժեշտ էր դիմել քաղաքակիրթ ազգերի օգնությանը, որովհետև թեև պատրիարքարանը «ըրաւ մինչեւ հիմայ ինչ որ կրցաւ», բայց միայնակ անկարող էր դիմակայել եղեռնին: «Աշխատեցէք և դիմեցէք ամէն կողմ՝ թէ արտաւահմանի Հայութեան և թէ օտար մարդասէրներուն, որ իրենց նիւթական օժանդակութեամբ կեանքեր փրկեն: Ազատենք հիմա ինչ որ կրնանք»,- նշված է հայր Զավենի՝ 1915 թվականի օգոստոսի 25-ին գրված նամակում[3]:

Ցեղասպանության թոհ ու բոհի պայմաններում անգամ չընկճվեց Զավեն պատրիարքի ազգասեր ոգին: Ճկուն մտքի և անձնական կապերի շնորհիվ նա բռնագրավման ենթակա հայկական հաստատությունների՝ օսմանյան բանկերում պահ տրված գումարները կարողացավ փոխանցել պատրիարքարանի հաշվին և հաջողացրեց աքսորված կամ կարիքի մեջ

---

[1]Նույն տեղում:

[2]Զաւէն արք., «Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ», Գահիրէ, 1947, էջ 131-136:

[3]Նույն տեղում, էջ 149:

գտնվող իր ազգակիցներին փոխանցել նրանց կուտակային գումարներից[1]:

1916 թվականի օգոստոսի 10-ին թուրքական իշխանությունների կողմից արևմտահայերի ազգային Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների հետևանքով փակվում է Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը, իսկ Զավեն պատրիարքն աքսորվում է Բաղդադ:

1918 թվականի Մուդրոսի զինադադարից հետո վերաբացվում է Կ.Պոլսի հայոց պատրիարքությունը:

1919 թվականի փետրվարի 19-ին Զավեն արքեպիսկոպոսը վերադառնում է Կ. Պոլիս և վերստին ստանձնում է պատրիարքի պարտականությունները[2]: Այդ մասին լուր կար «Ճակատամարտ» օրաթերթում, որը նաև տպագրել էր Զավեն պատրիարքի լուսանկարը[3]: Խմբագրականում նշվում էր, որ ժողովուրդը տաժանելի աքսորից վերադարձած իր պատրիարքին ողջունել էր խանդավառությամբ և ցնծությամբ:

Ժողովրդի համոզմամբ՝ Զավեն պատրիարքն անձնավորում էր հայի մեծ տառապանքը: Ժողովուրդը նրա մեջ գնահատում էր այն պարկեշտ մարդուն, որը մինչև վերջ չլքեց պատնեշը, չվաճառեց խիղճը և «Բ. Դռան գետնատող պողոտային տեղ նախընտրեց աքսորի ճամփան»[4]:

Ամերիկահայոց առաջնորդական տեղապահ Շահեն ծայրագույն վարդապետ Գասպարյանը 1919 թվականի հուլիսի 29-ին նամակ էր ուղարկել հայր Զավենին՝ համայնքի անունից ողջունելով նրա վերադարձը: «Ասուած է, որ խնայեց, պաշտ-

---

[1]Խառատյան Ա., «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը. 18-րդ դարի սկիզբ 1923թ.» (www.hpj.asj-oa.am):

[2]Զաւէն արք., նշվ. աշխ., էջ 277:

[3]«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 87:

[4]Նույն տեղում:

պանեց, պահեց ու վերադարձուց զՁեզ կրկին ի գլուխս Ձեր հօտին, որպէսզի... Կենդանի, Անլռելի, Անկաշառ Վկան, Պատմիչը և Խօսնակն լինիք մօտ Մէկ Միլիոն Անմեղ Հայ-Քրիստոնեայ Զոհերու սպանութեանց, Ծերերու խոշտանգանաց, Մայրերու ենթարկուած անարգանաց, Կոյսերու անպատիվ բռնաբարմանց, Մանուկներու և Որբերու տանջանացն»,- գրում էր ամերիկահայոց առաջնորդական տեղապահ Գասպարյանը[1]: Նրա կարծիքով՝ աստվածային նախախնամության Աջը Զավեն սրբազանին նորից պատրիարքի պաշտոնին էր բերել, որ նա թարգմանիչը լիներ հայ ժողովրդի «անմահ իրաւանց և արդարագոյն վրիժաց»[2]: Սա պետք է դառնար արևմտահայոց վերջին պատրիարքի գործը և կոչումը:

Զավեն պատրիարքը 1921 թվականի ապրիլի 23-ին շրջաբերականով դիմել էր ժողովրդին, որ մասնակցեին Հայոց ցեղասպանությանը զոհ գնացած նահատակների հիշատակին ապրիլի 24-ին Կ. Պոլսի Մայր եկեղեցում տրվելիք հոգեհանգստյան պատարագին, որով այդ օրը աշխարհա- սփյուռ հայության համար հայտարարվում էր Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր[3]:

Առաջին աշխարհամարտում կրած պարտությունից հետո 1918-1920 թվականներին Թուրքիայում համեմատաբար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել արևմտահայության փրկված ու ցիրուցան եղած բեկորներին բնօրրանում հավաքելու և ազգային կյանքը վերաշինելու համար: Զավեն պատրիարքը փորձում էր բռնաձուլումից և բռնի իսլամացումից փրկել թուրքերի կողմից առևանգված ու ստրուկի կարգավի-

---

[1]Ավագյան Ք., «ԱՄՆ հայ գաղութի պատմությունը», Ե., 2000, էջ 195:

[2]Նույն տեղում:

[3]«Ժողովուրդի ձայն» («Ժամանակ»), Կ. Պոլիս, 1921, թիվ 771:

ճակում պահվող հազարավոր հայ կանանց ու որբերին: Վերադարձից հետո մեկ ամիս չանցած՝ հայր Զավենը նախագահում է վերաբացված Ազգային երեսփոխանական ժողովի մարտի 14-ի նիստում և առաջարկում է շտապ ընտրել Կրոնական և Քաղաքական ժողովների պետերին[1]:

Պատրիարքի նախաձեռնությամբ ստեղծված Որբախնամ, Տարագրելոց, Նպաստամատույց և այլ հանձնախմբերն ու Հայ կարմիր խաչն սկսում են օգնել Ցեղասպանությունը վերապրածներին, տվյալներ են հավաքում թուրքերի ու քրդերի մոտ ապօրինի պահվող հայ կանանց և որբերի մասին[2]: Պատրիարքարանը նրանց հայ համայնքին վերադարձնելու պահանջով դիմում էր իշխանություններին:

Անտանտի ուժերի գործադրած ճնշման հետևանքով Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը 1919 թվականի փետրվարի 5-ին հրաման էր ուղարկել գավառներ, որով պահանջում էր «մուսուլման ընտանիքների մոտ գտնվող հայ կանանց և երեխաներին հանձնել հայերից կազմված հանձնաժողովին»[3]: Զավեն պատրիարքը և ազգային կառույցներն այդ հրամանը փորձում էին կյանքի կոչել որքանով կարողանում էին, թեև իրականում նրանք հասկանում էին, որ դա կեղծիք էր:

---

[1]«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 106 («Ազգ. երեսփ. ժողովը վերաբացված»):

[2]1919 թվականի փետրվարի 28-ին Որբախնամ և Տարագրելոց ընկերությունները միավորվում և կազմում են Հայ ազգային խնամատարությունը, որը մասնաճյուղեր էր հիմնել Կ.Պոլսի բոլոր թաղերում և բացել էր գաղթականների կայաններ ու որբանոցներ: Հայ կարմիր խաչն անդամակցել է Միջազգային Կարմիր խաչին (տե՛ս Զաւէն արք., նշվ. աշխ., էջ 280):

[3]Մելքոնյան Ռ., նշվ. աշխ. էջ 65:

«Ճակատամարտ» օրաթերթը գրում էր, որ Ֆերիտ փաշայի օրոք թուրքական կառավարությունը, թեև արտաքին ճնշումների ազդեցության տակ հայտարարությունով դիմել էր իսլամ ազգաբնակչությանը, որ հայ համայնքին հանձնեին իսլամացված հայ որբերին, բայց պարզ էր, որ «կառավարությունը չ'ուզէր յանձնել իսլամացուած հայ որբերը»[1]: Այդ հայտարարությունն-հրամանն այնպես էր շարադրված, որ յուրաքանչյուր թուրք կարողացել էր ըմբռնել դրա բուն էությունը, այն է՝ «անշուշտ որ չէք յանձներ»[2]:

Օրաթերթը վկայում էր, որ հայ մանուկների սրտերն այնպես էին թուրքերը թունավորել, որ կամ քույրը եղբորն ասում էր, թե ինքը հայ չէր, կամ՝ հակառակը: Հարյուրավոր էին այն որբուկները, որոնք փոքր էին եղել և չէին հիշում իրենց հայ լինելու հանգամանքը: Հարյուրավոր էին նաև այն որբերը, որոնք սպառնալիքի տակ ուրանում էին իրենց ազգությունը[3]:

1919 թվականի ապրիլի 12-ին Զավեն պատրիարքը հայ ավետարանական համայնքի ազգապետ Զենոբ Պեզճյանի և հայոց կաթողիկոսի պատրիարքական տեղապահ արքեպիսկոպոս Սայեղյանի հետ տարածում են կոչ (այն տպագրվել է ժամանակի արևմտահայ մամուլի էջերում), որով դիմում էին ազգաբնակչությանը՝ միասնական նվիրատվական սնդուկի հաստատման համար[4]:

Համազգային Միացյալ խորհուրդը նպատակահարմար էր գտնում ոչ թե տարբեր կառույցների միջոցով նվիրատվությունների հավաքումը, այլ մեկ ընդհանուր սնդուկի մեջ դրամի

---

[1]«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, թիվ 346 («Թրքական քաղաքականությունը հայոց հանդեպ»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1919, թիվ 129:

կուտակումը: Հաշվարկվել էր, որ վերապրողների անմիջական կարիքները հոգալու համար անհրաժեշտ էր հանգանակել 1.000.000 օսմանյան ոսկի: Այդ գումարը հավաքելու նպատակով հիշյալ խորհուրդը կազմել էր համընդհանուր վստահություն վայելող անձանցից բաղկացած հանձնաժողով: Վերոհիշյալ կոչով դիմել էին արևմտահայությանը՝ խնդրելով նրանց աջակցել տարագիրների և որբերի օգնության գործին. «Անոնք՝ ահատոր եղեռնական թանկագին խլեակները, մեր հայրենի աշխարհի հաստատութեան սիւները պիտի ըլլան, կորուելու վրայ են՝ կեանքի և մահուան պայքար մղելով տակաւին: Աններելի ոճիր մը պիտի ըլլար մեզի համար մնալ լուռ հանդիսատեսներ և չփրկել մեր սիրելիները մահուան ճիրաններէն»[1]:

1919 թվականի սեպտեմբերին Ազգային երեսփոխանական ժողովն ընդունում է օրենք, որի համաձայն՝ յուրաքանչյուր հայ պարտավոր էր իր նյութական կարողության չափով վճարել «Հայրենիքի տուրքը» 2 տարբերակով՝ միանվագ կամ ամսական: Այդ նպատակով թաղերում կազմվել էին հանձնաժողովներ, որոնք գնահատում էին ամեն մի հայ անհատի նյութական կարողությունը և ըստ այդմ՝ որոշում էին նրա կողմից տրվելիք տուրքի չափը:

«Հայրենիքի տուրքով» փոխում էին հոգալ կարիքավոր և անպատսպար մնացած հայ տարագիրների ու գաղթականների հոգսերն այնքան ժամանակ, մինչև որ նրանք կկարողանային վերահաստատվել հայաթափված հայրենիքում:

Պատրիարքարանը «Հայրենիքի տուրքի» ստացագիրն էր պահանջում որևէ հարցով իրեն դիմողներին և չէր օժանդակում տուրքը չվճարողներին: Նույն կերպ էին վարվում Կ. Պոլսի եկեղեցիների թաղական խորհուրդները: Դրանք մերժում էին

---

[1]Նույն տեղում:

մկրտության, ամուսնության և հուղարկավորության արարողությունների համար իրենց դիմող թաղի այն բնակիչներին, որոնք «նիթական կարողութիւն ունէին և չէին ներկայացներ «Հայրենիքի տուրքի» ստացագիրը»[1]:

Վերոհիշյալ օրենքի գործադրությունը հանձնվել էր Ազգային ելմտական հանձնաժողովին, իսկ հավաքված գումարների մատակարարության հոգսը դրված էր Ազգային խնամատարության վրա:

Ուշագրավ էր, որ ՀՅԴ համակիր կամ ոչ պաշտոնական մամուլի օրգաններն ողջունում էին Զավեն պատրիարքի ակտիվ գործելակերպը և ազգային մարմինների աշխատանքը հունի մեջ դնելու նրա ծրագրերը: Միևնույն ժամանակ այդ պարբերականները, թեև ըմբռնումով էին մոտենում հիշյալ ծրագրերը խոչընդոտող օբյեկտիվ պատճառներին, սակայն գտնում էին, որ անհրաժեշտ էր արագացնել 1.000.000 օսմանյան ոսկին հանգանակելու ուղղությամբ տարվող կազմակերպչական աշխատանքները:

«Ճակատամարտ» օրաթերթը մասնավորապես առաջարկում էր պատրիարքարանը վերակազմավորել կառուցվածքով, կազմով և ծրագրերով, քանի որ այն անպատրաստ էր ժամանակի առաջադրած անհրաժեշտություններին լիովին ընդառաջ գնալու և ձեռնհատորեն կատարելու իր պարտականությունները: Պատրիարքը, որպես ազգային իշխանության ղեկավար, պիտի գիտակցեր, որ, հակառակ դեպքում, «Սպիտակ» եղեռն էր սպառնալու մեր ժողովրդին, իսկ դա հավասարազոր էր «Կարմիր» եղեռնին[2]:

---

[1]Զաւէն արք., նշվ. աշխ., էջ 280-281:

[2]«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 108 («Զավեն պատրիարքի շրջաբերա-կան-կոնդակը»):

Զավեն պատրիարքը լսում էր պատրիարքարանի կամ իր հասցեին հնչող քննադատությունները, բայց ժամանակ չէր վատնում դրանց պատասխանելու վրա: Նա շարունակում էր իր ազգափրկիչ առաքելությունն ի կատար ածել, քանի դեռ հնարավորություն և գործելու իրավունք ուներ:

1919 թվականի մարտի 18-ին հայր Զավենը տարածել էր շրջաբերական-կոնդակ, որով կոչ էր անում տարագրյալներին ու որբերին միայն «ավելացածէն բաժին չհանել»[1]: Նա կոչ էր անում վիրավոր հայրենիքի վերաշինության համար յուրաքանչյուր հայի ի սպաս դնել իր կարողությունները, ինչքը, կյանքը: Հաջողության էական պայմանը համարում էր համազգային գործակցությունը և համերաշխությունը: Հարկավոր էր ցույց տալ, որ հայը ոչ միայն անհատաբար ուներ լավ հատկություններ, այլև հավաքական համերաշխ կյանքով արժանի էր մեծ և ազատ ազգերի շարքի մեջ մտնել: Ուստի անհրաժեշտ էր հրաժարվել ամեն վեճերից, եսասիրական ձգտումներից, երկպառակտություն և բաժանում առաջ բերող առիթներից: «Պէտք է փրկել անպաշտպան ու անպատուած մեր քոյրերը, պէտք է ապրեցնել մեր որբերը, որոնք վաղուան կենդանի հայութիւնը պիտի կազմեն: Ժամանակը սուղ է: Լուրջ ու կազմակերպուած աշխատանքի պէտք կայ»,- գրված էր պատրիարքի կոնդակում[2]:

1920 թվականի դեկտեմբերի 30-ին «Ճակատամարտ» օրաթերթում տպագրել էին Զավեն պատրիարքի կազմած որբերի փրկության ծրագիր-հրահանգը: Այն ուղղված էր Որբախնամի թաղային մասնաճյուղերին: Տեղեկացվում էր, որ որբերի փրկության Կենտրոնական մարմնի որոշմամբ Կաղանդից

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

մինչև Ս. Ծնունդ (դեկտեմբերի 31-ից հունվարի 6-ն) ընկած ժամանակահատվածը հռչակված էր որպես «Որբերի փրկության շաբաթ»: Այդ օրերին մասնաճյուղերի անդամները պիտի ջանային ժողովրդին ներկայացնել որբերի ճգնաժամային կացությունը և առաջարկեին հրաժարվել գոնե այդ տոների առթիվ կատարվելիք բոլոր ծախսերից և նվերներից՝ նախատեսված գումարը հատկացնելով որբերի օգնության նվիրական գործին: Հրահանգում էին մասնաճյուղերին մինչև հունվարի 15-ը կազմակերպել ամանորյա հանդեսներ, որոնցում պիտի ընդգրկեին նաև որբերին և պիտի անցկացնեին աճուրդներ՝ հօգուտ նրանց[1]:

1922 թվականի հունիսի 2-ին Ազգային պատվիրակության հաշվեցույցի տվյալների համաձայն՝ Մուդրոսի զինադադարից մինչև 1921 թվականի դեկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում Կ. Պոլսում հավաքվել էր 1.536.157 օսմանյան ոսկի որբերի և տարագրյալների համար[2]:

Այս ձեռնարկներից բացի՝ որբերին օգնելու նպատակով Զավեն պատրիարքը համագործակցում էր ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց ընկերությունների, միջազգային և հայկական Կարմիր խաչի ընկերությունների հետ՝ կազմակերպելով նրանց աշխատակիցների ու ղեկավարների այցելությունները հայկական որբանոցներ, ինչպես նաև նպաստելով նրանց կողմից նվիրատվությունների հատկացմանը հայ որբերին: Այդ այցելությունները նույնպես լուսաբանվել են արևմտահայ պարբերականների, ի թիվս որոնց նաև «Ճակատամարտի» էջերում:

---

[1]Նույն տեղում, 1920, թիվ 645 («Հրահանգ Որբերու փրկության թաղային մասնաճյուղերու կազմության և գործունեության»):

[2]Զաւէն արք., նշվ. աշխ., էջ 282-283:

Որբախնամ ծրագրին զուգահեռ՝ Զավեն արքեպիսկոպոսը շարունակում էր որբափրկիչ աշխատանքները: «Իմ առաջին գործերէս մէկը եղաւ տարագիրները խնամելէ զատ, որբերը հաւաքել փողոցներէն և իսլամներու տուներէն»,- գրում էր հայր Զավենն իր հուշերում[1]: Մինչև 1922 թվականը Կ. Պոլսի հայոց պատրիարքության և անձամբ պատրիարքի ջանքերով ստեղծված հանձնախմբերի աշխատանքի շնորհիվ բռնաձուլումից փրկվել և հայ համայնքին են վերադարձվել հազարաւոր հայ որբեր և առնանգված ու բռնի իսլամացված հայ կանայք և աղջիկներ: Պատրիարքը վկայում էր, որ մասնավորապես Առաքել Չաքրյանի գլխավորությամբ գործող Որբահավաք մարմինը 1919 թվականի մայիսից 1921 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանում «Չեզոք տուն» կոչվող կառույցի հետ «Պոլսոյ մէր գտնուած գրեթէ 4000-5000 որբերէն 3000-ը ազատեր է թուրքերու քովէն»[2]: Գավառներում գտնվող հայ որբերի մեծամասնությունը «մնաց թուրքերուն ձեռքը. հարիւր հազարաւոր որբերէն շատ քիչերը կարելի եղաւ ազատել»[3]: Զավեն արքեպիսկոպոսը դրա պատճառը համարում էր այն, որ Համաձայնական բանակը չէր մտել գավառներ:

1920 թվականի հունվարի սկզբին պատրիարքարանը և Քաղաքական ժողովն ընդվզում ու բողոքում են կառավարության այն որոշման դեմ, որով 1000 օսմանյան ոսկի էր հատկացվելու հայ որբերի կարիքները հոգալու համար: Պատրիարքարանը հիշատակագիր է ուղարկում Բ. Դռանը՝ նշելով, որ հայ որբերի խնդիրների լուծման համար անհրաժեշտ էր 200.000 օսմանյան ոսկի: Հիշատակագրով տեղեկացնում էին կառավարությանը,

---

[1]Նույն տեղում, էջ 288:

[2]Նույն տեղում, էջ 292:

[3]Նույն տեղում:

որ Քաղաքական ժողովը ոչ միայն սկզբունքորեն չէր ընդունում այդ գումարը, այլև պահանջում էր վերադարձնել՝

- պատերազմի ժամանակ պետության հաշվին գանձված ազգապատկան բոլոր կալվածքների վարձերը,
- հայկական վանքերից, եկեղեցիներից կողոպտված և Կ. Պոլիսի փողերանոցում հալեցված ու տարբեր առարկաներ ձուլած ոսկեղենի ու արծաթեղենի փոխարժեքը,
- հայկական գավառներում կառավարության կողմից գրավված ու վաճառվված հայ ժողովրդի գույքի փոխարժեքը[1]:

Պատրիարքարանը 1921 թվականի սկզբներին զեկույցի տեսքով ամփոփել էր իր որբախնամ և որբափրկիչ ծրագրերի արդյունքները՝ նշելով, որ 63.000 հայ որբեր դեռևս մնում էին մուսուլմանական ընտանիքներում[2]:

«Ժողովուրդի ձայնը» անկախ պարբերականը 1921 թվականի փետրվարի 11-ին տեղեկացնում էր, որ պատրիարքարանն Ազգերի դաշնակցության լիգա էր ուղարկել հայ որբերի վիճակին նվիրված իր տեղեկագիրը՝ այդ կազմակերպության իսկ պահանջով: Տեղեկացվում էր նաև, թե առաջիկա գարնանը 3 անձից բաղկացած մասնախումբ էր գալու «Թուրքիա՝ զբաղվելու հայ որբերը փրկելու և ապահովելու գործով»[3]:

---

[1]«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, թիվ 348 («Պատրիարքարանի հիշատակագիրը Բ. Դռան»):

[2]Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 66:

[3]«Ժողովուրդի ձայնը» («Ժամանակ»), Կ. Պոլիս, 1921, թիվ 722:

1922 թվականին պատրիարքարանին տեղեկացնում են, որ «միլլի կառավարութիւնը զէնքի տակ առած է Անատոլուի մէջ մնացած հայ որբերէն անոնք, որ սնցած են 15 տարին: Ազատ չեն մնացած նոյն իսկ ամերիկեան որբանոցներուն աշակերտները»[1]:

Զավեն պատրիարքը նաև այս արհավիրքից և բնաջնջումից որբերին փրկելու գործում նոր ուղղություն էր որդեգրել. նրանց տարհանել հիմնականում քրիստոնյա ազգաբնակչություն ունեցող կամ հայ ժողովրդի հանդեպ բարեկամաբար տրամադրված պետություններ և այդ կերպ որբերին փրկել թուրքական հերթական սպանդից: «Ճակատամարտը» տեղեկացնում էր, որ 1922 թվականի դրությամբ 25.000 հայ որբ կար ԱՄՆ-ում, 400-ը՝ Գերմանիայում, 15.000-ը՝ Հունաստանում, 400-ը՝ Հռոմում, 200-ը՝ Ռումինիայում, 1000-ը՝ Բուլղարիայում, 5000-ը՝ Սիրիայում, 40.000-ը՝ Խորհրդային Հայաստանում[2]: Զավեն պատրիարքը փորձում էր կարգավորել հայ որբերից շատերի հետագա ճակատագիրը, այսինքն՝ անել այնպես, որ նրանք օտար երկրում հայի հետ ընտանիք կազմեին և կապեր հաստատեին տեղի հայ համայնքի հետ՝ պահպանելով ազգային դիմագիծը[3]:

«Ճակատամարտը» թերահավատորեն էր վերաբերում Զավեն պատրիարքի այս ծրագրին՝ պնդելով, որ հայ որբերին չպետք է տարհանել հայրենիքից և չհավատալով, որ օտար երկրում հայ երեխաները հայ կմնային[4]: «Մենք նախազգացումներ չունինք ձեռնարկներուն հանդէպ և մեզի թոյլ չենք տար կասկածիլ անոնց ուղղամտութեան վրայ: Բայց եւ այն-

---

[1]«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1922, թիվ 2813 (992) («Ճակատ կորկեն»):

[2]Նույն տեղում, 1922, թիվ 1330 («Չարչարանքը և չարիքը»):

[3]Ավագյան Ք., նշվ. աշխ., էջ 175-177, 196-20:

[4]«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1922, թիվ 1330:

պէս, անոնք իրենց բոլոր բարեացակամութեամբ, չեն կրնար խափանել օտարացման, կազմալուծման չարիքը»[1],- կարդում ենք թերթում: Խմբագրականներից մեկում բերվում էին փաստեր հայ որբերի ուծացման մասին՝ գրելով, թե Աթենքի «մօտերը և ուրիշ քանի մը տեղեր որբուհիներուն արգիլուած է հայերէն խօսիլ»[2]:

Թուրքական իշխանությունները ոչ միայն սպառնագրեր էին ուղարկում պատրիարքին, այլև հասկացնում էին, որ դեմ էին նրա հայափրկիչ ծրագրերին: Հայր Զավենին չէին հանդուրժում ոչ միայն այն բանի համար, որ նա տեղեկագիր էր ուղարկել Ազգերի դաշնակցության լիգա, այլև 1920 թվականին, Կիլիկիայի հայերին փրկելու խնդրանքով, մեկնել էր Ֆրանսիա և դիմել էր ֆրանսիական կառավարութ- յանն՝ օգնության ակնկալիքով: Թեև այդ առաքելությունը չծառայեց իր նպատակին, ու պաշտոնական Ֆրանսիան ձեռք չմեկնեց, բայց պատրիարքի այցը համարվեց Թուրքիայի դեմ ուղղված դավաճանություն[3]: Քեմալական կառավարությունը Զավեն պատրիարքին չներեց նաև այն պատճառով, որ նրա նախաձեռնությամբ 1922 թվականի հունիսի 4-ին կրկին Ազգերի դաշնակցության լիգա բողոքագիր էր ուղարկվել 1922 թվականի ապրիլի 30-ին Թուրքիայում ընդունված հայերի լքյալ գույքերի վերաբերյալ այն օրենքի կապակցությամբ, որը թույլ էր տալիս կառավարությանը բռնագրավել «թշնամի յարձակումէն ազատագրուած շրջաններէն մեկնած անձերուն գոյքերը»[4]:

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 1314 («Երկրպագեցեք, բայց մի՛ ստեք»):

[3]Բաղդասարյան Կորյուն, «Մոռացված տապանաքարը», (տե՛ս www.armworld.am):

[4]Վարդան Լեւոն, նշվ. աշխ., էջ 271-272:

Պետք է փաստենք, սակայն, որ քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ օրաթերթի առաջարկներն, ինչպես նաև Եղեռնից մազապուրծ եղած տարագրյալների իրավունքները մնացել էին մերժված և ոտնահարված թուրքական իշխանությունների կողմից:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԾ ՋԱՆՔԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ

«Ճակատամարտ» օրաթերթը հայ գաղթականության և որբերի հիմնախնդիրներին անդրադարձել է մեկ այլ կտրվածքով ևս: Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գաղթականներն ապաստան էին փնտրում հարևան երկրներում (հիմնականում Ռուսաստանում (Կովկասում) և Սիրիայում.- Մ. Հ.), իսկ Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադրումից հետո նրանց մեծ մասը համախմբվում է հենց այնտեղ՝ փրկված ու անկսիս հայրենիքում: Նրանք հուսով էին, որ շուտով վերադառնալու էին Էրգիր՝ իրենց ծննդավայր հայրենիքը: Սակայն մինչ կհասներ այդ բաղձալի օրը, փորձում էին գոյատևել Հայաստանում, որտեղ մոլեգնում էր սովը և չկային ապրուստի ու կեցության տարրական պայմաններ: Հայոց նորաստեղծ պետությունը, այնուհանդերձ, հնարավորության սահմաններում անում էր ամենը՝ հայ գաղթականների և որբերի կյանքը փրկելու, նրանց կացարանի և գոյատևման հիմնահարցերը լուծելու համար:

Եթե չլիներ արտաքին օգնությունը, ապա 1918-1920-ական թվականներին Հայաստանում ապաստանած գաղթականներին ու որբերին սովամահությունը կսպառնար: 1918 թվականի հոկտեմբերին Մ. Վրացյանը գրում էր, որ սպառվել էին հացի պաշարները. «Ոչ միայն գաղթականությունը, այլ և տեղացիներից շատերը մատնուեցին սովամահութեան: Վեց ամսայ ընթացքում սովից ու հիւանդութիւններից Հայաստա-

նում մեռաւ մօտ 180.000 մարդ»[1]: 1918 թվականի նոյեմբերին Հայաստանում գտնվող յուրաքանչյուր 5000 որբից 480-ը մահանում էր[2]:

Սովը Հայաստանում շարունակվել էր մինչև 1919 թվականի կեսերը, և այդ ընթացքում տասնյակ հազարավոր զաղթականներ ու որբեր էին մահացել սովից ու համաճարակներից[3]:

Պատմաբան Սուրեն Ավետիսյանի ուսումնասիրությունների համաձայն՝ 1918 թվականի հուլիսին Հայաստանում գործում էր 35 որբանոց ավելի քան 2250 որբերով, իսկ Վրաստանում՝ 27 որբանոց ավելի քան 1950 որբերով[4]: 1918 թվականի սեպտեմբերին Հայաստանում որբանոցների թիվը դարձել էր 32, իսկ որբերինը՝ 2400[5]: Այդ որբանոցների կարիքները հոգում էին մի շարք բարեգործական կազմակերպություններ, ի թիվս որոնց՝ «Եղբայրական օգնության» կոմիտեն, Մոսկվայի Հայկական կոմիտեն, Կովկասի Հայկական բարեգործական ընկերությունը, Անգլիական բարեգործական ընկերությունը, Ամերկոմը և այլն[6]: Արդեն 1919 թվականի հունվարին Հայաստանում առկա էր 46 որբանոց 6567 որբերով[7]:

1919 թվականի ապրիլի 25-ին Հայաստանի կառավարությունում ներկայացված զեկուցագրի տվյալներով՝ Հայաստանի Առաջին հանրապետությունում ապաստանած արևմտահայ զաղթականների թիվը 263.000 էր, իսկ Ատրպատականում,

---

[1]Վրացեան Ս., «Հայաստանի Հանրապետութիւն», Թեհրան, 1982, էջ 192:

[2]«Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1968, թիվ 2, էջ 217:

[3]Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 253:

[4]Ավետիսյան Ս., «Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ.», Ե., 2009, էջ 14:

[5]ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 900, թ. 1:

[6]Նույն տեղում:

[7]ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թթ. 8, 9, 20, 21:

Վրաստանում, Հյուսիսային Կովկասում, Ռուսաստանի այլ բնակավայրերում՝ 200.000[1]: Նույն զեկուցագրից պարզվում էր, որ Հայաստանում գտնվում էին ավելի քան 40.000 որբեր, որոնցից 15.612-ը տեղավորված էին որբանոցներում[2]:

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ 1918 թվականի սկզբին թուրքերի՝ Արևելյան Հայաստան ներխուժելու հետևանքով գաղթական էին դարձել արևելահայ որոշ բնակավայրերի (Կարսի, Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Էջմիածնի, Ղարաքիլիսայի և այլն) բնակիչներից շատերը, և Հայաստանի Առաջին հանրապետության բնակչության գրեթե կեսը՝ 450.000-ը, գաղթականի կարգավիճակում էր հայտնվել[3]:

Գաղթականների խնդիրներով զբաղվում էին պետական 4 կառույց՝ Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Գաղթականության հարցերի մշտական հանձնաժողովը, Խնամատարության ու աշխատանքի, Ներքին գործերի և Հանրային կրթության նախարարությունները:

Արդեն 1918 թվականին Հայաստանում ընդունվել էին մի շարք օրենքներ գաղթականների ստջև ծառացած կենսական խնդիրները լուծելու նպատակով: Պետությունը փորձում էր տվի, համաճարակների և անգամ պատերազմական իրավիճակում հնարավորինս հոգալ գաղթականների և որբերի ներգաղթի, կեցության, խնամքի, աշխատանքով ապահովվածության, կրթության և առողջության պահպանման հարցերը:

ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմություն» բազմահատորյակից տեղեկանում ենք հետևյալ մանրամասների մասին: «Գաղթականների դրամական

---

[1]Նույն տեղում, թ. 84:

[2]Նույն տեղում:

[3]«Հայոց պատմություն», հ. 4-րդ, գիրք 1-ին, Ե., 2010, էջ 61:

նպաստը օրական կազմում էր 60 կոպեկ (մեկ շնչի հաշվով): Գաղթականների սոցիալական պաշտպանվածության նպատակից ելնելով՝ յուրաքանչյուր շնչին օրական տրվում էր կես ֆունտ ալյուր որպես նվազագույն չափաբաժին: 1918 թվականի հոկտեմբերի մեկից մինչև 1919 թվականի հունվարի մեկը գաղթականության օգնության ծախսերն, ըստ կառավարության կազմած նախահաշվի, կազմել էին ավելի քան 12,7 միլիոն ռուբլի: Կառավարության կազմած նախահաշվով՝ 10 հազար որբի ծախսերը հոգալու համար ամսական պահանջվում էր 1,5 միլիոն ռուբլի»[1],- կարդում ենք վերոհիշյալ գրքում: Ընդ որում, նորաստեղծ պետությունը, 1918 թվականի հոկտեմբերի 11-ին ընդունած օրենքի համաձայն, ստանձնել էր որբերի խնամքն ու դաստիարակությունը:

1918 թվականի դեկտեմբերին Խնամատարության և աշխատանքի նախարարության զեկույցի համաձայն՝ Հայաստանում ապաստանել էին շուրջ 40.000 որբեր, որոնցից 15.612-ն էին խնամվում պետական ու բարեգործական կազմակերպությունների կողմից[2]: Կար 50 որբանոց, որոնցից թվով սմենաշատ՝ 1219 որբերի էր ապաստանել իր հարկի տակ Ալեքսանդրապոլում գործող որբանոցը[3]:

1919 թվականի ապրիլին Խնամատարության և աշխատանքի նախարարությունն երկրի տարածքում գտնվող որբանոցներում և այլ վայրերում, այդ թվում՝ փոդոցներում ապրող որբերի խնամքը հանձնել էր Ամերկոմին՝ Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեին[4], որն ստանձնել էր

---

[1]Նույն տեղում, էջ 62:

[2]Նույն տեղում, էջ 63:

[3]Նույն տեղում:

[4]Ամերկոմը կամ Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն ստեղծվել էր 1918 թ. ԱՄՆ Կոնգրեսի որոշմամբ դեռևս 1915 թ.

նան Վրաստանում հայտնված հայ որբերի խնամքը[1]: Ամերիկոմի խնամքին հանձնված հայ որբերի կրթության և դաստիարակության խնդիրները դրվել էին Խնամատարության և աշխատանքի նախարարության վրա[2]:

1919 թվականի հունիսի 5-ին Հայաստանի Նախարարների խորհրդի որոշմամբ Ամերիկոմին հանձնված որբանոցների սաների կրթության և դաստիարակության գործառույթը դրվել էր Հանրային կրթության նախարարության վրա[3]: Նույն թվականի մայիսից Խնամատարության և աշխատանքի նախարարությանը ենթակա որբանոցները 14.000 որբով պետությունը հանձնում է Ամերիկոմի խնամքին[4]:

1919 թվականի մայիսին Հայաստանում գործում էին 86 որբանոց և մանկական 10 հիվանդանոց, որոնցում եղած որբերի թիվը 13.820 էր[5]: Որբանոցների գործերի գլխավոր կառավարիչը բժիշկ Գրիգոր Սաղյանն էր[6]:

Հայաստանում սոցիալական պայմանների որոշակի բարելավմանը զուգընթաց կառավարությունը որոշում է Ամերիկո-

---

ԱՄՆ-ում հիմնված Առաջին համաշխարհային պատերազմից առավել տուժած երկրներին օգնություն տրամադրելու նպատակով ստեղծված Հայաստանի և Սիրիայի Նպաստի կոմիտեների միավորման հիման վրա: Ամերիկոմը կոչում էին նաև Մերձավոր Արևելքի Նպաստամատույց (տե՛ս Ավետիսյան Ս., նշվ. աշխ., էջ 4-6):

[1]«Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1968, թիվ 2, էջ 219:

[2]ՀԱԱ., ֆ. 205, ց. 1, գ. 619, թ. 1:

[3]ՀԱԱ., ֆ. 207, ց. 1, գ. 94, թ. 17:

[4]«Հայոց պատմություն», նշվ. աշխ., էջ 63:

[5]ՀԱԱ., ֆ. 205, ց. 1, գ. 900, թ. 1:

[6]ՀԱԱ., ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 85:

Տե՛ս նաև

https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80_%D5%8D%D5%A1%D5%B2%D5%B5%D5%A1%D5%B6

մի խնամքին հանձնված որբանոցները կամ գոնե դրանց մի մասը վերցնել իր խնամքի տակ, որպեսզի հայ որբերը չենթարկվեին ամերիկյան դաստիարակության և վարք ու բարքի, նաև կրոնազաղափարական ազդեցությանը: Արդեն 1919 թվականի հուլիսին Հայաստանը այդ կազմակերպությունից ետ է վերցնում 25 որբանոց ու մանկական 4 հիվանդանոց, որոնցում խնամվում էր 2498 որբ[1]: Նույն թվականի աշնանը Հայաստանի որբանոցներում (թե՛ պետական, թե՛ Ամերիկոմի) գտնվող որբերի թիվը 23.110 էր[2]:

«Ճակատամարտն» առավելապես «Կյանքը Հայաստանի մեջ» խորագրի ներքո էր ներկայացրել հայոց պետության կողմից իրականացվող որբախնամ ու գաղթականների տեղավորման և նրանց խնդիրները լուծելու նպատակով կատարվող աշխատանքները: Օրինակ «Սով կա» հոդվածում Թիֆլիսի թերթերից արված լրաքաղով պատկերացում էր տրվում, թե ինչ տիտանական ջանքեր էր գործադրում Հայաստանի կառավարությունը գաղթականների տեղավորման, ներգաղթի և պարենավորման հիմնահարցերը վերացնելու ուղղությամբ[3]: Դա արվում էր մի երկրի կողմից, «որից կտրված էին բոլոր հացառատ վայրերը, որ ինքը քաղցած լինելով, կերակրում էր կէս միլիոնի հասնող գաղթականների հսկայական բանակ»[4]:

---

[1]ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թթ. 169-170:

[2]ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 46, թ. 63:

[3]«Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1918, թիվ 8 («Սով կա»):

[4]Նույն տեղում:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԲԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» ԷՋԵՐՈՒՄ

Արևմտահայ գաղթականներին և որբերին դեպի Երգիր ներգաղթեցնելու խնդիրը մշտապես զբաղեցրել է Հայաստանի Առաջին հանրապետության պետական այրերին: Հատկապես խոսքը վերաբերում է 1920 թվականի գարնան ժամանակահատվածին, երբ այդ հարցի լուծման փնտրտուքը հանձնարարվում է կոնկրետ մարմնի՝ 1920 թվականի մարտին հիմնված Ներգաղթի հանձնաժողովին: Այս կառույցը պետք է ծրագիր մշակեր, ըստ որի՝ Հայաստանում և դրա սահմաններից դուրս գտնվող արևմտահայ գաղթականները պիտի վերադարձնային Արևմտյան Հայաստան: Այս շրջանում ստեղծվել էին պատմաքաղաքական որոշակի հանգամանքներ, որոնք հնարավորություն էին տալու Թուրքիայի հետ ձեռք բերել արևմտահայ գաղթականների և որբերի վերադարձի պայմանավորվածություն[1]:

Արևմտահայ գաղթականների և որբերի ներգաղթի խնդիրներն իրենց անդրադարձն էին գտել «Ճակատամարտի» էջերում: Թերթի հրապարակումներում զգացվում էր մտահոգություն և թերահավատություն, որ Թուրքիան թույլ կտար արևմտահայերին վերադառնալ նրանցից բռնագրավված սեփական հայրենիքն ու հայրենի շենները:

Թերթն առաջարկում էր Հայաստանի Հանրապետության կառավարությանը եռանդուն կերպով պահանջել թուրքական իշխանություններից հնարավորություն և իրավունք

---

[1]«Հայոց պատմություն», նշվ. աշխ., էջ 65:

տալ հայ գաղթականներին վերադառնալու իրենց ծննդավայրը[1], թեև գիտակցում էր, որ Թուրքիան չէր բավարարելու Հայաստանի այդ պահանջը:

Օրաթերթը տպագրել էր Հայաստանի Առաջին հանրապետության Արտաքին գործերի նախարարության կողմից թուրքական կառավարությանն ուղարկված ծանուցագիրը, որտեղ բողոքում էին հայ գաղթականների վերադարձն արգելող թուրքական քաղաքականության դեմ[2]: «Տաճկական իշխանութիւնները չվերցուցին այն դժվարութիւնները, որոնք կը խանգարէին գաղթականներու վերադարձը: Մէկ քանի հազար սովեալ, անտուն, կենսական բոլոր միջոցներէ զուրկ ընտանիքներ ներկայիս կը գտնուին ամենառողբալի և ամենաանտանելի դրութեան մէջ»[3],- գրված էր այդ ծանուցագրում:

«Ճակատամարտը» տպագրել էր նաև Թուրքիայի պաշտոնական պատասխանը վերոհիշյալ ծանուցագրին[4]: «Թուրքիոյ դիւանագիտական ներկայացուցիչը նոյեմբերի 16-ին Հայաստանի կառավարութեան յայտներ է, որ ինք լիազորուած է ծանուցանելու, որ իր կառավարութիւնը թոյլատրեր է բոլոր գաղթականներու վերադարձը իրենց նախկին բնակավայրերը: Վերադարձի առաջին օրն է նոյ. 18-ը: Ամեն մէկ գիւղէ օրական կրնան վերադառնալ 10-ական ընտանիք: Մինչև դեկտ.-ի սկիզբները Հայաստանին անց-

---

[1]Նույն տեղում:

[2]«Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1918, թիվ 37 («Թուրքիա և Հայաստանի գաղթականները»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1918, թիվ 37 («Թուրքիոյ պատասխանը»):

նող ամբողջ հողամասը կը պարպուի»[1],- կարդում ենք թերթի էջերում հրապարակված այս փաստաթղթում:

1919 թվականի մարտի 20-ին «Ճակատամարտը» տպագրել էր Հայաստանի վարչապետ Հովհաննես Քաջազնունու հեռագիրն՝ ուղղված Թիֆլիսի Դաշնակից պետությունների զինվորական պետին, որտեղ բարձրացված էր Կարսի շրջանի գաղթականության՝ Արփաչայի ափին կանգ առնելու խնդիրը[2]: Նշվում էր, որ զորավար Ռտկկերի ստորագրած պայմանագրի համաձայն՝ Կարսի գաղթականությունը պետք է վերադառնար իր հայրենիքը, ուստի Հայաստանի բոլոր կողմերից Արփաչայի ափին էին կուտակվել գաղթականները[3]: «Մուտքը Կարսի շրջանը անկարելի ըլլալով, գաղթականները իրարու վրայ դիզուած կը մնան ու բառիս բուն նշանակութեամբ կը կոտորուին, քանի որ այդ շրջանի հացովն է, որ տաճիկ զօրքը 8 ամիս շարունակ սպրեր է, իսկ մնացածն ալ հետը տարեր է»[4],- գրում էր վարչապետ Քաջազնունին:

«Ճակատամարտը» ներկայացրել էր Հայաստանի Առաջին հանրապետության Խորհրդարանի նախագահ Ավետիս Սահակյանի՝ անգլիացի զորավար Բիչի հետ տեսակցության մանրամասները, մասնավորապես, թե ինչպես կարելի էր միջոցներ ձեռնարկել Կարսի շրջանի մոտ 80.000 հայ գաղթականների տեղավորման հարցերը լուծելու համար[5]: Թերթը տպագրել էր նաև Ավ. Սահակյանի դիմումը դաշնակից խորհրդարանների նախագահներին, որտեղ նրանց

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1919, թիվ 110 («Հայաստան և իր հոգերը»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

տեղեկացնում էր, թե ինչպես էին հայ գաղթականներն ու որբերը, երկրի ազգաբնակչության հետ, զոհ գնում Հայաստանում տիրող քաղցին ու բծավոր ժանտատենդի համաճարակին[1] (օրական մահանում էր ավելի քան 2000-3000 մարդ[2]):

«Սովն է թագավորում ամբողջ Հայաստանում...Կառավարութիւնը փող էլ չունի: Եւ այս աղէտին օգնելու փոխարէն մեզ միայն գաղթականներ են ուղարկում սովամահների թիւն աւելացնելու համար...Սուրմալուի շրջանում ուտում են դիակներ և աղբ: Սրանք փաստեր են»[3],- Թիֆլիսի «Հառաջ» թերթին տված հարցազրույցում հայտարարել էր Հայաստանի ներքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանը:

1919 թվականի մայիսին տպագրած վերլուծականներում «Ճակատամարտը» հուսադրում էր ընթերցողներին այն լուրերով, որ Հայաստանի Առաջին հանրապետությունում սովն սկսել էր կենտրոնից նահանջել դեպի ծայրագավառները, իսկ արևմտահայ գաղթականության մտահոգության կիզակետում առավելապես երկրի խորհրդարանական ընտրություններին գաղթականների մասնակցության և նրանց ներգաղթի կազմակերպման հարցերն էին[4]:

«Ներգաղթի խնդիրը կեանքի և մահուան խնդրի ձեւ է ստացեր թրքահայերու համար: Արևմտահայ փախստականը, որ 5 տարիներէ ի վեր թափառական, աստանդական, նպաստընկալ կերպով ապրեցաւ, մերթ գնաց իր հայրենիքը զայն շէնցնելու և մարած օճախը վերականգնելու

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում («Ուտում են դիակ և աղբ»):

[4]Նույն տեղում, 1919, թիվ 166 («Կյանքը Հայաստանի մեջ»):

յոյսով, մերթ յուսալքուած բռնեց նորէն գաղթի ճամբան, թողուց իր հուսկ ինչքն ու ստացուածքը, թողուց իր զաւակները յուճախ ճամբու եզերքին ու ետ եկաւ դէպի օտարութիւնը, այսօր այլեւս չի կրնար շարունակել նոյն վիճակը և կ'ուզէ ամեն գնով իր երկիրը վերադառնալ, բայց ճամբայ չկայ»[1],- գրում էր Հ. Մ. Մանուկյանը:

1919 թվականի հուլիսի 25-ի համարում Մ. Պետրոսյանն անդրադառնում էր Հայաստանի խորհրդարանի ընդունած այն բանաձևին, որը մասնավորապես վերաբերում էր Հայաստանի, Վրաստանի, Ատրպատականի սահմաններում ապաստանած փախստականների և Մոսուլի, Բաղդադի ու Հալեպի հայ գաղթականների և որբերի ներգաղթի խնդիրներին[2]: Հեղինակը գտնում էր, որ Էրզրում ապրող արևմտահայերը պարտավոր էին օժանդակել Հայաստանի կառավարությանը: Պարտավոր էին նաև կազմակերպել իրենց նախաձեռնությամբ ու միջոցներով Կ. Պոլսի և դրա շրջակայքի, ԱՄՆ-ի, Բուլղարիայի և Եգիպտոսի հայ գաղթականների ու որբերի ներգաղթը, ինչը նախատեսված չէր Հայաստանի խորհրդարանի ընդունած բանաձևով[3]:

«Դժբախտաբար ո՛չ համապատասխան կազմակեր- պութիւն կայ, ո՛չ ալ հիմնադրամ այդ նպատակին ծառայելու»[4],- փաստում էր Մ. Պետրոսյանը: Նրա կարծիքով՝ ներգաղթի և հայրենիքի վերածնության խնդիրները կապված էին Հայկական հարցի լուծման և Էրզրի գրավման հետ: Մ. Պետրոսյանը պնդում էր հետևյալը. «Մինչեւ որ Երկիրը

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1919, թիվ 215 («Արևմտահայերու ներգաղթը և խնամատարությունը»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

չգրաւուի, կորստաբեր է ներգաղթը: Ամեն ճիգ պէտք է թափել կասեցնելու տարերային շարժումը գաղթականներուն, որքան ալ անհանդուրժելի ըլլայ իրենց ներկայ վիճակը»[1]:

Ներգաղթը բարդ և գրեթե անիրականանալի գործընթաց էր, որը նախապատրաստական մեծ աշխատանք էր ենթադրում: Ըստ հոդվածագրի՝ աշխարհագրական դիրքի, փոխադրության և պարենավորման միջոցների դժվարությունը անհնարին էր դարձնում ներգաղթի ղեկավարումը մեկ կենտրոնի կողմից, ուստի անհրաժեշտ էր հիմնել Կ. Պոլսում ևս մեկ կենտրոն, որը պետք է «օժանդակէ Հայաստանի կառավարութեան և լրացնէ անոր գործը»[2]:

«Ճակատամարտի» հրապարակագիրներից Վահան Հարությունյանը պահանջում էր մշակել ներգաղթի հեռահար ծրագրեր[3]: «Անհրաժեշտ է, որ դէպի Հայաստան վերադառնալու սահմանուած հայութիւնը լրջօրէն պատրաստուի այդ մեծ ու կենսական գործին: Անհրաժեշտ է հոգ տանիլ, որպէսզի տարագրութեան ճամբաներուն վրայ ցրուած հայութիւնը չկորսուի կամ մեր այդ դժբաղդ եղբայրներէն մեզի աւանդ թողուած որբուկները ընդհանուրին զուրգուրանքին առարկայ դառնան»[4],- գրում էր հոդվածագիրը:

Ներգաղթի գործը պիտի սկսվեր հավաքաբար և արվեր որոշակի մեթոդով մշակված ծրագրով, որ հայության վերադարձը հայրենիք այս անգամ չլիներ որպես հալածանքի հետևանք կամ որպես անկազմակերպ ներխուժում,

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1919, թիվ 72 («Առաջին քայլերը. ներգաղթի միություններ»):

[4]Նույն տեղում:

կամ էլ որպես անստույգ վախճանով մի նոր տարագրություն[1]:

Վ. Հարությունյանի կարծիքով կազմվելիք ներգաղթի միությունները առաջին հերթին պիտի ունենային հողագործական ուղղվածություն, որ նպաստեին Հայաստանի տնտեսական վերազարթոնքին[2]:

Իբրև հավաքական ներգաղթի կազմակերպված մարմին պիտի հանդես գային նաև նորակազմ ներգաղթի արհեստավորական միությունները՝ նպատակ ունենալով Հայաստանի տարբեր վայրեր ուղարկել զանազան արհեստավորական խմբեր[3]: Անհրաժեշտ էր նույնպես կազմակերպել ներգաղթի մտավորական միություններ[4]:

Ներգաղթի միությունների գլխավոր նպատակներից մեկը պետք է լիներ իրենց մեջ հայության բոլոր կարող ուժերի միավորումը, նաև այն պետք է ներառեր նրանց՝ հայրենիք փոխադրելու գործառույթը[5]: Այդ միությունները պիտի իրենց ճյուղերն ունենային արտասահմանի հայկական գաղութներում, բացի այդ՝ պիտի սերտորեն համագործակցեին հայկական ու միջազգային Կարմիր խաչերի, նաև՝ հայրենակցական միությունների հետ[6]:

Գլխավոր ներգաղթից հետո ներգաղթի միությունները պիտի շարունակեին իրենց գործունեությունը մինչև այն ժամանակ, երբ հայրենիք բոլոր վերադարձողները կկարո-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

ղանային հարմարվել Հայաստանի կենսապայմաններին և կապրեին բնականոն կյանքով[1]:

1920 թվականի կեսերից գաղթականության և արևմտահայերի ներգաղթի խնդիրները մտան փակուղի: Դա պայմանավորված էր Հայաստանի Առաջին հանրապետության համար ստեղծված միջազգային անբարենպաստ աշխարհաքաղաքական հանգամանքներով: Այդ ամենի հետևանքով Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում մինչև 1920 թվականը դեռևս բնակվող հայությունն աստիճանաբար, մանավանդ 1923 թվականից հետո Թուրքիայում ընդունված օրենքների պատճառով, ստիպված լքեց բնօրրան հայրենիքը, իսկ շատ հայեր էլ կրոնափոխվեցին կամ թրքացան ու քրդացան[2]:

---

[1]Նույն տեղում:

[2]«Հայոց պատմություն», նշվ. աշխ., էջ 66:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՐԲԵՐԻ ԵՎ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ԹԵՐԹՈՒՄ

«Ճակատամարտի» հրապարակումները վկայում էին, որ 1919 թվականի մայիսին սովի դեմ պայքարող Հայաստանի Հանրապետությունն արտերկրից ստացած սննդամթերքն անխտիր բաժանում էր «թէ՛ տեղացի և թէ՛ գաղթական ժողովուրդին հաւասարապէս», ընդ որում, նշվում էր, որ գաղթականութիւնը «կը տուայտի թշուառութեան մէջ»[1]: Հայաստանին արտաքին տնտեսական օժանդակություն էր հատկացնում Ամերիկյան Նպաստամատույց ընկերությունը: Այն հանձն էր առել.

- հայ որբերի խնամատարությունը,
- հայ որբերի և գաղթականների համար արհեստանոցների կազմակերպումը,
- պարենավորման գործընթացը սննդամթերքի բաշխման աշխատանքը հանձնելով Հայաստանի Խնամատարության նախարարությանը, որը պետք է կատարեր նաև սերմացուի բաշխումը[2]:

Ամերիկյան Նպաստամատույց ընկերությունն ստանձնել էր 1500 հայ որբերի խնամատարության գործը[3]: Հայաստանում նշված ժամանակահատվածում հաշվառված էին 45.000-50.000 տեղաբնակ ու գաղթական որբեր, «որոնք կը

---

[1]«Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, թիվ 164 («Հայաստանի կացությունը»):
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:

կարոտին անմիջական խնամատարութեան»[1],- այս մասին տեղեկացնում էր Վաղարշակ Հոխիկյանը 1919 թվականի ապրիլի 6-ին Երևանից ուղարկած թղթակցության մեջ:

«Արևմտահայ որբերը Հայաստանի Հանրապետության մեջ» վերլուծական հոդվածում Հ. Բազրունին խորությամբ էր վերհանում հիմնախնդիրը՝ առկա իրավիճակի մասին տալով օբյեկտիվ պատկերացում՝ հիմնվելով թվային տվյալների վրա խարսխված փաստերի վրա[2]: Ըստ այդ դիտարկման՝ 1914 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած Բազրևանդի, 1915 թվականի հուլիսին Վասպուրականի և դրան հաջորդած նահանջները, 1918 թվականին թուրքական առաջխաղացման հետևանքով Վանի, Սարիղամիշի, Ալեքսանդրապոլի և Մեծ Ղարաքիլիսայի գրավումներն ու կոտորածներն առաջ բերեցին հայ որբերի հսկայական կուտակումներ, որոնց մեծ մասը հյուծվելով՝ ոչնչացավ, իսկ որոշ մասն էլ Հայաստանի կառավարության ու հանրային զանազան հիմնարկությունների և միությունների նախաձեռնությամբ պատսպարվեց որբանոցներում[3]:

1917 թվականի ամռանը, համաձայն «Եղբայրական օգնության» կազմակերպության Երևանի գլխավոր հանձնաժողովի կատարած ցուցակագրության, Կովկասում և տարբեր վայրերում գործում էր 68 որբանոց 6890 որբ-որբուհիներով[4]: Ստորև ներկայացնում ենք այդ ամենը՝ մասնավորեցված թվերով (ըստ 1917 թվականի տվյալների):

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1919, թիվ 161 («Արևմտահայ որբերը Հայաստանի Հանրապետության մեջ»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

Ալեքսանդրապոլում կար 10 որբանոց 818 որբերով,
Թիֆլիսում ,,, 7 ,,, 602 ,,,
Դիլիջանում ,,, 10 ,,, 707 ,,,
Էջմիածնում ,,, 11 ,,, 558 ,,,
Աշտարակում ,,, 11 ,,, 570 ,,,
Երևանում ,,, 8 ,,, 708 ,,,
Գալակ-Կոլոտցիում ,,, 6 ,,, 507 ,,,
Բաքվում ,,, 5 ,,, 260 ,,,
Դալաքիլիսայում ,,, 5 ,,, 283 ,,,
Նոր Բայազետում ,,, 4 ,,, 332 ,,,[1]:

Կարսում, Քանաքեռում, Ջալալ Օղլիում, Բաթումում, Սոխումում, Սանահինում, Ղուրլուղուլիում 1917 թվականին գործում էին մեկական որբանոցներ 1080 որբերով[2]:
Վերոհիշյալ 6890 որբերի հոգածությունը և խնամատարությունը հետևյալ կերպ էր բաշխված մի շարք ընկերությունների ու կազմակերպությունների վրա:

Կենտրոնական կոմիտե 42 որբանոց 3303 որբ,
Մոսկվայի Հայկ. կոմիտե 21 ,, 1225 ,,
Բաքվի Հայկ. կոմիտե 5 ,, 260 ,,
Պետրոգրադի Հայկ. կոմիտե 3 ,, 160 ,,
«Ծղբայրական օգնություն» 22 ,, 1555 ,,
Քահանաների միություն 2 ,, 107 ,,
Նպաստամատույց ընկեր. 2 ,, 210 ,,
Այլ հիմնարկություններ - ,, 70 ,,[3]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:

Այս որբերի սնունդը, հագուստը, սենյակներն ու դրանց կահավորանքը բավարար վիճակում էին, և նույնիսկ մահացածության ցուցանիշը հիշյալ որբանոցներում բավական ցածր էր[1]:

«Եղբայրական օգնության» Երևանի գլխավոր հանձնաժողովի և Էջմիածնի մասնաճյուղի, նաև Մոսկվայի կոմիտեի, Բարեգործական ընկերության ջանքերի շնորհիվ Երևանի, Էջմիածնի, Բաքվի ու Աշտարակի որբանոցների սաների համար կազմակերպվում էին դպրոցական պարապմունքներ որբանոցներում բացված դպրոցներում կամ դրանցից դուրս գործող ցերեկային դպրոցներին կից[2]:

Հ. Բագրունին, ի պատիվ մի շարք որբանոցների վարիչների, հիշատակում էր այն փաստը, որ Երևանի, Աշտարակի, Բաքվի և Դիլիջանի որբանոցներում բացվել էին արհեստանոցներ[3]: Դրանցում որբերի կողմից պատրաստվում էին ամեն տեսակի առարկաներ ու գործիքներ, որոնց շուկայական վաճառքից եկամուտ էին ստանում որբանոցները[4]:

Հոդվածագիր Հ. Բագրունու հաղորդած տեղեկատվության համաձայն Հայաստանի Առաջին հանրապետության կառավարությունն որբերի խնամատարության նախնական ծախսերի համար հատկացրել էր յուրաքանչյուր որբի համար ամսական 15 ռուբլի, իսկ մնացյալ կարիքների համար գումարը հատուցվում էր հանրային կազմակերպությունների ջանքերով այնքան ժամանակ, մինչև որ մեծահասակ որբերի խնամատարության գործն ստանձնեց Արևմտահայ

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

խորհուրդը, իսկ որբանոցային գաղութներ հիմնելու գործն իրենց վրա վերցրեցին Մոսկվայի Հայկական կոմիտեն և Բարեգործական ընկերությունը: Վերջին 2 կազմակերպությունները 2000-ից ավելի որբեր էին կենտրոնացրել Ջալալ Օղլիի որբանոցում[1]:

«Իրերու բերումով Արեւմտահայ խորհուրդը իր վրայ դրուած յոյսերը չկրցաւ արդարացնել, միւս կողմէ Երեւանի մէջ իր օրինակելի գործունէութեամբ երեւան եկաւ Ամերիկեան Նպաստամատոյց ընկերութիւնը, որու բացած որբանոցները մինչ այդ եղածները գերազանցած են»,- գրում էր Հ.Բագրունին[2]: Նա հիշատակում էր հետևյալ պատմական իրադարձությունները, որոնք նպաստեցին ցեղասպանությունից փրկված հայ որբերի ոչնչացմանը. 1917-1918 թվականների ձմռանը թուրքական առաջխաղացման հետևանքով թուրքական զորքի և թուրք-թաթարական հրոսակային խմբերի կողմից «հայ որբն ու որբուհին խժդժօրէն բռնաբարուեցան և սպաննուեցան, և այդ վիճակը մասնաւորապէս այն վայրերուն մէջ, ուր թուրք զինուորն ու խուժանը հայ դիմադրութեան չհանդիպեցան»[3]:

Հայաստանի Առաջին հանրապետության հիմնումից հետո հունիս ամսին այնտեղ գործում էր 35 որբանոց 2250 որբով, իսկ Վրաստանում՝ 27 որբանոց 1950 որբով[4]: Երևանում և Էջմիածնում նոր հավաքված որբերի թիվը 2600 էր, ընդ որում՝ այդ որբերը հավաքվել էին 1918 թվականին Հայաստանում ստեղծված հայ փախստականական կազմա-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

կերպության գլխավոր խորհրդի ջանքերով[1]: Նյութական անձուկ կացության պատճառով, սակայն, այդ կազմակերպությունն ի վիճակի չէր շարունակելու որբախնամ գործը սեփական նախաձեռնությամբ և միջոցներով: Նույն պատճառներով որբախնամ գործունեության սահմանները չէին կարողացել ընդարձակել «Եղբայրական օգնությունն» ու Մոսկվայի Հայկական կոմիտեն, ուստի հայոց նորակազմ պետությունն ինքն էր ստանձնել հայ որբերի խնամատարությունը[2]:

Հայաստանի խորհրդարանը հատուկ օրենքով որբանոցային գործը հանձնել էր Խնամատարական նախարարությանը և սկսած 1918 թվականի հոկտեմբերից՝ 3 ամսվա համար 7,5 միլիոն գումար էր տրամադրել պետական այդ կառույցին 10.000 որբի հաշվարկով՝ յուրաքանչյուր որբի համար նկատի ունենալով 150-ական ռուբլի[3]: Խնամատարական նախարարությունը 1918 թվականի հոկտեմբերից մինչև 1919 թվականի մարտ ամիսը կարողացել էր 41 նոր ապաստարանների մեջ հավաքել 11.500 որբի[4]:

Համաձայն Խնամատարական նախարարության որբանոցային բաժնի վարիչներից պարոն Վանիուշի ներկայացրած վիճակագրական տվյալների՝ մինչև 1919 թ. մարտի վերջը Հայաստանի սահմաններում կար 76 որբանոց: Ըստ այդմ՝

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

Երևանում կար 25 որբանոց 3882 որբով,

Էջմիածնում	„ 7 „ 1758 „
Աշտարակում	„ 8 „ 687 „
Դիլիջանում	„ 4 „ 537 „
Գարաչիչակում	„ 4 „ 367 „
Նոր Բայազետում	„ 3 „ 293 „
Քանաքեռում	„ 1 „ 658 „
Ղարաքիլիսայում	„ 2 „ 208 „
Ալեքսանդրապոլում	„ 6 „ 988 „
Ղամարլուում	„ 4 „ 610 „
Իգդիրում	„ 3 „ 578 „
Ղուտուղուլիում	„ 2 „ 220 „
Քարվանսարայում	„ 2 „ 220 „
Բերդում	„ 1 „ 100 „
Սևքարում	„ 1 „ 75 „
Քեշիշքենդում	„ 1 „ 50 „
Մայրգարայում	„ 1 „ 100 „
Իմանշալուում	„ 1 „ 150 „:
	„76 „ 11.581 „[1]:

Վերոհիշյալ 11.581 որբերը բաշխվել էին հետևյալ հաստատությունների և կազմակերպությունների հիմնած որբանոցներում.

պետությանը պատկանող 28 որբանոց	5537 որբով
Երևանի «Եղբայր. օգն.»	4„ 387„
Էջմիածնի «Եղբայր. օգն.»	2„ 255„
Մոսկվայի Հայկ. կոմիտե	9„ 828 „

[1]Նույն տեղում:

Բարեգործ. ընկերություն	4 „ 691 „
Իջևանի ինքնավարություն	4 „ 395 „
Ամերիկյան կոմիտե	8 „ 836 „
Երևանի ինքնավարություն	3 „ 799 „
Ալեքսանդրապոլի ինքնավար.	6 „ 988 „
Հայ ժողովրդ. կուս.	1 „ 143 „
Սամարցևի անվ. ընկեր.	1 „ 50 „[1]:

Հայ որբերը 1-15 և երբեմն 16-17 տարեկան էին: Նրանք ստորաբաժանված էին ըստ հետևյալ 3 կարգի՝

- ծնողազուրկ,
- միայն հայր կամ միայն մայր ունեցող,
- հայր և մայր ունեցող[2]:

«Ամբողջ որբերու 75 առ 100-ը կը կազմեն արեւմտահայեր, իսկ 25 առ 100-ը՝ տեղացիներ, որոնք նոյնպէս ենթարկուեցան նահանջի ու տեղահանութեան և անձամբ կրեցին այն ամենը, ինչ որ Էնվէր-Թալէաթի կառավարութիւնը նիւթած էր տաճկահայ ժողովուրդին համար»[3],- գրում էր Հ. Բագրունին վերոհիշյալ հոդվածում: Նա նաև տեղեկացնում էր, որ 1919 թվականին գործող որբանոցներին զուգահեռ՝ Հայաստանի Խնամատարական նախարարության որբանոցային բաժանմունքի վարչությունը նախատեսել էր բացել որբանոցներ Նոր Բայազետում, Դավալուի, Հալալ-Օղլուի և Կծալինի շրջաններում[4]: Հոդվածագիրը նշում էր, որ 1919

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

թվականին հիվանդանոց-որբանոցներ էին գործում ներքո-հիշյալ վայրերում[1]:

Երևանում 3 որբ.-հիվանդանոց 550 մահճակալով,
Էջմիածնում 1 ,, 150 ,,
Քանաքեռում 1 ,, 80 ,,
Գարաչիչակում 1 ,, 30 ,,
Դիլիջանում 1 ,, 30 ,,[2]:

Հիվանդանոց-որբանոցները գործում էին պետության և մի շարք կազմակերպությունների ջանքերով: Ըստ այդմ գործում էին՝

պետական 3 հիվ.-որբ. 523 որբի համար
Մոսկվայի Հայկ. կոմիտեի 1 ,, 80 ,, ,,
Բժշկական ընկերության 1 ,, 39 ,, ,,
Բարեգործ. ընկերության 1 ,, 30 ,, ,,[3]:

Մտադրվել էին հիվանդանոց-որբանոցներ բացել Ալեքսանդրապոլում, Մեծ Ղարաքիլիսայում, Ղամարլուում, Իգդիրում և բոլոր այն վայրերում, որոնցում դրանց կարիքը կար[4]:
«Ճակատամարտի» հրապարակած տվյալների համաձայն՝ 1919 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում մահացել էր 800 որբ՝ գլխավորապես փողոցներից հավաքված հյուծված երեխաներ[5]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:

Թերթի կարծիքով՝ հայաստանյան որբանոցներում սնունդը կարելի էր բավարար համարել: Յուրաքանչյուր որբի օրական տրվում էր ¾ ֆունտ հաց, կես ֆունտ միս, ¼ ֆունտ բրինձ, ¼ ֆունտ գետնախնձոր, իսկ երեկոյան ու առավոտյան՝ չամիչով կամ խոշաբով թեյ՝ հաճախ ցամաք հացի հետ[1]:

1919 թվականի մայիս ամսվա տվյալներով՝ պետական կարգավիճակ ունեցող որբանոցներում չէին անցկացվում դպրոցական պարապմունքներ[2]: «Պետութիւնը իր այդ աշխատանքին մէջ դեռ լիովին ի վիճակի չէ եղած փողոցներու մէջ թափառող եւ հիւծուած ու մեռնելու դատապարտուած որբերը հաւաքելու: Կ'ենթադրուի, որ բոլոր որբերը պիտի հաւաքուին ու 11 հազար թիւը 15-18 հազարի պիտի բարձրանայ, հաշուելով այդ թիւին մէջ նաեւ 5000 հիւծուածներն ու հիւանդները, որոնց բոլորին վրայ պետութիւնը ամսական 9 միլիոնի պիւտճէ մը կ'ունենայ կամ տարեկան 115 միլիոն՝ սնունդի եւ 10 միլիոն միանուագ գումար մըն ալ հագուստի ու կահաւորութեան»[3],- իր վերլուծությունն այսպիսի լավատեսական վերջաբանով էր ավարտում Հ. Բագրունին[4]:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել հետևյալը:

- 1918-1920 թվականներին Կ.Պոլսի «Ճակատամարտը», անդրադառնալով հայ որբերի և գաղթականների հիմնախնդիրներին, փորձել էր լուսաբանել դրանց լուծման ուղղությամբ հայկական ու միջազգային կառույցների կողմից կատարվող աշխատանքները թե՛

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

Հայաստանի Առաջին հանրապետությունում, թե՛ Թուրքիայի մայրաքաղաքում, թե՛ այլ երկրներում,

- թերթը ներկայացրել էր տարբեր առաջարկներ, որոնք, իրենց խորքի մեջ, հենվում էին այդ խնդիրների պատճառների քաջ գիտակցության և խորը ուսումնասիրության վրա:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԵՐԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՍՆԵՐՈՒՄ

Հայաստանը խորհրդայնացվելուց հետո երկրի իշխանություններն սկզբնական շրջանում դժվարանում էին կարգավորել գաղթականների ու որբերի հիմնախնդիրները: Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը 1920 թվականի դեկտեմբերին այդ նպատակով որոշում է համագործակցել Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի հայաստանյան կառույցի հետ՝ հաշվի առնելով նախկինում նրանց կողմից հանուն հայ գաղթականների կատարած լայնածավալ օգնությունը և որբախնամ ու տարագրյալների համար իրագործված արդյունավետ ծրագրերը: Բացի այդ՝ 1920 թվականի դեկտեմբերին Ամերկոմի խնամքի տակ էին գտնվում 18.500 հայ որբեր, որոնք տեղաբաշխված էին 3 քաղաքում՝ Երևանում (2500 որբ), Ալեքսանդրապոլում (9000 որբ) և Կարսում (7000 որբ)[1]:

1921 թվականի սկզբին Խորհրդային Հայաստանում գործունեություն ծավալող Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ բավական ծանր էր այդտեղ գտնվող գաղթականների և որբերի դրությունը[2]:

1921 թվականի ամռան սկզբին Խորհրդային Հայաստանում տեղակայված էր ավելի քան 25.000 որբ: Ընդ որում,

---

[1]ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 328, թ. 15:
[2]ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 22, թ. 13:

նրանց հիմնական մասը համախմբված էր Ալեքսանդրապոլում կամ Որբերի քաղաքում (այն օրերին այդպես էին անվանում Ալեքսանդրապոլը[1]):

1922 թվականին ահա թե ինչ էր գրում «Ճակատամարտն» արևմտահայ գաղթականների հիմնախնդիրների մասին:

«Դեռ երեկ Պաթումէն կը հասնէր դժնդակ լուր մը: Նահր էլ Օմարի գաղթականներու երկրորդ կարաւանը ծովուն վրայ մնացեր է, որովհետեւ, կ'ըսեն, տեղ չկայ ոչ Հայաստանի, ոչ ալ Վրաստանի մէջ: Այս հալածական բազմութիւնը մէկ մասն է այն ժողովուրդին, որ Միջագետք առաջնորդուեցաւ Վանի նահանջէն յետոյ և քանի մը տեսակ տեղափոխութիւններ կրեց արդէն: Չմոռնանք, որ հարիւրաւորներ ալ կորսուեցան, իբր հետեւանք ծանր զրկանքներու: Աւելի քան մէկ տարիէ ի վեր կար զանոնք Հայաստան փոխադրելու խնդիրը: Վերջապէս երկու անգամով ճամբայ հանուեցան վեց հազար հոգի, իսկ միւսները մինչեւ գարուն պիտի մնան:

Եւ այս մասնաւոր պարագայ մըն է միայն: Տակաւին տասնեակ հազարաւորներ կան անստոյգ վիճակի մէջ: Իսկ անոնք, որ կրցած են Հայաստան մտնել, շարժուելու հնարաւորութիւն անգամ չունին, այնքան որ խոնուած ու սեղմուած են: Միայն Ամերիկեան Նպաստամատոյցը 50.000 գաղթական կը խնամէ, առանց հաշուելու որբերը: Հայկական կտրատուած, թեւատ հանրապետութեան մէջ բաւարար հող չկայ տեղաւորելու համար արմատախիլ բազմութիւնները: Քիչ մըն ալ, եւ երկրին մէջ գտնուած բնակ-

---

[1]Ավետիսյան Ս., նշվ. աշխ., էջ 154:

չութիւնը հեղձամահ պիտի ըլլայ, եթէ կարենայ իսկ տոկալ ցուրտին եւ սովին»[1]:

1923 թվականի հունվարին Ամերկոմի հովանավորությունից օգտվող որբանոցների խնամակալությանն էին դեռևս հանձնված 1-17 տարեկան 21.836 որբեր[2]:

1924 թվականին Ամերկոմի հոգածությանը հանձնված որբանոցների չափահաս որբերի թիվն ավելի քան 8275 էր, իսկ նույն ժամանակահատվածում պետական որբանոցներում ընդգրկված էր չափահաս 816 որբ[3]: 1925 թվականին որբերի թիվը նվազել և հասել էր 10.000-ի[4]: Խորհրդային Հայաստանի համապատասխան մարմինները նույն թվականի փետրվարին Ամերկոմի հետ կնքված համաձայնագրով այլևս իրենց հսկողության տակ էին վերցնում հիշյալ որբանոցների կրթադաստիարակչական գործառույթները[5]:

Խորհրդային Հայաստանի Լուսժողկոմատում ստեղծվել էր որբերի հարցերով զբաղվող հատուկ հանձնաժողով, որը 1924 թվականին պատրաստած տեղեկագրում վերլուծել էր երկրում գտնվող որբերի հիմնախնդիրները՝ առաջարկելով չափահաս որբերին ոչ այնքան արհեստներ սովորեցնել (քանի որ արհեստավորների պահանջարկ այն օրերին չկար), որքան որ ավելի ձգտել նրանց կապել գյուղական կյանքին՝ հնարավորություն տալով զբաղվել հողագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծութ-

---

[1]«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1922, թիվ 2784 («Պետք է պարտաղրել, որ պարպեն»):

[2]Ավետիսյան Ս., նշվ. աշխ., էջ 163:

[3]Նույն տեղում, էջ 169:

[4]«Խորհրդային Հայաստան-1920-1925», Ե., 1926, էջ 292:

[5]Մելիքսեթյան Հ., «Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան», Ե., 1975, էջ 98:

յամբ, ծխախոտագործությամբ, բրնձի և այլ մշակաբույսերի աճեցմամբ[1]:

1923-1926 թվականներին Խորհրդային Հայաստանում աշխատանքի էր տեղավորվել 15.000 չափահաս որբ, որոնք, պետության կողմից ստանալով ֆինանսական աջակցություն, հաստատվում էին գյուղերում, աշխատում քաղաքներում գտնվող գործարաններում և արհեստանոցներում[2]:

Այսպիսով՝ «Ճակատամարտ» օրաթերթը Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից գաղթականների ու որբերի տեղավորման, ուսման, կեցության, աշխատանքով ապահովման և կենցաղային այլ հարցերի լուծման նպատակով իրականացվող ծրագրերի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի հետ համագործակցության վերաբերյալ իր ընթերցողներին տեղեկություն էր տալիս խորհրդահայ մամուլից արված արտատպումների միջոցով: Դրանք, բնականաբար, միակուսակցական ամբողջատիրական կառավարման համակարգով երկրին բնորոշ սուբյեկտիվ տեսանկյունից էին լուսաբանում կամ վերլուծում ցանկացած և մասնավորապես տվյալ ոլորտին առնչվող հիմնախնդիրները: Պարզ է, որ օրաթերթի լսարանն օբյեկտիվ պատկերացում չէր կարող կազմել արևմտահայ տարագրյալներին մտահոգող էական հարցերի վերաբերյալ:

---

[1] ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 339, թթ. 73 և 75:

[2] Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 100:

ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԵՎ ՈՐԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» 1922-1923 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1922-1923 թվականների ընթացքում էր հիմնականում «Ճակատամարտն» անդրադարձել հայ գաղթականների ու որբերի ճակատագրին առնչվող տարաբնույթ հիմնախնդիրներին բազմակողմանի կտրվածքով: Մի կողմից՝ լուրեր էր տպագրել կամ արտատպել հայկական մամուլից, մյուս կողմից՝ վերլուծական հոդվածներով էր հանդես եկել՝ դրանցում ներկայացնելով վիճակագրական տվյալներ և առցիարցման հարցախույզների արդյունքներ: Արտահայտել էր մասնավորապես խմբագրակազմի տեսակետները հիշյալ հիմնահարցերի վերաբերյալ: Ստորև ասվածը կփորձենք հիմնավորել թերթի հրապարակումներով:

Այս ժամանակահատվածում թերթը ներկայացրել էր նաև 1922-1923 թվականներին արևմտահայերի ցիրուցան լինելու և նրանց գույքը բռնազավթելու մասին տեղեկատվություն: Օրինակ՝ «Միջագետքի գաղթականները կուգան» լուրից տեղեկանում ենք. «Միջագետք գտնուող և Պաղդուպայէն Նահր էլ Օմար փոխադրուած հայ գաղթականներուն երրորդ խումբը բաղկացած 1200 հոգիէ, մեկներ է Պասրայէն: Ասոնց հետ կը գտնուին նաեւ Նահր էլ Օմարի 800 որբերը, որոնք Երուսաղէմ կը փոխադրուին»[1]: Իսկ «Հայերուն գույքերը քյուրտերուն» լուրը իրազեկում էր. «Այն յանձնաժողովը, որ կը զբաղէր արեւելեան նահանգներու գործով, իր երէկուան նիստին մէջ

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2808 («Միջագետքի գաղթականները կուգան»):

խնդրոյ առարկայ ըրաւ հետեւեալ հարցերը.- դպրոց մը բանալ, լքեալ գոյքերը բաժնել քիւրտերուն»[1]:

«Արդեն տեր եղան» վերլուծական հոդվածում «Ճակատամարտն» անդրադարձել էր 1922 թվականի ապրիլի 30-ին Թուրքիայի Ազգային ժողովի ընդունած այն օրենքին, որի համաձայն «աճուրդով պիտի ծախուին թշնամիին գրաւումէն ազատուած վայրերու փախստականներուն շարժուն ստացուածքները, իսկ անշարժ կալուածներն ու ցանքերը պիտի մատակարարուին կառավարութեան կողմէ, և, ծախքերը զեղչուելէ յետոյ, հասոյթը պիտի յանձնուի ելմտական սնտուկներուն»[2]: Այս նոր օրենքը պիտի գործադրվեր նաև «պատերազմական և քաղաքական պատճառներով փախած կամ բացակայ անձերու համար»[3]:

Այս օրենքը, թերթի կարծիքով, գլխավորապես վերաբերում էր Կիլիկիայի շրջանին, որտեղից հայերը, հույները փախել էին, երբ տեսել էին, որ «թուրքական մահիկը կը վերահաստատուի ֆրանսիական եռագոյնին տեղ»[4]: «Ճակատամարտը» գրում էր, որ, առանց այս օրենքի ընդունման էլ, բոլորը գիտեին, թե ինչ էր տեղի ունեցել Կիլիկիայում ու արևմտահայ գավառներում կամ «թշնամիին գրաւումէն ազատուած» ուրիշ վայրերում. «1915-1916ի սարսափներու շրջանին, բոլորս ալ գիտէինք, թէ ի՛նչ եղած են տեղահան և անհետ կորած մէկ միլիոն հայրենակիցներու գոյքերն ու կալուածները: Բայց, որովհետեւ Թուրքիոյ մէջ ամեն ինչ օրէնքով կ՚ընթանայ, Իթթիհատը հրատարակեց Լքեալ գոյքերու (Էմվալը մեթրուքէ) օրէնքը, իսկ միլլի կառավարութիւնը կը հանէ ուրիշ մը: Նոր օրէնքին

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2808 («Հայերուն գոյքերը քյուրտերուն»):

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2873 («Արդեն տեր եղան»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

անունը չգիտենք, բայց բովանդակությունը և նպատակը ամեն բան կը բացատրեն»[1]:

Թերթը վկայում էր, որ Կիլիկիայի դատարկվելուց շատ առաջ միլլի կառավարության տեղական ներկայացուցիչները թուրք ազգաբնակչությանը կոչ էին անում քրիստոնյաներից չգնել որևէ բան անգամ «հարիւրին յիսուն զեղչով, քանի որ ամեն բան մեզի պիտի մնայ»[2]: Հիշատակում էր, թե ինչպես էին Մարաշից գաղթող հայերի ունեցվածքը բռնագրավել թուրքերն ու քրդերը՝ երբեմն դրա դիմաց վճարելով «100ին 15ը, այն ալ ճամբան կողոպտուելու համար»[3]:

Իր այս վերլուծությամբ թերթը հանգում էր հետևյալ եզրակացության: Այս նոր օրենքի ընդունումը հայերին չէր զարմացրել, քանի որ եկել էր նվիրագործելու արդեն կատարված իրողությունը՝ ապացուցելով միլլի կառավարության «պետական ըմբռնումը», թեև արտաքին աշխարհը, կարդալով այս օրենքը, այն համապատասխան էր համարելու «տրուած երաշխաւորութիւններուն հետ»[4]: Թերթը փաստում էր, որ թուրքական իշխանությունները, թեև տիրացել էին հայ գաղթականների գույքին, բայց չէին կարողանալու տեր դառնալ նրանց ճակատագրին ու սեփական երկրում ապրելու նրանց բնական ու բացարձակ իրավունքին[5]:

«Ճակատամարտի» էջերում Սեբաստիայից նույնաբովանդակ լուր կար այն մասին, որ «տէրերը անյայտ մնացած հայոց շարժուն և անշարժ կալուածները սկսած են ծախել կառավարութեան միջոցաւ, իսկ ձեռք բերուած գումարները կը յանձ-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:

նուին պետական սնտուկին: Հակառակ անոր, որ կառավարութիւնը գիտէ, թէ այդ կալուածներուն տէրերը ուրիշ վայրեր կը գտնուին, վաճառումը կը շարունակուի»[1]:

«Տեր և տիրական» հոդվածում թերթն ընդվզում էր միլլի կառավարության այն քաղաքականության դեմ, որով վերջինը բացարձակ տեր և տիրակալ էր դարձել արևմտահայ գավառում կամ «Անատոլուի մէջ գտնուած հողին ու քարին, մարդուն և անասունին»[2]: Բացի փախստականների և գաղթականների շարժական ու անշարժ գույքն առգրավելու կամ վաճառելու մասին ապրիլի 30-ի վերոհիշյալ օրենքից՝ Էնկյուրիի կառավարությունն իր հերթին քանդված վանքերի հողերն ու կալվածքները գրավելու հրաման էր արձակել:

«Ինչ որ վանքապատկան կամ եկեղեցապատկան կալուած կը կոչենք, ուրիշ բան չէ, եթէ ոչ հայ ժողովուրդին անբռնաբարելի սեփականութիւնը: Այս երկրին մէջ դարերէ ի վեր սովորութիւն եղած է ազգային հարստութիւնները արձանագրել վանքերու կամ եկեղեցիներու անուններով: Կառավարութիւնը շատ լաւ գիտէ այս պարագան: Գիտէ նաեւ, որ ամբողջ դաշտեր և գիւղեր կապուած էին զանազան վանքերու՝ յատուկ ֆերմաններով և հեօճէթներով:

Իբրեւ հետեւանք հայաջինջ սարսափներուն, այսօր Անատոլուի մէջ հայկական իրաւասու մարմիններ չկան: Չկայ նաեւ համախումբ ժողովուրդ: Անիսնայ քանդուած են վանք և եկեղեցի, դպրոց թէ որբանոց: Բայց այս բոլորը բաւարա՞ն են, հաստատելու համար, թէ այդ հողերն ու կալուածները տէր չունին, ժառանգորդ չունին, հետեւաբար պէտք է մահիլիլ համարուին:

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2876 («Հայկական կյանք»):

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2885 («Տեր և տիրական»):

Ո՛ղջ է այդ հարստութեանց բուն տէրը՝ հայ ժողովուրդը: Եւ քանի հնարաւորութիւն չկայ այդ իրաւունքները պաշտպանելու, քանի ամեն խնդիր առկախ կը մնայ Հայերուն և Թուրքերուն միջեւ, պարզ աւազակութիւն է բռնագրաւել լքուած սեփականութիւնները»[1],- գրում էր «Ճակատամարտը»:

«Ճակատամարտը» 1922-1923 թվականներին նույնպես պատկերացում էր տվել հայ զաղթականների և որբերի համար իրականացված տարաբնույթ ծրագրերի, նյութական աջակցության ու բարեսիրական աշխատանքների մասին: Այս գործընթացում աչքի էին ընկնում Ամերիկյան Նպաստամատույցը, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, հայկական զաղթօջախները և անհատ բարերարները:

«Հայկական կյանք» բաժնում, օրինակ, «Հայաստանի և Կիլիկիո համար» նյութում նշվում էր, թե Ամերիկյան Նպաստամատույց մարմնի կենտրոնը պատրիարքարանին տեղեկացրել էր, որ 1922 թվականի դեկտեմբերի 23-ին Բաթում էր ուղարկել 3330 պարկ ալյուր՝ Հայաստանի (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի) կարոտյալներին բաժանելու նպատակով[2]: Այդ ալյուրը ձեռք էր բերվել հայկական սփյուռքի ջանքերով (Կահիրեի հայ համայնքը 1000 անգլիական ոսկիով գնել էր 937 պարկ ալյուր, Ալեքսանդրիայի հայ համայնքը 500 անգլիական ոսկիով՝ 496, Փարիզի հայ համայնքը 100.000 ֆրանկով՝ 1737, Ֆիլիպեի հայերը 1279 օսմանյան ոսկիով՝ 168 պարկ ալյուր)[3]: Կոնկրետ Բուլղարիայի Ազգային միության Կենտրոնական վարչությունը 100000 լևից ավել գումար էր

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2781 («Հայաստանի և Կիլիկիո համար»):

[3]Նույն տեղում:

հասկացրել՝ Հայաստանի տվյալների համար պարեն գնելու նպատակով[1]:

Օրսաթերթի մեկ այլ՝ «Հայաստանի թշվառ վիճակը» վերնագրով նյութն իրականում վավերագիր փաստաթուղթ կարելի է համարել[2]: Այստեղ ներկայացված էր 1922 թվականի փետրվարի 18-ին Ամերիկյան Նպաստամատույցի տարածած տեղեկագիրը[3]: Դրա տրամադրած տվյալները մտահոգիչ էին: Գրված էր հետևյալը:

«Սովահար շրջաններու բնակչութեան հոգեկան և ֆիզիքական տատապանքը կարենալ ըմբռնելու համար մարդ պէտք է այցելէ այս շրջաններէն մէկն ու մէկը:

Երեւանի շրջականերուն մէջ հասարակ բան մըն է տեսնել երախաներ, որոնք ցեխերու մէջէն խնձորի կեղեւներ կը ժողվեն, փոքրիկ տղաք ու աղջիկներ, որոնք կը պառկին աղտոտ ախոռներու մէջ, իբրեւ վերմակ գործածելով հողն ու յարդը, և գիւղացիներ, որոնք, ձգած իրենց տուները, կը դիմեն դէպի քաղաքները և երբ կը հասնին, կը հասկնան, թէ այնտեղ ալ ուտելիք բան մը չկայ:

Այս շրջաններէն ամեն օր հասնող որբերը պատսպարելու համար անհրաժեշտ պէտք ունինք ուրիշ շէնքերու:

Հիմա ունինք 25 շէնքեր, բայց աւելին գտնել կարելի չէ:

Մեր որբանոցները ամենքն ալ լեցուած են: Ասկէ զատ՝ 1000ի չափ երախաներ կը սնանին սննդատու կայաններու մէջ:

Քանի մը որբ աւելի պատսպարելու համար ստիպուած ենք փսիաթներու վրայ պառկեցնել որբերէն ոմանք:

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2818 («Հայաստանի թշվառ վիճակը»):

[3]Նույն տեղում:

Քանի մը օր առաջ մեր թոքախտաւոր որբերէն մէկ քանին ղրկուեցան լերան մը վրայ գտնուող հիւծախտաւորներու հիւանդանոցը: Ասոնց տեղը լեցնելու համար փողոցներէն ներս առնուեցան 10 որբեր: Ասոնք այնչափ նիհար էին, որ հազիւ կրնային քալել: Իրենցմէ մէկը հետեւեալ օրն իսկ մեռաւ:

Փողոցներէն հաւաքուած որբերը առհասարակ կը տառապին մորթային հիւանդութիւններէ:

Կառավարութիւնն ալ իր սեփական միջոցներով կը պահէ կարգ մը որբանոցներ:

Նպաստամատոյցը պէտք է բանայ շատ մը նոր որբանոցներ՝ ստոյգ մահուան դատապարտուած հազարաւոր երախաները ազատելու համար:

Փետր.18. Ղօլընտ»[1]:

Հայաստանում տիրող ծանր պայմաններում ամերիկյան այդ բարեսիրական կառույցը շարունակում էր իր աշխատանքը՝ հայ որբերի և գաղթականների կենսապայմանները գոնե տանելի դարձնելու համար: «Հայկական կյանք» բաժնում «Հայաստանի ամենեն մաքուր քաղաքը» թղթակցության մեջ մեջբերում էր արվում Ամերիկյան Նպաստամատույցի հունիսի 17-ի տեղեկագրից, որտեղ այդ կազմակերպության Կովկասյան շրջանի ընդհանուր մատակարար Մաք Նեպը գրում էր, թե Ղարաքիլիսան արագ տեմպերով դառնում էր Հայաստանի մաքուր քաղաքը գաղթական կանանց աշխատանքի շնորհիվ[2]:

Ցեղասպանությունը վերապրած գաղթականների համար Նպաստամատույցը հիմնել էր «Ճերմակ թևի ընկերակցությունը», որի կին անդամները պատասխանատու էին փողոց-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2918 («Հայաստանի ամենեն մաքուր քաղաքը»):

ների, գաղթականական կայանների մաքրության համար[1]: «Քաղաքը կովկասեան շրջանի ամենէն մաքուր քաղաքներէն մէկը ըլլալու վրայ է: Կիները ծառեր կը տնկեն, պարտէզներ կը մշակեն և կը հաւաքուին ծրագիրներ ուսումնասիրելու համար: Մինչ այսպէս կիները քաղաքը կը մաքրեն, այրերն ալ ջուրի ճամբաները, կոյուղիները, աղբիւրները, տուներն ու փողոցները կը նորոգեն Նպաստամատոյցի առաջնորդութեամբ»[2],- գրում էր Մաք Նեպը:

«Կյանքը Հայաստանի մեջ» բաժնում «Ձավարը կանցնի դրամի տեղ» թղթակցության մեջ տեղեկացվում էր, որ ըստ Ամերիկյան Նպաստամատոյցի հարյուրապետ Եարոյի կարծիքի՝ «ամերիկեան ցորենէ շինուած ձաւարը այսօր մեծագոյն ուժն է Կովկասի շրջանին մէջ»[3]: «Սովահար շրջանի մը մէջ սնունդը ամենէն ընթացիկ դրամարժէքն է: Ամերիկեան ցորենին մէկ ֆունտը կ'արժէ աւելի քան մէկ տսկառ լեցուն թղթադրամ»[4],- պնդում էր Եարոն:

Այդ թղթակցության մեջ ասվում էր նաև, որ Ամերիկյան Նպաստամատոյցը Հայաստանի ճանապարհների շինարարության, քաղաքների մաքրության և գյուղական աշխատանքներում ներգրավել էր 129.000 գաղթականի, որոնցից յուրաքանչյուրին ամսական վճարում էր 10 ֆունտ ձավար[5]:

Երևանի ու Ալեքսանդրապոլի ոռոգման աշխատանքներն իրականացնողների շարքում էին նաև 10.000 գաղթական[6]: Նրանց և այս գործում ընդգրկված մնացած աշխատավորնե-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 2935 («Ձավարը կանցնի դրամի տեղ»):

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

[6]Նույն տեղում:

ին Ամերիկյան Նպաստամատույցը հատկացրել էր 400 տոննա ձավար[1]:

«Նպաստի բաշխումը Հայաստանի մեջ» թղթակցության մեջ ներկայացվում էր Հայաստանում և Վրաստանում Ամերիկյան Նպաստամատույց կազմակերպության նպաստների բաշխման վերահսկիչ տիկին Նեթթի Հոլ Օսթինի հայտարարությունը, որը նա արել էր 1922 թվականի հունիսին, Բոստոն վերադառնալուց հետո[2]: «Միայն Կովկասի մէջ 68.000 հայ մանուկներ ազատեցան մահէն շնորհիւ ամերիկեան նպաստին և այսօր կը խնամուին մեր որբանոցներուն մէջ: Անոնց կը տրուի դաստիարակութիւն մը, որուն նպատակն է դարձնել զանոնք ոչ միայն ինքնաբաւ, անկախ, այլեւ՝ իրենց հայրենիքին վերաշինութեան սատարող տարրեր»[3],- ասված էր տիկին Օսթինի հայտարարության մեջ:

Բացի այդ՝ Ամերիկյան Նպաստամատույցի Մասաչուսեցի մասնաճյուղը 1922 թվականի դեկտեմբերի 8-ին հանգանակություն էր կազմակերպել՝ հավաքելով 100.000 դոլար: Այնտեղ հայտարարվել էր, որ եթե Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը հեռանար Հարավային Ռուսաստանից ու Հայաստանից, ապա 1.000.000 մարդ սովամահ կլիներ առաջիկա գարնանացանից առաջ[4]:

Հանգանակված օգնությունները հասցեատերերին էին հասնում հիմնականում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի միջոցով: Այդ ճանապարհով Հայաստանի կարոտյալների համար ալյուր գնելու նպատակով Բելգիայի հայերն ուղարկել էին 5122 դոլար, Իտալիայի հայ ուսանողների միությունը՝ 400

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2949 («Նպաստի բաշխումը Հայաստանի մեջ»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

իտալական լիր[1]: Թերթը գրում էր նաև, որ Գալուստ Գյուլբենկյանը Կիլիկիայի կարիքավոր հայերի համար պատրիարքարանի միջոցով հատկացրել էր 50.000 ֆրանկ, նույնքան էլ՝ Հայաստանի կարոտյալների համար: Պատրիարքարանն այս գումարները հանձնել էր Ամերիկյան Նպաստամատույցին[2], որը Ռոդոսթոյում պատսպարված նիկոմիդիացի տարագրյալների զավակների կրթություն ստանալու իրավունքն ապահովելու նպատակով այդ քաղաքի Ս. Խաչ և Ս. Թագավոր թաղերում բացել էր մեկական դպրոց[3]: Թերթի հրապարակումների համաձայն՝ Մարսելում Հայաստանի կարոտյալների համար հագուստ հավաքող հանձնախումբն ավարտել էր 1921 թվականի բարեգործական ծրագրերը՝ 1922 թվականի սկզբին Կ. Պոլիս ուղարկելով 4 սնդուկ զգեստ, որոնցում կար 758 կտոր հագուստ[4]:

1922 թվականին «Ճակատամարտի» ուշադրության կենտրոնում կրկին գաղթականների և որբերի համար հավաքվող «Հայրենիքի տուրքն» էր: Պարբերականում կան բազմաթիվ նյութեր այդ հրատապ թեմայի վերաբերյալ: Դրանցից մեկն էլ «Հայրենիքի տուրքի կազմակերպումը գաղութներու մեջ» վերնագրով հարցազրույցն էր: Այդտեղ ներկայացված էին հստակ թվային տվյալներ այդ տուրքի հավաքման գործընթացի վերաբերյալ[5]: Մեջբերենք հատված հիշյալ հարցա-զրույցից:

«Եղէկ կէսօրին Ռումանիայէն Պոլիս հասաւ Հայրենիքի տուրքի արտասահմանեան պատուիրակութիւնը: Ընկեր

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում, 1922, թիվ 2808 («Հայրենիքի տուրքի կազմակերպումը գաղութներու մեջ»):

Սրենցին դիմեցինք՝ տեղեկութիւններ ստանալու համար իրենց գործունէութեան արդիւնքի մասին:

- Ի՞նչքան տեւեց ձեր առաքելութիւնը, և քանի՞ քաղաքներու մէջ Հայրենիքի տուրքի մասնաճիւղեր կազմեցիք:

- Մեր առաքելութիւնը տեւեց 3 ամիս, որու ընթացքին յաջողեցանք մասնաճիւղեր կազմել Քօնսթանցայի, Պուքրէշի, Կալացի, Պրայիլայի, Ֆօքշանի, Պաքովի, Ռօմանի, Քիշնէվի, Յաշի, Պօթուշանի և Սուչովայի մէջ: Իսկ մեկուսի հայ գաղութները միացուցինք իրենց մօտակայ քաղաքներու մասնաճիւղերուն, այնպէս որ ամբողջ Ռումանահայ գաղութը այսպէսով 11 ելմտական շրջանակներու բաժնուած եղաւ: Դեռ կը մնայ կազմակերպել Պուքովինայի և Թրանսիլվանիոյ հայութիւնը:

- Ուրիշ միութիւններ կամ մարմիններ ալ կազմեցի՞ք:

- Այո՛, Հայ տիկնանց միութիւններ՝ Կալացի, Պրայիլայի, Ֆօքշանի, Պաքովի, Ռօմանի, Քիշնէվի և Պօթուշայի մէջ, այսինքն՝ գրեթէ այն բոլոր քաղաքներուն մէջ, ուր այդ կարգի կազմակերպութիւններ չկային: Քօնսթանցայի, Սիլիստրէի, Պուքրէշի մէջ կային Հայ Կ. խաչի կազմակերպութիւններ, Փստարճըլքի մէջ ալ՝ Հայ տիկնանց որբախնամ և բարեգործական միութիւններ: Պուքրէշի մէջ կար Հայ տիկնանց որբախնամ միութիւն մը, որ շատ օգտակար գործունէութիւն մը ունեցած է:

- Ի՞նչ գոյացաւ իբրեւ դրամ և իբրեւ պարէն:

- Վստահ եմ, որ միանուագ մէկ միլիոն 500 հազար լէյ պիտի գոյանայ առնուազն: Մեր հետ բերինք հինգուկէս

վակոն սննդեղէն (30.000 քիլօ լուբիա, 1440 քիլօ ոսպ, 10.000 քիլօ գետնախնձոր, 1500 քիլօ մաքարոնի, 5000 քիլօ քաշքաւալ, 9750 քիլօ իւղ և 3000 քիլօ ապուխտ), որոնք Պոլսոյ հրապարակի մեծաքանակի արժէքով 14.000 ոսկի կ'արժեն: Նոր նպարեղէններ ալ պիտ հասնին հետզհետէ: Ասոնք վաղը առտու շոգենաւէն հանուելով պիտի փոխադրուին Գուլէիի որբանոցը:

- Հայաստանի մէջ տիրող կարօտութեան հանդէպ ի՞նչ շարժում կայ:

- Քօնսթանցայի մէջ կազմուած Սովելոց յանձնախումբը արդէն պատրաստած է 3 վակոն լուբիա Հայաստան ղրկելու համար, իսկ Պուքրէշի մէջ Թուլում- պաճեան-Թէրզեան վաճառատունը 200.000 լէյ տրամադրած է նոյն նպատակին: Պուքրէշի մէջ կազմուած Ելմտ. կեդր. յանձնաժողովը իր հաստատներուն հարիւրին 30 կ'ընէ, միայն այս տարուան համար մօտ 800.000 լէյ»[1]:

«Հայկական կեանք» բաժնում 1922 թվականի վերջին բացվել էր նոր «Լուրեր Հայաստանեն» խորագիրը, որտեղ արտատպում էին «Խորհրդային Հայաստան» թերթից վերցրած տեղեկատվություն՝ հիմնականում դրական շեշտադրումներով: Դրանց մեջ անպայման լինում էին գաղթականների ու որբերի մասին լուրեր: Ասենք՝ «Խորհրդային Հայաստան» թերթի հունիսի 20-28-ի համարներից վերցված լրաքաղից տեղեկանում ենք, որ Երևանի գավառի խաղողի այգիներից և պտղատու ծառերից աշնանը առատ բերք էր սպասվել, Ղարաքիլիսայի և Ալեքսանդրապոլի գավառին կից գյուղերում ցանքերի վիճա-

[1]Նույն տեղում:

կը լավ էր եղել, Ղարաքիլիսայի մոտի խցանված աղբյուրների հունները բացվել էին, և դրա շնորհիվ քաղաք էին մտնելու 4 աղբյուր, Սաղմոսավանքի ու Օհանավանքի գյուղերի արտերը թեև կարկտահարվել էին, բայց ցանքերը չէին վնասվել: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ Ամերիկյան որբանոցները Ղարաքիլիսայից տեղափոխվել էին Ալեքսանդրապոլ և Ջալալ Օղլի[1]: Ղարաքիլիսայում էր մնացել միայն հիշյալ կազմակերպության գրասենյակը՝ \կարոտյալներին նպաստ բաժանելու նպատակով[2]:

«Տպավորություններ Հայաստանեն» խորագրի ներքո ներկայացված էր Ամերիկյան Նպաստամատույցի 1922 թվականի օգոստոսի 5-ի տեղեկագիրը Հայաստանում նրանց խնամքի տակ գտնվող որբանոցների վիճակի մասին[3]: Այդ տեղեկագիրը կազմել էր Նյու Յորքի Եպիսկոպոսական եկեղեցու անդամներից դոկտոր Հ. Էհմարտը՝ Կովկասում Նպաստամատույցի կայանների վիճակն ուսումնասիրելուց և ԱՄՆ վերադառնալուց հետո[4]: Էհմարտի ղեկավարած խումբը Բաթում էր հասել հուլիսի 27-ին և անմիջապես մեկնել էր Թիֆլիս: Նրանց կարծիքով՝ «Թիֆլիսի որբանոցները կը գործեն կանոնաւոր հիմերու վրայ, եւ երախաները առողջ եւ երջանիկ երեւոյթ մը ունին»[5]:

Ղարաքիլիսայի որբանոցը լավ վիճակում էր՝ նրանց գնահատականի համաձայն[6]:

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2941 («Լուրեր Հայաստանեն»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 2960 («Տպավորություններ Հայաստանեն»):

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

[6]Նույն տեղում:

Դարաչիչակի որբանոցի մասին գրված էր հետևյալը. «Հատորներով կարելի է խօսիլ այս որբանոցի մասին, որ այ. Միլս լաւ գործի մը ձեռնարկած է խնայողական կանոնաւոր հիմերու վրայ»[1]: Անգլիախոս Միլսի վարչության տակ գործող այս որբանոցում կար 600 որբ[2]:

Երևանում և Էջմիածնում Ամերիկյան Նպաստամատույցի որբանոցներն ստիպված էին ավելի շատ որբ ընդունել տիրող սովի պայմաններում, երբ անընդհատ մահանում էին չափահաս մարդիկ[3]:

Ալեքսանդրապոլում Ամերիկյան Նպաստամատույցը կենտրոնացրել էր իր գործունեության հիմնական մասը[4]: Ըստ տեղեկագրի գնահատականի՝ «մեծ գնահատումի արժանի է Քազաչիի, Սէվերսքիի եւ Պոլիկօնի նախկին զօրանոցներուն մէջ կատարուած աշխատանքը: Քիչ ատեն առաջ այս շէնքերը ամբողջովին փլատակներ էին: Այսօր այս շէնքերուն մէջ կը պատսպարուին 18.000 երախաներ, որոնք կը մեծնան նոր գաղափարներով, իրենց երկրին ապագայ քաղաքացիներ դառնալու համար»[5]:

Իր կազմած զեկուցագիրը Հ. Էհմարտն ավարտում էր այսպես. «Կը կարծեմ, թէ Ամերիկա, Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի միջոցով, ոչ միայն երախաներ ազատած է սովի ճիրաններէն, այլ եւ իր շինարարական աշխատանքով, նոր գաղափարներով կ'օժտէ երկրին ապագայ քաղաքացիները»[6]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

«Նոր կյանք» պարբերականից թերթն արտատպել էր «Հայ տարագիրներու Հայաստան վերադարձի խնդիրը» վերնագրով տեղեկատվությունը[1]: Հաշվի առնելով դրանում պարունակվող փաստերի կարևորությունն՝ ստորև այն ներկայացնում ենք ամբողջությամբ:

«Թաւրիզ գտնուող Հայաստանի տարագիրներու հայրենակցական միութիւններու ներկայացուցիչները, դիմելով Խ. Հայաստանի նորեկ հիւպատոս Ե. Գարագաշին, խնդրեցին յայտնել, թէ ի՞նչ վիճակի մէջ է տարագիրներու վերադառնալու հարցը: Հիւպատոսը պատասխանեց, որ ինք հրահանգ ստացեր է Հայաստանի Ժողկոմներու խորհրդի նախագահ Լուկաշինէ (Սրապիօնեան) և Հ. Կ. Գործադիր կոմիտէի նախագահ Ս. Համբարձումեանէ, թէ այն տարագիրները, որոնք կուզեն վերադառնալ Հայաստան, պէտք է ներկայացնեն երեքական օրինակ լուսանկար և ստանան հիւպատոսարանէն տպագրուած հարցարան: Այդ հարցարանի բոլոր կէտերուն պատասխանելէ յետոյ, իւրաքանչիւր տարագիր իր պատասխան հարցարանը լուսանկարներու հետ միասին պիտի յանձնէ հիւպատոսին, որ իր կարգին պիտի ներկայացնէ Հայաստանի Ժողկոմներու խորհուրդին, որմէ թոյլտուութիւն ստանալէ յետոյ միայն, անցագիր կը տրուի Հայաստան վերադառնալու համար:

Այն տարագիրները, որոնք Հայաստանի հպատակ չեն և հետեւաբար չունին Հայաստանի մէջ հող, ոչ ալ տուն, պէտք է նկատի ունենան, որ իրենց բնակութեան համար յատկացուած է Արազդայեանի շրջանը, որ մալարիայի բոյն է:

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 3078 («Հայ տարագիրներու Հայաստան վերադարձի խնդիրը»):

Պաքուսյա մնացած 27.000 հայ փախստականներուն ներգաղթը արտօնուած է Խ. Հ. կառավարութեան կողմէ, միայն թէ ուրիշ աղբիւրներէ պիտի հոգացուին անոնց ճանապարհածախսը և քանի մը ամսուն պարէնը:

Փախստականները դիմած են Խ. Հ. լիազօր ներկայացուցչութեան՝ միջնորդելու պարսիկ կառավարութեան մօտ՝ թոյլտուութիւն ստանալու համար՝ անցնիլ Հայաստան, Թաւրիզի վրայով:

Դիմում կատարուած է, և յոյս կայ, որ նպաստաւոր պատասխան մը պիտի տրուի»[1]:

«Բոլշևիկ գրգռության նմուշներեն» թղթակցության մեջ բերվում էին թվային տվյալներ հայ գաղթականների վերաբերյալ Խորհրդային Հայաստանում և այլ հանրապետություններում՝ վերցված Բաքվի «Бакинский рабочий» թերթի 1922 թվականի դեկտեմբերի 29-ի համարի խմբագրականից[2]: Ըստ այդմ՝ 113.000 արևմտահայ գաղթականներից 50.000-ը ապաստանել էին Խորհրդային Հայաստանում, դրան գումարած նաև Հյուսիսային Կովկասից և այլ վայրերից եկած 12.000 հայ գաղթականներ[3]: Նշվում էր, որ Լոզանի կոնֆերանսում ռուս պատվիրակները վստահեցրել էին, թե Խորհրդային Ռուսաստանում և Անդրկովկասում իրենց պետությունը պատրաստ էր տեղավորել ևս 50.000 հայ գաղթականի: Միևնույն ժամանակ «Նայեցեք, ողորմեցեք» խմբագրականում նշվում էր, որ արևմտահայությունը մեծ հույսեր չէր տածում Լոզանի կոնֆերանսում Գեորգի Չիչերինի արած այն հայտարարությանը, թե Կուբանում պատրաստ են ընդունել 50.000 հայ գաղթականի[4]:

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1923, թիվ 3105 («Բոլշևիկ գրգռության նմուշներեն»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1923, թիվ 3115 («Նայեցեք, ողորմեցեք»):

«Կացությունը Հայաստանի մեջ» խորագրի ներքո ներկայացված էր ՀՕՄ-ի ներկայացուցիչ Պ. Նազարեթյանի կողմից խմբագրությանը տրամադրած տեղեկատվությունը Խորհրդային Հայաստան կատարած երկամսյա այցելությունից հետո[1]: Նա գրում էր, որ Հայաստանում միայն անվանապես գոյություն ուներ ՀՕԿ-ը՝ նյութական միջոցների սակավության պատճառով[2]: Այդ կազմակերպության մասնաճյուղ էր գործում Բաթումում, որը պատսպարում էր Յալթայից ու Նովորոսիյսկից այնտեղ տեղափոխված արևմտահայ գաղթականներին[3]: Նշվում էր նաև, որ Թիֆլիսում կային նույն ժամանակահատվածում մոտ 4000 արևմտահայ գաղթականներ, որոնք այնտեղ էին ժամանել Հյուսիսային Կովկասից[4]: «Միշտ սովահարներ» վերնագրով լուրով Թիֆլիսից «Ճակատամարտին» տեղեկացնում էին, որ դեպի այդ քաղաք էր գալիս Հյուսիսային Կովկասից սովահար հայ գաղթականների մեծ բազմություն: «Գաղթականները, որոնք 1918էն ի վեր, Արմաւիրի և Եկատերինոտարի շրջանը հաստատուած էին, այժմ պատսպարուած էին Թիֆլիսի եկեղեցին, մօտակայ Նորտուղ գիւղի և Թիֆլիսի մէջ: Անոնք առհասարակ սաստունցի, վանեցի, կարնեցի են և կը գտնուին ծայրայեղ թշուառութեան մէջ: Հայաստանի կառավարութիւնը տեղի չգոյութեան պատճառով չէ կրցած անոնք ընդունիլ: Իսկ Ամերիկեան Նպաստամատոյցը իր ուշադրութիւնը Հայաստանի վրայ դարձուցած ըլլալով, ոչ մէկ օժանդակութիւն կ'ընէ: Այս պատճառով գաղթող-

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2944 («Կացությունը Հայաստանի մեջ»):
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

ները յուսահատութեան մատնուած են»,- կարդում ենք թերթում[1]:

«Միայն ապրելու իրաւունք» խմբագրականում բերվում էին կոնկրետ թվային տվյալներ, բայց այս անգամ իրենց իսկ բնօրրան հայրենիքում գաղթական դարձած հայության քանակական տեղաբաշխվածության մասին՝ ըստ բնակավայրերի[2]: Հիշատակության է արժանի հետևյալ հատվածը:

«Հայ ժողովուրդը չի յափշտակեր իր հարեւաններուն հողը, այլ կը պահանջէ, որ իր հայրենի ժառանգութեան նուազագոյն մէկ մասը պարպեն, որպէսզի կարենայ տեղաւորուիլ եւ ապրիլ:

Թուրք վարիչները կը յիշե՞ն այսքան ժուժկալ պահանջատէր մը: Ուրիշ խնդիր, եթէ որոշած են ամեն գնով ոչնչացնել այս ժողովուրդը: Բայց այդ արդէն վեր է իրենց ուժէն՝ հակառակ բոլոր սարսափներուն և պոռոտախօսութիւններուն:

Բարեմիտներ կան, որ կ'ընդունին մեր իրաւունքը, բայց շարունակ հարցումներ կ'ուղղեն մեր թիւի մասին: Այսօր 150.000 Հայեր կան Կ.Պոլսոյ մէջ, նոյնքան՝ Ամերիկա, 60.000՝ Յունաստան և Պալքանեան երկիրները, 45.000՝ Իզմիր և հելլէնական գրաւման գօտիներուն մէջ, 30.000՝ Եգիպտոս: Այս թիւերը քաղուած են պաշտօնական ցուցակներէ:

Տակաւին չենք հաշուեր Հանրապետութեան սահմաններուն մէջ կծկուած 1.400.000 տեղացիներն ու 350.000 թրքահայ փախստականները, ինչպէս Մ. Քէմալի իշխանութեան տակ դտղացող աւելի քան 100.000 դժբախտները»[3]:

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2890 («Միշտ տվահարներ»):

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2823 («Միայն ապրելու իրավունք»):

[3]Նույն տեղում:

«Լուրեր Կիլիկիայեն» նյութը նույնպես պարունակում էր ոչ պաշտոնական թվային տվյալներ Կիլիկիայում 1922 թվականի մարտ ամսվա կտրվածքով դեռևս բնակվող հայերի վերաբերյալ[1]:

«Տակաւին 7000 հոգի կը հաշուուի Մարաշի մէջ: Քէմալական կառավարութիւնը արտօնութիւն տուած է զինուորական պարտականութենէ զերծ բոլոր Հայերուն փոխադրուիլ հոն, ուր որ կը փափաքին:

Մէկէ աւելի հայ կարաւաններ անցած են Սուրիո սահմանէն ներս, հազար ու մէկ դժուարութիւններով: Այդ կարաւանները առաւելապէս կազմուած են Մարաշի և մասամբ ալ Խարբերդի վերապրող Հայերէն, ընդամէնը մօտաւորապէս 1000 հոգի:

Բացարձակապէս սուտ են այն լուրերը, թէ Կիլիկայէն գաղթող Հայերէն շատեր կը վերադառնան Կիլիկիա: Ոչ մէկ հայ Կիլիկիա վերադարձած է և վերադառնալու տրամադիր է»[2],- կարդում ենք թերթում:

«Լուրեր Կիլիկիայից» վերնագրով նյութը հերքում էր օրեր առաջ թուրքական թերթերում տպագրված այն տեղեկատվությունը, թե Կիլիկիա է վերադարձել 3500 հայ[3]: Կիլիկիայից եկած մի հայ ճամփորդ «Ճսկատամարտի» խմբագրակազմին տեղեկացրել էր, որ իրականում այնտեղ չէին վերադարձել ոչ մի հայ և ոչ մի քրիստոնյա[4]: Ադանայում այդ պահին գտնվում էր 250 հայ, որոնցից 110-ը ծեր կամ հիվանդ մարդիկ էին. «Ասոնք ալիւր կը ստանան Ամերիկ. Նպաստամատոյցէն»[5]: Նույն աղբյուրն ասում էր նաև հետևյալը. «Պարպումէն առաջ

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2830 («Լուրեր Կիլիկիայեն»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 2935 («Լուրեր Կիլիկիայից»):

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

Ատանայի մէջ կար առնուազն 50.000 Հայ: Հետեւաբար, երբ այժմ կ'ըսեն, թէ Կիլիկիոյ մէջ «անաւխորժ» դէպք չէ պատահած Հայերու հանդէպ, պատճառը այն է, որ մարդ չէ մնացած առնուցմէ: Սերսինի մէջ կայ մօտաւորապէս 150 Հայ, իսկ Տարսոնի մէջ մէկ քանի հոգի պարզ գործատրներ»[1]:

«Ականստեսի մը տեղեկությունները Բաղեշի, Մուշի, Սասունի, Վանի և շրջաններու մասին. 70-80 կիլոմետրի վրա՝ հազիվ 85.000-90.000 բնակիչ» թղթակցությունը ուղարկել էր թերթի Թավրիզի թղթակից Վաղարշակ Հոխիկյանը[2]: Նա գրուցել էր Ուրմիայից Թավրիզ եկած բաղեշցի մի թուրք զինվորականի հետ[3]: Ըստ նրա հաղորդած տեղեկատվության՝ «Բաղէշ քաղաքի և շրջանի Թախտալու, Խարդկոդ և Մորիս գիւղերուն մէջ բնակութիւն հաստատած են յոյները, որոնք աքսորուած են Իզմիրի և Գոնիայի շրջաններէն և կը հաշուին 12.000 ընտանիք: Բաղէշ քաղաքի մնացած ազգաբնակչութիւնը կը կազմեն նախկին թրքահօս քիւրտերը: Ազգաբնակչութեան երրորդ տեղը կը բռնեն կրօնափոխ հայ կիներն ու երախաները և քանի մը արհեստաւոր տղամարդիկ, որոնց թիւը հազիւ 200 հոգիի կը հասնի» [4]: Նորոգվել էր Բաղեշի շուկան: Քաղաքում գործող պետական հիմնարկները հաստատվել էին «հայերու մեծ շէնքերուն մէջ»[5]:

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2960 («Ականսատեսի մը տեղեկությունները Բաղեշի, Մուշի, Սասունի, Վանի և շրջաններու մասին. 70-80 կիլոմետրի վրա՝ հազիվ 85.000-90.000 բնակիչ»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

Բաղեշի արվարձանի հայկական գյուղերն ավերված էին, միայն դրանցից երկուսում՝ Փարխանդում և Ղուլթիկում սպրում էին քրդական ընտանիքներ[1]:

Խիզանի և Էրունի շրջաններում բնակվում էին քրդական ավազակախմբեր[2]:

Անմարդաբնակ էին Գյուզալզատեի և Տատիկի հայկական գյուղերը, որոնք վերածվել էին արոտատեղիների քոչվորների համար[3]:

Ռահվայի և Ախլաթի շրջանի հայկական մեծ գյուղերն անգամ անմարդաբնակ էին: Դրանց թվում էին Զրխոցը, Շամիրամը, Ուրդափը, Կծվակը, Ծղակը, Փրխուսը, Թեղուտը և այլն[4]:

Դատվանում ապրում էր Քուֆրայի Շեյխի աղան մի քանի քրդական ընտանիքների հետ[5]:

Ախլաթի կենտրոնում նստում էր գայմազամ թուրք Բակու բեկը: Այնտեղ բնակվում էր ավելի քան 100 թուրքական ընտանիք[6]:

Մոտկանում կար շուրջ 1500 հայ, որոնք չէին հրաժարվել իրենց կրոնից[7]:

Սղերդում իշխում էր Բշարի Չաթոյի եղբայր Զեմիլը, ում տրամադրության տակ էր գտնվում 600 զինվոր[8]:

Բոհտանը և Կորդվաց լեռներն ենթարկվում էին Պետերխան

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:
[7]Նույն տեղում:
[8]Նույն տեղում:

զադսաների ազդեցությանը[1]:

Մուշ քաղաքի հայկական ու թուրքական թաղերի մեծ մասն ավերվել էր[2]: Կանգուն էին մնացել միայն Բերդի թաղը և դաշտային մասը: Մուշ քաղաքում ապրող Քոթանցի տոհմն ամբողջությամբ ոչնչացվել էր թուրքերի կողմից[3]: Ազգաբնակչությունը կազմում էին միայն թուրքերը՝ հազիվ 250 ընտանիք[4]: Նույնքան թուրքեր էլ բնակվում էին ներքին նահանգներում ու հիմնականում Տիգրանակերտի վիլայեթում[5]:

Սասունը նույնպես գրեթե անմարդաբնակ էր, իսկ Սասունի դաշտում բնակվում էին լեռնցի քրդերը[6]:

Խույթն էլ էր անմարդաբնակ, իսկ սպալաքցի քրդերի աշիրեթն իջել էր և Խույթի դաշտում էր ապրում[7]:

Մշո դաշտի գյուղերի մեծ մասն ամայի էր, իսկ մնացածների բնակչությունը նոսրացել էր: Մշո դաշտի տերն էր դարձել Հաջի Մուսա բեկն իր փոքր եղբայր Նիո բեկի հետ: Նա իր տրամադրության տակ ուներ դեռևս 1918 թվականին կառավարության կողմից այդտեղ թողնված 2 թնդանոթ և 8 գնդացիր, 2000 քուրդ զինվոր: Հաջի Մուսա բեկի նստավայրը Խվներ գյուղն էր[8]:

Մշո դաշտի արևելյան հատվածում՝ Չխուրի մեջ հաստատվել էին մոտկանցի քրդերը, իսկ արևմտյան կողմին տիրում էր

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:
[7]Նույն տեղում:
[8]Նույն տեղում:

Խասգյուղն իր նստավայրը դարձրած «Քոլոզկայ Հաճի Դէրօի աղան»[1]:

Մշո դաշտի քրդերի հետ «խստոն կ'ապրին բաւական թիւով Հայեր, իւրաքանչիւր գիւղը մօտաւորապէս 4-5էն մինչեւ 30-40 հոգի, որոնք արաղչի կը գործածեն և իբր թէ կսլահեն իրենց կրօնը և կը պարապեն երկրագործութեամբ»[2]:

Բուլանուխ-Մանազկերտում ավելի ցանցառ էր ազգաբնակչության տեղաբաշխումը[3]:

«Հայաստանցի աշիրէթներէն միայն Ֆատուլայի աղան՝ Սարթիպը, կայ իր 500-600 զինուած ուժերով: Ռոզախի մեծ աղան՝ Քէօռ-օղլիմ, քանի մը հարիւր ընտանիքով կը գտնուի Գոնիայի շրջանը՝ Քիլիսէ: Պուլանըխի այժմեայ գայմագամն է դարձել Վարի պուլանըխցի Խալսաֆ էֆէնտին»[4],- տեղեկացնում էր անցորդը:

«Տուրթաղի և Բարդնոցի շրջաններուն մէջ հաստատուած են փոքրաթիւ Քիւրտեր: Քէօռ Հիւսէին փաշան՝ Հայտարանցիներու ցեղապետը, բաւական ստուարաթիւ հեծելազօրքով բնակութիւն հաստատած է Վանի ծովափը՝ Ալճաւազ: Իր ուժը կը հաշուեն մօտ 1000 ձիաւոր և քիչ թուով զինուած հետեւակ Քիւրտեր»[5],- կարդում ենք թերթում:

Ալաշկերտի, Բայազետի և Տիգրանի շրջաններում հաստատվել էին 2000 թաթար, Ծաղկանց լեռներից՝ Զիլանից իջած քրդեր և Արարատի ստորոտից եկած Զալալցի աշիրեթը[6]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

Զիլանի ձորում էր բնակվում գլխավոր ցեղապետ Կուլիխան քեկը[1]: Այդտեղից Ապաղայի, Բերկրիի և Արճեշի շրջաններ էին տեղափոխվել ապրելու համար բազմաթիվ քրդեր: «Արճեշի մէջ նստած էին Քիւրտ աղաներ և Թուրքեր», որոնք զբաղվում էին առևտրով[2]:

«Ականատեսի մը տեղեկությունները Բաղեշի, Մուշի, Սասունի, Վանի և շրջաններու մասին. 70-80 կիլոմետրի վրա՝ հազիվ 85.000-90.000 բնակիչ» թղթակցության 2-րդ մասում տեղեկացվում էր, որ Վանում ավելի քան 1500 հայ էր մնացել, հիմնականում՝ կանայք և երեխաներ[3]:

Վանում և Այգեստանում գտնվող վանքերն ու շենքերը այրված էին կամ քանդված: Ամենուրեք ամայություն էր: Չորացել էին անգամ Արտամետի խնձորենիները[4]:

Վան քաղաքի և Այգեստանի ազգաբնակչությունը դարձել էին թուրքերը (շուրջ 450 ընտանիք) և ավելի քան 1500 հայերը[5]: Վերջինները բնակվում էին Լեզքում, Շահբազում և Ավսնդում: Հայերի մեծ մասը կանայք ու երեխաներ էին, իսկ տղամարդիկ սակավաթիվ էին և զբաղվում էին արհեստներով, ինչի շնորհիվ էլ ողջ էին մնացել[6]:

Վարագա վանքն այրված էր: Լիմ և Կտուց անապատներն ամայի ու քանդված էին: Աղթամարի կղզին անբնակ էր, եկե-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 2961 («Ականատեսի մը տեղեկությունները Բաղեշի, Մուշի, Սասունի, Վանի և շրջաններու մասին. 70-80 կիլոմետրի վրա՝ հազիվ 85.000-90.000 բնակիչ»):

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

[6]Նույն տեղում:

ղեցու շենքերը քանդված էին, իսկ ծովափի շինությունների մեջ հաստատվել էր տախմանիսցի Հյուսեին աղան[1]:

Թիմարի շրջանում ապրում էին աննշան թվով պարսիկներ և թուրքեր: Պարսիկները բնակվում էին Այլուր գյուղում[2]:

Բերկրիի և Սարայի շրջանները կիսավեր էին[3]: 1920 թվականին Սարայի շրջանից մինչև Արճակի շրջանակ էր Պարսկաստանից տեղափոխվել քրդական մի ցեղախումբ[4]:

Խոշաբում, Բաշկալայում, Հայոց ձորում, Նորդուզում և Շատախում նույնպես արդեն միայն քրդեր էին ապրում[5]:

Արտամետում և Ոստանում թուրքեր էին բնակվում: Այդ բնակավայրերը կիսով չափ այրված ու քանդված էին: Ծառերի մեծ մասը չորացել էր[6]:

Գավաշում և Կարճկանում սակավաթիվ քրդեր էին ապրում, յուրաքանչյուր գյուղում՝ մի քանի տուն[7]:

Ինչպես այս շրջանների, այնպես էլ Մոկսի ու Կառկառի հայկական գյուղերի մեծամասնությունն անբնակ էին և վերածված էին ավերակների[8]:

Սպարկերտում և Մամոտանքում սկսել էին բնակվել քրդերը[9]:

Ամայի էր նաև Ոզմը[10]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:
[7]Նույն տեղում:
[8]Նույն տեղում:
[9]Նույն տեղում:
[10]Նույն տեղում:

«Գայլերը և գառնուկները» երկմասանի խմբագրականի առաջին մասում բերված էին փաստեր արևմտահայության թվաքանակի մասին մինչև Ցեղասպանությունը և դրանից հետո[1]: Իբրև սկզբնաղբյուր օգտվել էին ֆրանսիացի հայտնի հրապարակախոս Մարսել Լյառի 1913 թվականին տպագրած «La Question Arménne à la Lumière des Documents» ուսումնասիրությունից[2]:

Մ. Լյառն իր գրքում հրապարակել էր պաշտոնական ցուցակներ: Դրանց պարունակած տվյալների համաձայն՝ 1912 թվականին արևմտահայ 6 նահանգում հայերի թիվը կազմում էր 1.018.000 կամ «հարիւրին 38.9», իսկ մինչև 1912 թվականը Կիլիկիայում ապրում էր 205.050 հայ[3]: Այսինքն՝ միայն այս 2 խուշոր շրջանում հայ ժողովրդի թիվը 1.223.050 էր՝ առանց հաշվելու Կ. Պոլիսը և «Թրակիայէն մինչեւ 6 նահանգներու սահմանները սփռուած Հայերը, որոնց թիւը նոյնքան պատկառելի էր»[4]:

Թերթը հիշատակում էր նաև Մուդրոսի զինադադարից հետո Ջեմալ բեյի այն հայտարարությունն, ըստ որի՝ «տեղահանութեան ընթացքին 800.000 Հայեր ջարդուած են»[5]: Գրում էր, թե նույն բանն էին ապացուցել դոկտոր Լեփսիուսը, պարոն Մորգենթաուն և լորդ Բրայսը. «Այս ահռելի թիւը - որ նուազագոյնն էր – թուրք պատուիրակներուն երեսին զարկաւ նաեւ պ. Միլոան, երբ Սեվրի դաշնագիրը կը յանձնէր, ի դիմաց Դաշնակիցներուն: Այդ 800.000ը միայն կոտորուածներու հաշիւն էր, իսկ 200.000-300.000 զոհեր կային՝ անօթութենէ, չար-

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 3022 («Գայլերը և գառնուկները»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

չարանքներէ կամ համաճարակներէ մեռած, միշտ կլոր թիւեր առնելով: Բոլոր իրազեկները՝ մէկ միլիոնէն 1.200.000 կը գտնէին ընդհանուր գումարը, որ շատ դիւրին եղաւ ստուգել զինադադարէն յետոյ[1]»:

«Գայլերը և գառնուկները» երկմասանի խմբագրականի 2-րդ մասում թերթի խմբագրությունը հակադարձում էր թուրք հայտնի մտավորական դոկտոր Ռեշատ Նիհատ բեյի այն պնդմանը, թե Թուրքիայում մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ապրում էր 1.200.000 հայ, ուստի անհնար էր կոտորված լիներ 1.500.000 հայ[2]: «Մեր պրպտումները կը հաստատեն, թէ պատերազմէն առաջ Թուրքիոյ մէջ կը գտնուէին 2.026.700 Հայեր և ոչ թէ՝ 1.200.000: Մանաւանդ որ, միայն 6 նահանգներու հայ բնակչութեան թիւն էր 1.018.000, առանց հաշուելու Վանէն՝ Աղբակն ու Հէքեարին՝ 12.000, Պիթլիսէն՝ Սղերդը՝ 18.000, Սվազէն՝ Ամասիան և Թոքատը՝ 60.000, Խարբերդէն՝ Մալաթիան՝ 36.000, Տիարպէքիրէն՝ Մարդինը՝ 19.000: Հայ ժողովուրդին մնացորդը չի կրնար հրաժարիլ իր ազատ ու անկախ ապրելու իրաւունքէն: Ան կ'ուզէ ստանալ իր հայրենիքէն բաւարար մաս մը հող՝ տեղաւորուելու և իր վէրքերը կապելու համար: Թուրքիա բնակող Հայեր կրնան գտնուիլ միշտ և պիտի գտնուին, բայց, իբրեւ հաւաքականութիւն այս ժողովուրդը այլեւս տեղ չունի Թուրքիոյ մէջ: Միլլի վարիչները իրենք ալ կը քարոզեն ու կը գործադրեն այս ճշմարտութիւնը»[3],- կարդում ենք հիշյալ խմբագրականում:

«Կին, ծեր, մանուկ» խմբագրականում թերթը կրկին անդրադառնում էր միլլի կառավարության կողմից սկսած և շարու-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 3023 («Գայլերը և գառնուկները»):

[3]Նույն տեղում:

նակվող այն ծրագրին, որի համաձայն՝ Արևմտյան Հայաստանից և բուն հայկական գավառներից վտարում էին ցեղասպանությունից մի կերպ փրկված բեկորներին[1]: Այդ ծրագիրը խմբագրակազմը համարում էր տարօրինակ հաշվեհարդար հայության հետ[2]: «Ամեն օր լուրերու կարգին կ'արձանագրուի ժամանումը Անատոլուէն վտարուած հայկական մասնիկներու, որոնց մեծ մասը կիներ, ծերունիներ և մանուկներ են: Այսօր ալ փշուր մը տեղեկութիւն ունինք այս մասին: Մինչեւ հիմա Զօնկուլտաքէն հասեր են 1075 հոգի, Պարթրնէն՝ 270, Պոլու-Տիւզճէէն՝ 180, Ատապազարէն՝ 170:

Ամբողջ պատմութեան վրայ գաղափար կազմելու համար կը բաւէ ըսել, թէ ատենով միայն Ատապազարի մէջ 7000 տուն հայութիւն կար կամ զինադադարէն անմիջապէս յետոյ՝ 2000, իսկ ահա Պոլիս ղրկեր են մնացորդը՝ 170 հոգի, իբրեւ առաջին և վերջին նմոյշ: Պատճառ մը կա՞ր այս մնացորդները երկրէն դուրս հանելու: Չգիտենք: Մեր հարեւանները այնքան խոր գաղտնիքներ և այնքան թաքուն ծրագիրներ ունին, որ աւելորդ կը դառնայ վիճիլ պատճառներու մասին:

Երբ օրուան վարիչները այնքան կտրուկ են և ձիւն-ձմեռով անճար բազմութիւններ ճամբայ կը հանեն Անատոլուի խորերէն, կը նշանակէ, թէ կամք մը, հրաման մը ունին, որ անպատճառ պիտի գործադրուի: Եւ կը գործադրուի:

Ամեն օր Սեւ ծովէն նաւ մը կը հասնի՝ Անատոլուի հայ բնակչութենէն մասունք մը բերելով: Եւ մենք պարտաւոր ենք ընդունիլ կատարուած իրողութիւնը և տեղ մը ու օրապահիկ մը ճարել նորեկներուն համար:

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 3041 («Կին, ծեր, մանուկ»):
[2]Նույն տեղում:

Արձակուա՛ծ է հրամանը, և ահա խումբ-խումբ կը հասնին վերջին մնացորդները:

Խնդիրն այն է, որ այսպէս կամ այնպէս ողջ մնացած հայկական վերջին մնացորդներն ալ օրէնքէ դուրս հռչակուեր են Անատոլուի մէջ և մէկ իրաւունք միայն կը վայելեն՝ ձգել-հեռանալ»[1],- գրված էր խմբագրականում:

Թերթի՝ «Միացյալ պատվիրակության բացատրությունները Ազգային տան մասին» հոդվածում մեջբերված էին Փոքրամասնությունների մասնախմբում հայ պատվիրակների ներկայացրած ծանուցագրից հատվածներ, որոնցում բերված էին կոնկրետ թվային տվյալներ արևմտահայ գաղթականների վերաբերյալ[2]: «Այսօր մօտաւորապէս 700.000 Հայեր Թուրքիայէն արտասահման փախած են.- 345.000 հոգի՝ Կովկասի զանազան շրջաններուն մէջ, 95.000՝ Սուրիա, 120.000՝ Յունաստան, 40.000՝ Պուլկարիա և Արեւմտ. Թրակիա, 50.000՝ Պարսկաստան և մնացեալը՝ ցրուած գրեթէ ամեն տեղ, առանց հաշուելու 110.000 որբերը, որոնց համար նախախնամութիւն եղաւ Ամերիկեան Նպաստամատոյցը»[3],- գրված էր այդ ծանուցագրում: Տեղեկացվում էր, որ «թուրք կառավարութիւնը և անհատները տիրացած են անժառանգ կորսուած Հայերու շարժուն և անշարժ բոլոր ինչքերուն»[4]:

1922-1923 թվականներին արևմտահայության փրկված բեկորների մասին թվային տվյալներ ներկայացնելուն զուգահեռ՝ «Ճակատամարտը» ռեպորտաժների, նամակների, հարցազրույցների և վերլուծական հոդվածների միջոցով պատկե-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1923, թիվ 3087 («Միացյալ պատվիրակության բացատրությունները Ազգային տան մասին»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

բացում էր տալիս գաղթականների ու որբերի կյանքի մանրամասների մասին: Օրինակ՝ «Ճամփորդի մը տեղեկությունները Տրապիզոնի և Սամսոնի մասին» նյութը ականատես վկայի տեղեկություններ էր պարունակում[1]:

Տրապիզոնից Կ. Պոլիս եկած ճամփորդներից մեկը սա էր պատմել Տրապիզոնի և Սամսոնի շրջանների հայ բնակչության կացության և վիճակի մասին: Ըստ այդմ՝ Տրապիզոնում կային 130 հայ ընտանիք, 70 այրի կին, 80 որբ, 70 որբուհի[2]: Որբերն ու որբուհիները պատսպարված էին որբանոցներում: Այդ հաստատությունների ընդհանուր «հոգը ցարդ ստանձնած էր Ամերիկեան Նպաստամատոյցը, բայց վերջերս վարչութիւնը յանձնուեցաւ Առաջնորդ Գարեգին վրդ. Խաչատուրեանին, իսկ Նպաստամատոյցը ամերիկեան հիւպատոսին միջոցով կը շարունակէ սնունդի և հագուստի մատակարարութիւնը»[3]:

Սամսոնի որբանոցներում Ամերիկյան Նպաստամատույցը պահում էր 400 հայ որբ, իսկ այդ քաղաքում կար ավելի քան 300 հայ[4]:

Թղթակիցը տեղեկացրել էր նաև հայերի հանդեպ վերաբերմունքի մասին: «Քաղաքներուն մէջ ապահովութիւն չկայ քրիստոնեաներուն համար, որոնք մթնելէն վերջ դուրս չեն կրնար ելլել: Արգիլուած է իրենց նոյնպէս քաղաքներէն դուրս ելլել կամ շրջակայ գիւղերը ճամբորդել:

Վերջին 6 ամիսներու ընթացքին շրջակայ գիւղերու մէջ 16-17 հայեր սպանուած են չէթէներու կողմէ: Այս սպանութեանց հե-

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2823 («Ճամփորդի մը տեղեկությունները Տրապիզոնի և Սամսոնի մասին»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

տեւանքով գիտերու ցանցառ հայութիւնը քաղաքները կ'ապաստանի: Սիւրմէնէի տասնեակ մը Հայերը Տրապիզոն եկան: Կառավարութեան և Տրապիզոնի Առաջնորդարանին յարաբերութիւնները պաղ են»[1]:

«Հայկական կյանք» բաժնում «Որբ ունեցողներուն» լուրը տեղեկացնում է, որ Կ. Պոլսի հայկական որբանոցները, «իրենց տարողութենէն աւելի լեցուած ըլլալով», դիմել էին Ազգային խնամատարությանը խնդրանքով ժամանակավորապես դադարեցնել նոր որբերի ընդունելությունը[2]:

«Մարաշի հայերը» լուրի միջոցով թերթն, օգտվելով այլ աղբյուրից, տեղեկացնում էր, որ Մարաշում «այժմ կը մնան 7000 Հայ, որբերն ալ միասին հաշուելով: Ցարդ Հալէպ հասած են 2000 Մարաշցիներ, կը գրէ Սուր. Մամուլ»[3]: Իսկ «Վերապրող հաճնցիներ» լուրի մեջ կարդում ենք, որ ամերիկացի միսիոներների տրամադրած տեղեկատվության համաձայն, քեմալականների մոտ էին գտնվում մի քանի տասնյակ ցեղասպանությունը վերապրած հաճնցիներ[4]:

Թերթը «Պոլսահայերը և որբերը» վերնագրով լուրի մեջ տպագրել էր Ամերիկյան Նպաստամատույցի Նյու Յորքի Կենտրոնական վարչության այն հեռագրից հատված, որն ուղարկել էին նույն կառույցի Վաշինգտոնի նահանգային տնօրինությանը[5]: Այնտեղ մասնավորապես նշված էր, որ Ամերիկյան Նպաստամատույցն սամեն ամիս պոլսահայ համայնքից ստանում էր 20.000 դոլար. «Այս գումարը աւելի քան կէսը կը կազմէ այն ծախքերուն, որ անհրաժեշտ են Պոլսոյ որ-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2838 («Որբ ունեցողներուն»):

[3]Նույն տեղում, 1922, թիվ 2862 («Մարաշի հայերը»):

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում, 1922, թիվ 2913 («Պոլսահայերը և որբերը»):

բանոցներուն համար»: Ասվում էր նաև, որ հիշյալ կազմակերպությունն «Ամերիկայի մէջ աւելի քան մէկ միլիոն տոլար ստացած էր Հայերէն իրենց բախտակիցներուն համար»[1]:

Էսկիշեհիրից ստացած տեղեկությունների համաձայն տարբեր վայրերից այնտեղ էր հավաքվել հայկական 500 ընտանիք[2]: Պատրիարքարանից հրահանգել էին Կ. Պոլսում գտնվող Ղազարոս քահանային վերադառնալ իր Էսկիշեհիրի թեմը: Այսպես էր նշված «Էսկիշեհիրի մեջ» լուրի մեջ[3]: Ըստ թերթի հրապարակումների՝ կամաց-կամաց կարծես արևմտահայ գավառներում փրկված հայերը փորձում էին կարգավորել իրենց կյանքը, սակայն, ի վերջո, նրանց ջանքերն իզուր էին, քանի որ թուրքական իշխանություններն ուզում էին առանց հայ տեսնել Արևմտյան Հայաստանը և ամեն ինչ անում էին այդ ծրագիրը կենսագործելու համար: Այս տեսանկյունից բնորոշ էր «Հայերը Արաբկիրի մեջ» լուրը: Այն հայտնում էր, որ Արաբկիրում զինվորագրությունից զերծ մնացած տղամարդիկ և մի շարք կանայք աշխատում էին տեղի արհեստանոցներում[4]: «Հայ ժողովուրդը ամեն ջանք ի գործ կը դնէ իր որբերը ինք խնամելու և Ամերիկեան Նպաստամատոյցին վրայ բեռ չըլլալու համար: Վերջերս դպրոց մը բացուած է, ուր կը յաճախեն բազմաթիւ աշակերտներ»[5],- նշվում էր թերթում տպագրված այդ նյութում: «Ընթացիկ կյանք» բաժնում լուր կար այն մասին, որ Քեմալ փաշայի կառավարությունը որոշել էր «ընտրութեանը ձեռնարկել 3 հայ երեսփոխաններու, որոնք Անատոլուի 150.000 Հայերուն ձայնը պիտի ներկա-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2913 («Էսկիշեհիրի մեջ»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1922, թիվ 2913 («Հայերը Արաբկիրի մեջ»):

[5]Նույն տեղում:

յացնեն Ազգ. մեծ ժողովին մէջ»[1]: Ընդ որում, այս տեղեկատվությունը «Ճակատամարտը» քաղել էր Էնկյուրիի «Հաքիմիէթը Միլլիէ» պաշտոնաթերթից[2]:

«Նպաստամատույցը Մալաթիո մեջ» լուրը ներկայացնում էր Խարբերդից վերադարձած Ամերիկյան Նպաստամատույցի ներկայացուցիչ օրիորդ Էդիթ Վուդի հուլիսի մեկին գրած տեղեկագիրը[3]: «Անցեալ դեկտ. մէկին, երբ պաշտօնով Մալաթիա մեկնեցայ, ողբալի կացութեան մը մատնուած 600 գաղթականի երախաներ գտայ: Մալաթիոյ մէջ գտնուող այս մարդկային էակներու թշուառութիւնը երեւակայածէս աւելի էր: Ժանտատենդը, ծաղիկը, անօթութիւնը, թանջքը և աչքի վէրքերը Մալաթիոյ սովորական հիւանդութիւններն էին: Առաջին գործս եղաւ մաքրել այս երախաներուն վրան-գլուխը: Հագուստ կարելու գործը յանձնեցի անգործ մարդոց, և 3 ամսուան մէջ շուրջ 3000 ձեռք հագուստ պատրաստուեցաւ»[4],- նշում էր Է.Վուդը:

«Գործնական կրթություն հայ որբերուն» թղթակցությունը հայտնում էր լուր այն մասին, որ Ամերիկյան Նպաստամատույցի ղեկավար պարոն Չ. Վիքրին Զավեն պատրիարքի հետ պայմանավորվածություն էր ձեռք բերել Կ. Պոլսից դուրս հողատարածք վարձել՝ հայ որբերին հողագործության, բանջարագործության բնագավառից գիտելիքներ տալու նպատակով[5]: Պատրիարքն առաջարկել էր Նպաստամատույցին բանջարագործության ծրագրի շրջանակներում հայ որբերին գի-

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2913 («Ընթացիկ կյանք»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 2929 («Նպաստամատույցը Մալաթիո մեջ»):

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում, 1922, թիվ 2941 («Գործնական կրթություն հայ որբերուն»):

տելիքներ տալ Ազգային հիվանդանոցի հանդիպակաց հողակտորի վրա[1]:

1922 թվականին «Հայկական կյանք» բաժնի լուրերից տեղեկանում ենք, որ Ամերիկյան Նպաստամատույցը դադարեցրել էր Ռոդոսթոյի հայ գաղթականներին նպաստ բաժանելու իր ծրագիրը՝ դա պատճառաբանելով այն հանգամանքով, որ Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսը խնդրանքով դիմել էր Հայ բարեգործական ընկերությանը՝ Ռոդոսթոյի հայ գաղթականների կարիքները հոգալու համար[2]: Վերջինը բավարարել էր այդ խնդրանքը՝ տրամադրելով 2200 ոսկի[3]:

«Կոչ մը Սեբաստիո և Փոքր Հայքի վերապրողներուն «Եղեռնապատումին» համար» հոդվածը գրախոսական էր, որտեղ հեղինակը տեղեկացնում էր, որ Սեբաստիայի ջարդերից փրկվածների մեջ էր հայտնի բանաստեղծ և երկարամյա ուսուցիչ Կարապետ Գաբիկյանը, որը, Հալեպի հայ գաղթականների կայանում ապաստանելով, գրել էր ավելի քան 700-էջանի փաստավավերագրական գիրք սեբաստահայերի ջարդի, նրանց գաղթի քարավանների և փրկության մասին[4]: Այդ գիրքը նա վերնագրել էր «Եղեռնապատում»[5]: Կ. Գաբիկյանը կոչ էր անում արտերկրում (մասնավորապես ԱՄՆ-ում գործող Սեբաստիայի վերաշինության միությանը) և Կ. Պոլսի Սենեքերիմյան հայրենակցական միությանը, հարուստ սեբաստա-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2952 («Հայկական կյանք»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1922, թիվ 2990 («Կոչ մը Սեբաստիո և Փոքր Հայքի վերապրողներուն «Եղեռնապատումին» համար»):

[5]Նույն տեղում:

ցիներին ու նրանց կազմակերպություններին հովանավորել այդ գրքի հրատարակության գործը[1]:

«Հոն զարմանալի պարզութեամբ և բնականութեամբ պատմուած են Փոքր Հայքի և մասնաւորապէս Սեբաստահայութեան տարագրումի ու նահատակումներու բոլոր սարսռեցուցիչ դրուագները: Հեղինակը պատմագրի մը կատարեալ խղճմտութեամբ նախապատմականը ըրած է յայտնի ջայդարար Մուսամմէրի՝ Սեբաստիոյ կուսակալ նշանակուելէն յետոյ եկող ժամանակաշրջանի անցքերուն, մեծ սպանդի կազմակերպումին, յիշելով բոլոր քստմնելի դերակատարներու անունները, փաստացի իրողութիւններով ու ժամանակագրական կարգով: Կը պատմէ գաւառի ծանօթ դեմքերու նահատակման պարագաները, յետոյ կը հետեւի դէպի անապատները քշուող կարաւաններուն և մանրակրկիտ կը թուէ սարսռացուցիչ պատկերներ մեր մայրերու, քոյրերու, բոլոր տկար ու անպաշտպան բնակչութեան անօրինակ ու աներեւակայելի տառապանքների, բնաջնջումի:

Կ.Գաբիկեանի գործը գերազանցապէս յուզիչ և շահագրգռական ըլլալով հանդերձ, կը պարունակէ նաև պատմութեան համար թանկագին փաստեր, վաւերաթուղթեր և վկայութիւններ, որոնք ապագային պիտի կազմեն ցեղի մարտիրոսութեան յուշարձանին ատաղձը: Ան Սեբաստահայութեան անուգիտ Յիշատակարանն է»[2],- համոզված պնդում էր Հռոմից ուղարկված իր այս գրախոսականում Ա. Պատրիկը:

«Կյանքը Տրապիզոնի մեջ» թղթակցության մեջ «Ճակատամարտի» խմբագրությանը դիմած տրապիզոնցի մի խումբ ճամփորդներ տեղեկացրել էին, որ Մուդրոսի զինադադարից

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

հետո Տրապիզոնում էին հավաքվել արևմտահայ գավառից 450 գաղթական և 160 որբ[1]: «Այս գաղթականներու մեծ մասը, ինչպէս նաեւ շրջանի հայութենէն մնացած բեկոր մը, հողագործներ էին, որոնց աշխատանք կը մատակարարէր Նպաստամատոյցը: Մուրացիկ ոչ մէկ հայ կար և ոչ մէկ երախայ՝ փողոցը մնացած: Որբերը, որոնց մօտաւորապէս 100ը աղջիկ և 60ը մանչեր էին, կը պահուէին Ամերիկեան Նպաստամատոյցի կողմէն»[2],- գրում էր թերթը: Տեղի առաջնորդարանը Գարեգին եպիսկոպոս Խաչատուրյանի գլխավորությամբ զինադադարից հետո գործուն մասնակցություն էր ունեցել որբերի խնամքին, ի թիվս այլ պարտականությունների, ստանձնելով նրանց կրթության գործը[3]: Նպաստամատույցը օգնել էր հայոց ազգային իշխանություններին, որ հիմնեին «Սահակ-Մեսրոպյան» երկսեռ տարրական վարժարանը[4]:

1922 թվականի նոյեմբերի 4-ին հայտարարվել էր քրիստոնյաների՝ Թուրքիայից դուրս մեկնելու թույլտվության հրամանի մասին[5]: Թերթը տեղեկացնում էր, որ «հայերու մեծ մասը մեկնած է, և հազիւ 100-120 հոգի կը մնան հոն»[6]:

«Հայկական կյանք» բաժնի «Պոլսո գաղթականներուն թիվը» վերնագրով լուրի համաձայն՝ 1923 թ. մայիսի 13-ի դրությամբ Թուրքիայի մայրաքաղաքի 6790 ժամանակավոր կեցության կայաններից ամենաշատ՝ 1980 հայ գաղթականները գտնվում էին Օրթագյուղում, իսկ Պեշիկթաշում՝ համապատասխանաբար 1373 հոգի: Խասգյուղում կային՝ 600, Գումգա-

---

[1]Նույն տեղում, 1923, թիվ 3101 («Կյանքը Տրապիզոնի մեջ»):
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

փույում՝ 988, Գատրգյուղում՝ 290, Անտոնյանց վանքում՝ 107, Այնալը Չեշմեում՝ 78, Ղալաթիայում՝ 750, Մաքրիգյուղում՝ 114, Սամաթիայում՝ 402, Սկյուտարում՝ 187 հայ գաղթականներ[1]: «Հայկական կյանք» բաժնում տպագրել էին «Հայրենիք» պարբերականից քաղված «Վանի հայերը» վերնագրով թղթակցությունը[2]: Այդ տեղեկատվության համաձայն՝ Վանում և նրան մոտ գտնվող Սղկա գյուղում դեռևս կար 2500 հայ՝ հիմնականում ծեր կանայք ու տղամարդիկ[3]: Իսկ «Չափահաս որբերը կարձանագրվին» թղթակցությունը տեղեկացնում էր, որ ցեղասպանությունից փրկված 14 տարեկանից մեծ 400-450 հայ որբերին, որոնցից շատերը սովորում էին Կեդրոնական, Էսայան, Գուլելիի վարժարանների բարձր դասարաններում, արձանագրել էին՝ ուղարկելու համար Քավալայում գտնվող անգլիական ծխախոտի գործարան՝ իբրև բանվորական աշխատուժ[4]:

«Ճակատամարտը» տպագրել էր «Սամսոնի հայերը իրենց տեղերը կվերադառնան» լուրը, որտեղ նշվում էր, թե պատրիարքարանից և մասնավոր անձանցից թերթի ստացած նամակները վկայում էին Սամսոնում հավաքված հայերի մի մասի՝ Սեբաստիա և Ամասիա վերադառնալու և մյուսների՝ նույն վայրերը տանող կառախմբին սպասելու տեղեկատվության մասին[5]: «Սամսոնի տեղական իշխանությունը հաղորդած է, որ Էնկիւրիի կառավարությունը նպատակ չունի Հայերը հեռացնելու երկրէն, և անոնք, որ կ'ուզեն ետ դառնալ,

---

[1]Նույն տեղում, 1923, թիվ 3223 («Պոլսո գաղթականներուն թիվը»):

[2]Նույն տեղում, 1923, թիվ 3223,(«Վանի հայերը»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1923, թիվ 3222 («Չափահաս որբերը կարձանագրվին»):

[5]Նույն տեղում, 1923, թիվ 3305 («Սամսոնի հայերը իրենց տեղերը կվերադառնան»):

հաւասարապէս պիտի օգտուին օրէնքներէն և պիտի վայելեն իրենց սեփականութեան իրաւունքը: Այս յայտարարութեան վրայ անոնք, որ շոգենաւի կը սպասէին արտասահման մեկնելու համար, պատրաստուեր են դառնալու իրենց տեղերը: Սեբաստիոյ մէջ ազգային հաստատութիւններէ և կալուածներէ անոնք, որ պատերազմական վիճակի պատճառով գրաւուած էին, վերադարձուած են, և խոստացուած է միւս տեղերն ալ վերադարձնել»[1],- կարդում ենք թերթում: Նոյն բաժնի մեկ այլ լուրից իմանում ենք, որ Ամերիկյան Նպաստամատույցը դադարեցրել էր իր գործունեությունը Կ. Պոլսում՝ այնտեղ որպես իր կառույցի ներկայացուցիչ թողնելով Հարություն Խաչատուրյանին և ղեկավար ողջ կազմով տեղափոխվելով Աթենք[2]:

«Ճակատամարտն» անդրադարձել էր Սիրիայում, Լիբանանում, ԱՄՆ-ում և այլուր ցրված հայ գաղթականների ճակատագրին նույնպես: Օրինակ՝ «Հայկական կյանք» բաժնում զետեղված նմանաբնույթ նյութում՝ «Գաղթականները և անոնց գործերը Սուրիո մէջ» վերլուծական հոդվածում թերթը տպագրել էր հատված փետրվարի 21-ին Դամասկոսից ստացված նամակից հայ գաղթականների թվային տվյալների և որբերի համար տարվող աշխատանքների մասին[3]: Պատրաստված փութկոտ վիճակագրության համաձայն՝ «Իսկէնտէրունի մէջ ներկայիս 13.000 գաղթականներ կը գտնուին: Ամերիկացի միսիոնարներ 6-8 տարեկան մանուկներու համար վարժարան բացած են, ուր 60 աշակերտներ կան, ու մտադիր են անոնց թիւը 150ի բարձրացնել: ՀԲԸՄի տեղական

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 2830 («Գաղթականները և անոնց գործերը Սուրիո մեջ»):

մասնաճիւղը կեդրոն վայր մը որբանոցի շինութեան ձեռնարկած է: Տարսոնի և Տօրթ Եօլի Կարմիր խաչերը միասնաբար դարմանատուն մը բացած են: Շաբթուան մէջ մէկ քանի անգամ անոնք քէմփը կ'այցելեն և հիւանդներուն դեղ կը մատակարարեն: Դուրսէն ակնկալուած նպաստներուն փոխարէն տեղական ուժերը, հակառակ իրենց գաղթական վիճակին, իրենց օժանդակութիւնը չեն զլանար»[1]:

Հաղորդվում էր, որ մինչև փետրվարի 13-ը բարեհաջողությամբ, առանց կողոպտվելու և սպանվելու, Հալեպ էին հասել Մարաշից, Այնթապից և Քիլիսից եկող հայ գաղթականներն ու որբերը: Այդ պահի դրությամբ Հալեպում եղել էր 13.600 հայ գաղթական[2]:

Այդ հրապարակման համաձայն՝ 1922 թվականի փետրվարի 7-ին Ամերիկյան Նպաստամատույցի՝ Սիրիայի մասնաճյուղի տնօրեն Մաթե Մեքեֆինն առաջարկել էր ժողով գումարել և կարծիքներ փոխանակել այն հարցի վերաբերյալ, թե լավ չէ՞ր լինի Մարդինի, Մարաշի, Ուրֆայի և Տիգրանակերտի որբանոցները տեղափոխել և միավորել «Ճէպէի» կամ Բեյրութի մեջ՝ մեկ որբանոցում[3]: Այդ ժողովը գումարվել էր: Դրան մասնակցել էին հայկական տարբեր միությունների ներկայացուցիչներ: Որոշում էր ընդունվել Ջեբել փոխադրել որբերին. «Հալէպի Ամերիկեան Նպաստամատոյցի կեդրոնը և որբանոցը Ճէպէլ պիտի փոխադրուին, նպաստի բաշխման գործը յանձնելով Ազգ. Միութեան և Բարեգործականին»[4]:

«Հալեպի հայկական որբանոցը» նյութում ներկայացված էր այդ հաստատության վարչության կոչն՝ ուղղված արտասահ-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:

մանի հայությանը[1]: Այդ որբանոցը հիմնվել էր 1915 թվականի հուլիսի 30-ին[2]: 1915-1922 թվականներին պատսպարել էր 8000 որբի՝ նրանց ազատելով մահվան ճիրաններից և խնամելով այդ երեխաներին[3]:

Որբանոցի մատակարարության հոգսն իրենց վրա էին հաջորդաբար վերցրել անգլիացիները, ֆրանսիացիները, ամերիկացիները, վերջում՝ Ամերիկյան Նպաստամատույցը[4]: Վերջինի գործունեության պայմանաժամկետն սպառվելու էր 1922 թվականի սեպտեմբերի մեկին: Նպաստամատույցը խոստանում էր դրանից հետո հոգալ միայն 15 տարեկանից փոքր և պատերազմի պատճառով որբացածների հոգսերը: Մնացած որբերի ապրուստի խնդիրն որբանոցը պիտի փորձեր լուծել հայկական նպաստի աղբյուրներով[5]:

Որբանոցի վարիչների մտատանջության նյութը նաև նոր եկող որբերն էին, որոնք գալիս էին Մոսուլից, Բաղդադից, Դեր Զորից, Խարբերդից, Մարդինից, Ուրֆայից այն հույսով, որ Հալեպի որբանոցը պատրաստ էր իրենց ընդունել[6]: Ընդ որում, տեղեկացվում էր, որ Ամերիկյան Նպաստամատույցը Հալեպով անցնող ճանապարհով Բեյրութ էր տեղափոխում Խարբերդում, Մարդինում և Ուրֆայում գործող իր որբանոցները[7]: Այդ քարավաններին էին խառնվում Հալեպի որբանոց հասնելու համար հիշյալ տարածքներ թուրքերից փախած

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2977 («Հալեպի հայկական որբանոցը»):
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:
[7]Նույն տեղում:

հայ որբերը[1]: «Վերջին 3 ամսուան ընթացքին 200է աւելի են նորեկները»[2],- գրված էր թերթում:

Հալեպի հայկական որբանոցը կոչ էր անում ողջ հայությանն օգնել իրենց աշխատանքը հունի մեջ պահելուն՝ հանուն այդ նպատակի անելով հանգանակություններ ու նվիրատվություններ[3]:

«Հայերը Լաթաքիո մեջ» լուրը տեղեկացնում էր, որ այնտեղ բնակվող արևմտահայ գաղթականներն սկսել էին խանութներ բացել և «երեւալ հրապարակին վրայ»[4]: «Հայ գործավորներու փոքր մէկ մասը միայն անգործ է: Հայ գաղթականներու վիճակը լաւ է, բաղդատմամբ ուրիշ տեղերու»[5],- գրում էր թերթը: «Ամերիկա գաղթողներու համար» նյութում նշվում էր, որ ԱՄՆ-ում 1910 թվականի դրությամբ բնակվող հայերի առնվազն 2/3-ը ծնվել էր Արևմտյան Հայաստանում[6]: Միացյալ Նահանգների գաղթային սպաշտոնեութունը 1922 թվականի հուլիսի մեկից թույլ էր տվել Թուրքիայից Ամերիկա տեղափոխվել 2388 արևմտահայի՝ նախկին 653-ի փոխարեն[7]: «Այս նոր կարգադրութեամբ ոչ միայն աւելի շատ հայեր Թուրքիայէն Ամերիկա պիտի կրնան երթալ այս տարի, այլ անցեալ տարուան վրայ 377 հոգի աւելի պիտի կրնան երթալ Հայաստանէն և Թուրքիայէն միասնաբար: Անցեալ տարի այս 2 եր-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1922, թիվ 2944 («Հայերը Լաթաքիո մեջ»):

[5]Նույն տեղում:

[6]Նույն տեղում, 1922, թիվ 2944 («Ամերիկա գաղթողներու համար»):

[7]Նույն տեղում:

կիրներէն միասնաբար 2241 հոգի կրնային երթալ, մինչ ներկայ տարուան մէջ՝ 2618 հոգի»[1],- կարդում ենք թերթում:
«Հայերը Սուրիո մեջ» թղթակցության մեջ նշվում էր, որ Ամերիկյան Նպաստամատույցի Լիբանանի մասնաճյուղի ղեկավար պարոն Մ. Մեքեֆինի ջանքերով թուրքական կառավարությունը շուտով Խարբերդից Լիբանան էր ուղարկելու հայ որբերին. «Մօտ օրէն կը սպասուի անոնց ժամանումին»[2]: Այդ թղթակցությունից տեղեկանում ենք, որ Կիլիկիայից Սիրիա տեղափոխված հայ գաղթականների նկատմամբ սկզբնական շրջանում իսլամ դավանող արաբները «կարգ մը գրգռութիւններ ըրին, բայց, շնորհիւ ձեռք առնուած միջոցներու, կարելի եղաւ հակազդել: Նորընտիր ներկայացուցչական խորհուրդը իր մէկ նիստին մէջ սկզբունքով ընդունած է դրսեկ պաշտօնեաներու՝ կառավարական գործերու մէջ մասնակցութեան իրաւունքը: Այս որոշումէն օգտուողներ չեն եղած տակաւին»[3]:
Բաղդադից պատրիարքարանին տեղեկացնում էին, որ Մոսուլի որբերն ամբողջությամբ տեղափոխվել էին Երուսաղեմ. «Մուսուլի մէջ ապաստանարան մը պահուած է, ազատագրուած որբերը հոն հաւաքելու համար»[4]: ՀԲԸՄ-ն որոշել էր յուրաքանչյուր որբի համար հատկացնել 12 անգլիական ոսկի[5]:
«Անատոլուի որբերը Պէյրութ կը փոխադրուին» վերնագրով լուրը «Արև» պարբերականից էր, որին Բեյրութից տեղեկացրել էին, թե Ամերիկյան Նպաստամատույցն սկսել էր Բեյրութ

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում, 1922, թիվ 2952 («Հայերը Սուրիո մեջ»):
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում, 1922, թիվ 2850 («Հայկական կյանք»):
[5]Նույն տեղում:

տեղափոխել Անատոլիայի բոլոր հայ որբերին[1]: «Գոնիայի որբերը հասան, իսկ քանի մը օր առաջ ալ Կեսարիոյ Ս. Կարապետի որբերը եկան-միացան տեղիս Ամերիկեան որբանոցին: Որբերու հետ եկան նաև քանի մը ընտանիքներ Թալասէն:

Միս Լաքրրզ Թալաս վերադարձաւ, միս Իվիսին հետ մնացած որբերը փոխադրելու համար: Պատ. Թորոսն ալ պաշտօն ստանձնած է Եօզղատի որբերը Թալաս համա- խմբելու, վերջը ամեն մէկը այս կողմ ճամբայ հանելու համար: Երկու ամիսէն փոխադրութիւնները վերջացած պէտք է ըլլան: Հոս ամեն պատրաստութիւններ տեսնուած են արդէն»[2],- կարդում ենք թերթում:

Որբերին առնչվող արտատպված լուրերից հետաքրքիր էր իր պարունակած տեղեկատվությամբ հետևյալը: Երուսաղեմից «Հուսաբեր» պարբերականին հայտնել էին, թե Նահր Էլ Օմարից Երուսաղեմ փոխադրված 870 որբերը մեկ ամիս էր, ինչ հաստատվել էին տեղի հայկական վանքում «կանխաւ իրենց յատկացուելու համար պարպուած տրամադրելի զոյգ մը մեծ, բայց ոչ բաւարար թաղերու մէջ»[3]:

Այդ որբերին հատկացված սենյակները փոքր էին՝ չնայած այն հանգամանքին, որ ամեն սենյակում «գրեթէ քիթ քիթի, խիտ առ խիտ թխմուած էին 18-20 որբեր»: Ընդ որում, այդ սենյակները նրանց համար ծառայում էին թե՛ իբրև ննջարան, թե՛ իբրև ճաշարան[4]:

Հիշյալ որբանոցն ուներ իր սեփական 20 մահճակալով հիվանդանոցը, ինչպես նաև մասնավոր բժիշկ: Աղջիկների ու

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 3078 («Անատոլուի որբերը Պէյրութ կը փոխադրուին»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

տղաների հիվանդանոցներն առանձին հարկաբաժիններում էին գտնվում[1]:

Որբերին տրվող կերակուրը և հացը բավարար էին, բայց սննդարար չէին, թեև որբերը «չափազանց գոհ էին իրենց ներկայ վիճակէն»[2]:

«Նահր Էլ Օմարի գաղթականները» թղթակցության մեջ ներկայացվում էր այդ բնակավայրում տեղակայված 2790 արևմտահայ տարագիրների վիճակը[3]: Նշվում էր, որ նրանց շարքերը գնալով նոսրանում էին մահացողների թվի ավելացման հետևանքով[4]: Մահանում էին հիմնականում սովից, քանի որ դադարեցվել էր անգլիական կառավարության կողմից նրանց նպաստ բաժանելու գործընթացը[5]: Բաղդադից, Միջագետքի հայերի կողմից, Լոնդոն ուղարկված Պ. Կարիբյանը Անգլիայի Գաղթային նախարարությանը փորձել էր ներկայացնել տեղի հայ գաղթականների խնդիրները[6]: Լոնդոնում էլ խոստացել էին Խորհրդային Հայաստանի հետ ճշտել, թե ի վիճակի՞ էին հոգալ այդ փախստականների՝ իրենց երկիր տեղափոխելու նախսը, որը կազմելու էր շուրջ 30.000 անգլիական ոսկի[7]:

«Ճակատամարտն» «Արմենիա» պարբերականից վերցրել էր «Գաղթականներուն համար» վերնագրով տեղեկատվությունը[8]: Փարիզում գործող «Գաղթականների սպասարկության» կենտրոնական մարմնում կամավոր աշխատում էին եվրո-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 2960 («Նահր Էլ Օմարի գաղթականները»):

[4]Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում:

[8]Նույն տեղում, 1922, թիվ 2868 («Գաղթականներուն համար»):

պացի բարձրաստիճան կանայք[1]: Այդ կառույցի Մարսելի մասնաճյուղում սպասարկվում էին Սիրիայից, Կիլիկիայից և այլ վայրերից գաղթած հայեր, որոնք «աչքի կամ ուրիշ հիւանդութեանց պատճառով կը ստիպ- ուին մնալ հոս, կը վայելեն աջակցութիւնը այս բարեգործական մարմնին, որ, անոնց բժշկութեան և միւս պէտքերը հոգալէ վերջ, ճամբորդութեան դիւրութիւններ ալ կ'ընծայէ»[2]:

«Կես միլիոն գաղթականներու հոգը». այսպես էր վերնագրված սեպտեմբերի 8-ին Աթենքից Լոնդոնի թերթերին ուղարկված և «Ճակատամարտում» արտատպված այս լուրը[3]: Նշվում էր, որ Աթենքում այս կես միլիոն գաղթականները ծանրացնում ու բարդացնում էին տեղաբնակների կյանքը[4]: «Ամեն օր նոր բազմութիւններ կը հասնին, մտահոգութեան մատնելով իշխանութիւնները, որոնք հազիւ չորաբեկ հաց մը կրնան տալ: Մելանիկի մէջ, ուր մօտաւորապէս 150.000 փախստականներ խոնուած են, ջուրի և ուտելիքի սաստիկ նեղութիւն կայ: Միւս կողմէ, ժանտախտի դէպքեր կը ծանուցուին: Կ'ըսուի, թէ քոլերա և թիֆիւս ալ ծագած են Պիրէօնի մէջ: Սամօսի մէջ 35.000 փախստականներ սովահար են: Քրիստոնեայ փոքրամասնութիւնը Փոքր Ասիայէն հեռացնելու թրքական քաղաքականութիւնը վճռապէս գլուխ հանուեցաւ: Իզմիրի քրիստոնեայ թաղերը գրեթէ սրբուած են: Ժողովուրդը կոտորուած, փախած կամ աքսորուած է»[5],- կարդում ենք թերթում: «Ականատեսները ի՞նչ կ'ըսեն Իզմիրի հրդեհի շուրջ» վերլուծականում նշվում էր, որ այդ հրդեհն, ամենայն

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 3015 («Կես միլիոն գաղթականներու հոգը»):

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

հավանականությամբ, տեղի էր ունեցել Մուստաֆա Քեմալի կարգադրությամբ 2 պատճառով.

1. Իզմիրը դարձնել զուտ թուրք ազգաբնակչություն ունեցող քաղաք՝ այդ նպատակով այրելով ու ոչնչացնելով քաղաքի եվրոպական և քրիստոնյաներով բնակեցված թաղամասերը,

2. Իզմիրում կազմակերպել քրիստոնյաների տների, խանութների, ունեցվածքի թալան՝ դրանով վճարելով քեմալական զորքի «պաշըպօզուք» վարձկաններին[1]:

«Փոխանակել, բայց ինչպե՞ս» խմբագրականում, անդրադառնալով Իզմիրից հայերի և մյուս քրիստոնյաների տեղահանման խնդիրներին, թերթը գրում էր, որ դա Մուստաֆա Քեմալի և Միլլի կառավարության մշակած ծրագրի համաձայն էր տեղի ունենում[2]: «Միլլի իշխանութիւնը արդէն խօսքէն գործի անցած է և կ'ուզէ կատարուած իրողութեան առջեւ դնել աշխարհը: Իզմիրի հրկիզումէն և բնակիչներու նօսրացումէն յետոյ, մնացած անհամար բազմութիւնը, մեծամասամբ կիներ և մանուկներ, քշուեցան երկրէն դուրս: 18-45 տարեկան այրերը նախապէս տարուած էին ներս»[3],- կարդում ենք այս խմբագրականում: Նշվում էր, որ թուրքական կառավարությունն ուզում էր քրիստոնյա ազգաբնակչությանը փոխանակել այլ երկրներում ապրող իսլամների կամ թուրքերի հետ: «Թուրքերը վճռած են Թուրքիան վերածել համասեռ կուռ

---

[1]Նույն տեղում, 1922, թիվ 2999 («Ականատեսները ի՞նչ կ'ըսեն Իզմիրի հրդեհի շուրջ»):
[2]Նույն տեղում, 1922, թիվ 3018 («Փոխանակել, բայց ինչպե՞ս»):
[3]Նույն տեղում:

զանգուածի մը: Այս երկրին մէջ եթէ պիտի գտնուին ուրիշ տարրեր, անոնք ալ պիտի նկատուին ոչ թէ ցեղագրական միութիւններ, այլ տարբեր դաւանանքի Թուրքեր: Ինչո՞ւ Թուրքիոյ մէջ բոլորը Թուրք չկոչուին, Հայ կամ Յոյն կամ Հրեայ անուանուին: Կրօնը կրնայ տարբեր ըլլալ, իսկ ազգութիւնը մէկ է՝ Թուրք»[1],- գրում էր թերթը:

«Ո՞ւր տեղափոխել» խմբագրականում պարբերականն արծարծում էր հայ գաղթականների տեղափոխման խնդիրները[2]: «Գաղթէ գաղթ շատ են տարբերութիւնները: Այսպէս՝ Կիլիկիոյ օրինակը: Տասնեակ հազարաւոր ժողովուրդ շաբաթներով ծովերուն վրայ մնաց, որովհետեւ նախատեսուած վայրերը չուզեցին ընդունիլ գաղթականները կամ ընդունեցան աննշան մաս մը միայն: Երկար դիմումներէ և տառապանքներէ յետոյ կարելի եղաւ քանի մը հազար հոգի ցամաք հանել Կիպրոս, իսկ մեծամասնութիւնը՝ Սուրիա: Մաս մը գաղթականներ անցեր են ուղղակի Թրակիա»[3],- կարդում ենք թերթում:

«Անատոլուեն հասած գաղթականները» լուրը տեղեկացնում էր, որ արևմտահայ գավառներից Կ. Պոլիս բերված հայերը հետզհետե պիտի փոխադրվեին Հունաստան և ուրիշ երկրներ[4]:

«1000 հայեր միայն» խմբագրականում անդրադառնում էին այն իրողությանը, որ Խորհրդային Հայաստանը, ելնելով Թուրքիայում ստեղծված հանգամանքներից, թույլատրել էր ընդամենը 1000 հոգու տեղափոխվել հայրենիք[5]:

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2982 («Ո՞ւր տեղափոխել»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1922, թիվ 3041(«Անատոլուեն հասած գաղթականները»):

[5]Նույն տեղում, 1922, թիվ 3044 («1000 հայեր միայն»):

Թերթը դա առիթ էր համարում, որպեսզի Հայաստանը դառնար հարազատ կայանը «4 հովերուն ցրուած Հայերուն»[1]:

«Որբերը կը փոխադրվին» լուրից տեղեկանում ենք հետևյալի մասին: «Պ. Քէնէտի, որ Լոնտոնի Լորա քաղաքապետի դօնտով որբանոց մը բացած է Պոլսոյ մէջ, իր որբերը փոխադրեց երէկ Քորֆու: Ամերիկեան Նպաստամատոյցի որբանոցներն ալ պիտի փոխադրուին Պուլկարիա: Հաշիւ եղած է, որ որբերու Յունաստան և Պուլկարիա փոխադ- րութեամբ կարեւոր չափով խնայողութիւն պիտի ըլլայ: Պուլկարիա պիտի կրնայ ընդունիլ 1000է աւելի որբ: Որբուհիներն ալ պիտի փոխադրուին մօտ ատենէն»[2]:

«Որբուհիներն ալ պիտի փոխադրուին» լուրից տեղեկանում ենք, որ Կ.Պոլսից հայ որբերի Հունաստան տեղափոխվելու գործը մոտեցել էր ավարտին, և սոյա որբերին տեղափոխել էին Քորֆու[3]: Ավարտին էր մոտենում նաև հայ որբուհիների փոխադրման գործը. «Դպրոցասէր Տիկնանց որբուհիներն ալ միասին պիտի տարուին»[4]:

Թերթն արտատպել էր «Թայմզ» պարբերականից դրա Լոզանի թղթակցի՝«Հայ և հույն գաղթականները» վերնագրով հետևյալ հեռագիրը[5]:

«Յունաստանում կան 50.000ի չափ հայ գաղթականներ, որոնց կ՚օգնէ նաեւ յոյն կառավարութիւնը՝ հակառակ իր միւս ատիպողական հոգերուն: Այս գաղթականները զրկուած են ամեն բանէ.- ուտեստ, զգեստ եւ բնակարան: Ասոնք խնամելու

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 3048 («Որբերը կփոխադրվին»):

[3]Նույն տեղում, 1922, թիվ 3065 («Որբուհիներն ալ պիտի փոխադրվին»):

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում, 1922, թիվ 3065 («Հայ և հույն գաղթականները»):

ամենամեծ դժուարութիւնը այն է, որ մեծ մասամբ կը բաղկանան կիներէ, տղոցմէ եւ ծերերէ:

Այժմ Յունաստան կը հասնին նաեւ 18.000 հայ որբեր, ու կը կարծուի, թէ ասոնք առաջին կարաւանն են այն 350.000 ժողովուրդին, զոր Եւրոպա պիտի ստիպուի խնամել յառաջիկայ ձմրան միջոցին:

Տոքթ. Նանսէն կ'ըսէ, թէ այս խնդիրը կը սպառնայ ամբողջ Մերձաւոր Արեւելքի ընկերային, քաղաքական եւ տնտեսական հաւասարակշռութեան: Աշխարհի միւս մասերը պէտք է անմիջական օգնութեան հասնին»[1]:

«Մելանիկի հայ գաղթականներու խնամարկութիւնը. ի՞նչ կերպով կ'օժանդակեն հայերն ու օտարները» հոդվածից տեղեկանում ենք, որ «Ճակատամարտի» թղթակիցը հանդիպել և զրուցել էր Մելանիկում տեղավորված հայ գաղթականների խնամատարական մարմնի տնօրեն Թ. Բոյաջյանի հետ: Վերջինիս տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հունական կառավարությունը բարյացակամորեն էր տրամադրված հայ գաղթականների նկատմամբ: «Հայ գաղթականները քաղաքներու և գիւղերու մէջ կը վայելեն յոյն գաղթականներու հետ համահաւասար իրաւունքներ»[2],- ասում էր Թ. Բոյաջյանը:

Մելանիկում գործում էին ամերիկյան բարեգործական 3 կազմակերպություն՝ ԵՔԸՄ-ն, Ամերիկյան Նպաստամատուցը և Ամերիկյան Կարմիր խաչը[3]: Թ. Բոյաջյանը նշում էր, որ դրանցից վերջինը զբաղվում էր գաղթականների զգեստավորման հարցը լուծելով, ինչպես նաև՝ նրանց խնամքով, հիվանդների

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1923, թիվ 3082 («Մելանիկի հայ գաղթականներու խնամարկութիւնը. ի՞նչ կերպով կ'օժանդակեն հայերն ու օտարները»):

[3]Նույն տեղում:

բուժմամբ, մանուկներին ու ծերերին կաթ և այլ սննդամթերք բաժանելով. «Գաղթականներու կրթական ու աշխատաւորական պէտքերու մասին առ այժմ ոչ մէկ ծրագիր ունի»[1]:

Ամերիկյան Նպաստամատույցի գործունեությունը Սելանիկում սահմանափակ էր: Այն Սելանիկում իր «ծախքով պիտի հիմնէր 100 անկողինոց մայրանոց մը»[2]:

Սելանիկի Երիտասարդ քրիստոնյաների միությունն ստանձնել էր հայ գաղթական ուսանողների կրթական շահերի պաշտպանությունը՝ «երկրորդական վարժարան աւարտածները ղրկելով Աթէնքի համալսարանը և ուսումնածարաւ պատանիներու համար բանալով իր երեկոյեան դասախօսութեանց դռները»[3]:

Հայ գաղթականների՝ Սելանիկի Խնամատարական մարմնի տնօրենը թերթի թղթակցին վստահեցնում էր, որ ի սկզբանե իրենց կառույցի ուշադրության կենտրոնում էր եղել հայ գաղթական ուսուցիչների, քահանաների և սպաների կացության բարվոքման խնդիրը՝ այդ նպատակով համագործակցելով հունական իշխանությունների հետ[4]: «Հելլէն կառավարութիւնը պատրաստ է Թումպայի գաղթ. կայանին մէջ շինուած 2 սենեակով ու 1 խոհանոցով տաղաւարներէն 10-15ը տրամադրել մեզի, մեր վաստակաւորներու տեղաւորման համար»[5],- ասում էր Թ. Բոյաջյանը: Բացի այդ՝ խոսք էր տրվել աշխատանք տրամադրել նրանց՝ մինչ այդ ապահովելով անհրաժեշտ հագուստով ու սննդամթերքներով[6]:

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում:
[6]Նույն տեղում:

Ազգային խնամատարությունն, այլ բարեսիրական կազմակերպությունների նման, հայ գաղթական ուսուցիչներին, քահանաներին ու սպաներին նույնպես բաժանել էր սպիտակեղեն, կոշիկներ ու անկողին[1]:

Նպատակ կար մեկ վայրում հավաքել հայ որբերին՝ նրանց համար այդ կացարանի ներքո բացելով նաև դպրոց: Հայ բարեգործական միությունն այդ գործը գլուխ բերելու նպատակով իր պատվիրակին էր ուղարկել Սելանիկ[2]:

«Հայ գաղթական մանուկներու կրթութեան անյետաձգելի պէտքը լուրջ նկատողութեան առնուած է: Հայ Խնամատարութիւնը մտադիր է, եթէ իր միջոցները ներեն, հաւաքելու մասնաւոր հաստատութեան մը մէջ բոլոր անհայր ու անմայր որբերը, սկսեալ օրորոցի տարիքէն և հետզհետէ տեղի բաւականութեան չափով բարձրանալով մինչև 10-12 տարեկաններու:

Այս մասին պիտի դիմուի թէ՛ հելլէն կառավարութեան՝ հոգալու որբերու և պաշտօնեաներու սնունդը, թէ՛ Մելիսա անունով որբախնամ օրիորդաց ընկերութեան՝ տրամադրելու համար շէնքը, լոյսն ու ջեռուցումը, և թէ՛ Ամեր. Կ. խաչին՝ հոգալու համար որբերու և պաշտօնեաներու զգեստաւորումը, խնամատարութիւնը, բժշկական սպասարկութիւնը»[3],- ասում էր Թ. Բոյաջյանը:

«Հայկական կյանք» բաժնի լուրերից մեկից տեղեկանում ենք, որ Կ. Պոլսում գտնվող որբերին Հունաստան տեղափոխելուց հետո, թեև հայկական որբանոցները դատարկվել էին, բայց դրանցում կրկին սկսել էին ժամանակավորապես տեղավորել արևմտահայ գավառից մայրաքաղաք հասնող որբերին[4]:

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1923, թիվ 3082 («Հայկական կյանք»):

Խնամատարության մարմնի տնօրենը պատրիարքարանին տեղեկացրել էր, որ գաղթականական կայաններում տեղավորված կամ փողոցներում թափառող հայ որբերի թիվը հասնում էր 900-ի, իսկ հայ գաղթականների թիվը՝ 3000-ի[1]: «Պատրիարքարանը այս տեղեկագիրը ներկայացուցած է բարեսիրական այն օտար մարմնին, որ ասկէ առաջ Պոլիս հասած գաղթականներու բազմաթիւ գաւակներու մասին տեղեկութիւն ուզած էր»[2],- կարդում ենք թերթում:

«Որբերուն դաստիարակության խնդիրը» վերնագիրն ունեցող լուրը տեղեկացնում էր, որ Կ. Պոլսից և ընդհանրապես Թուրքիայից Ամերիկյան Նպաստամատույցի ենթակայության տակ գործող հայկական որբանոցների հայ որբերի՝ Հունաստան կամ Լիբանան փոխադրության գործը գրեթե ավարտված էր[3]: «Մանչ որբերէն զատ որբուհիներն ալ տարուած են Յունաստան: Բացի Դպրոցասէրի և Օրթաքէոյի որբանոցին որբուհիներէն, Գալֆաեան որբանոցէն ալ 16 որբուհիներ տարուած են»[4],- գրում էր «Ճակատամարտի» թղթակիցը:

Ամերիկյան Նպաստամատույցի նախագահ դոկտոր Բարթոնը վստահեցնում էր, որ իրենք որևէ առարկություն չունեին այն հարցում, թե հայ որբերը պետք է ստանային ազգային դաստիարակություն և հայեցի կրթություն[5]:

«Ռումանիա որբեր դրկելու խնդիրը» վերնագրով լուրը տեղեկացնում էր հետևյալի մասին[6]: «Երէկ Խնամատարութենէ տե-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 3070 («Որբերուն դաստիարակության խնդիրը»):

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

[6]Նույն տեղում, 1922, թիվ 3078 («Ռումանիա որբեր դրկելու խնդիրը»):

ղեկացանք, թէ Պոլսէն տարուած որբերուն թիւը 3500 է: Անոնք պիտի զետեղուին Աթէնք, Լաստրաքի և Քօրֆու: Հետզհետէ հասած որբերով անոնց ընդհանուրի թիւը պիտի բարձրանայ 15.000ի: Ասոնք արհեստներով ալ պիտի զբաղին: Ջանք կը թափուի, որպէս զի մաս մը որբեր ալ Ռումանիա փոխադրուին, ուր պիտի տարուին արդէն Գուզկունճուքի Գարսակէոզեան որբանոցին սաները: Ասոնց կրթութեան և պահպանութեան մասին հարկ եղած աշխատութիւնները կատարուած են արդէն:

Խնամատարութիւնը սկսած է պատրաստել նաև գաղթականներու զաւակներու ցուցակը, որ պահանջուած էր պատրիարքարանէ: Ասոնք այն տղաքներն են, որոնց ծնողքները չեն կրնար հոգալ զիրենք: Յոյս կայ, որ ասոնց համար ալ կարգադրութիւն մը կըլլայ»[1]:

«Քորֆուի որբերուն ողբալի վիճակը» թղթակցության մեջ փաստվում էր, թե «որբերու փոխադրութեան ձեւը վսար չի մնար տարագրութենէ»[2]: Տեղի որբանոցում գտնվում էր 1100 որբ: Նրանցից 350-ը ուսանող էր[3]: Որբանոցի կենցաղային և սննդի կազմակերպման հարցերը լուծման կարիք էին զգում. «Սնունդի անբաւականութիւնը և մաքրութեան պէտքը քանիցս նկատողութեանը յանձնուած են որբանոցներու ընդհանուր տնօրէն պ. Նիլէնտին»[4]: Աքիլլեսի պալատում տեղավորված 350 հայ որբ ուսանողների համար քոլեջի ծրագիր էին պատրաստել, բայց նրանց համար չէին ապահովել դասագործընթացի համար անհրաժեշտ ուսումնական կահույք. «Դպրոցական ոչ մէկ պիտոյք կայ: Աշակերտը ծալլապստիկ

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1923, թիվ 3105 («Քորֆուի որբերուն ողբալի վիճակը»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում:

պիտի ուսանի, պիտի ուտէ, խմէ, պատկի նոյն տեղին մէջ: Որբերու մասին ոչ մէկ գործնական քայլ առնուած է նախապէս: Ամեն տեղ, ուր անոնք փոխադրուեցան, ենթակայ եղան դժուարութիւններու: Շատեր պալատին մէջ տախտակներու վրայ կը քնանան՝ առանց նոյնիսկ մաթրասի և ծածկոցներու»[1]:

Թերթի թղթակիցը տեղեկացնում էր նաև, որ, չնայած Ամերիկյան Նպաստամատույցի գլխավոր վարիչների ազնիվ ու մարդասիրական բարձր վերաբերմունքին, նույն կառույցի երկրորդական պաշտոնյաներից շատերը չարաշահում էին իրենց իրավասությունները: Խոսքը վերաբերում էր հայ որբուհիների խնամքի և կրթության կազմակերպման հարցերին[2]: «Պոլսէն վերջերս Աթէնք և անկէ Հռոտիոս թերակղզի Ամալէօն որբանոցը փոխադրուած որբուհիներէն ոմանց կողմէ հոս հասած տեղեկութիւններէն կը հասկցուի, թէ անոնք խիստ դժբախտ վիճակի մէջ են: Սնունդի անբաւականութենէն զատ, կայ մանաւանդ մայրենի լեզուի գործածութեան արգելքը: Յունարէն և անգլիերէն լեզուները պարտադրիչ են: Իսկ ամենէն ծանրակշիռը սա է, թէ 13 տարեկանէն վեր որբուհիները կը հրաւիրուին, եթէ Ամերիկա ազգական ունին, հոն մեկնելու և հակառակ պարագային, տուներու մէջ իբր սպասուհի ծառայելու»[3],- կարդում ենք թերթում:

Արդեն 1923 թվականի հունվարի սկզբին «Անատոլուի գաղթը կշարունակվի» թղթակցության մեջ թերթի Բեյրութի թղթակիցը տեղեկացնում էր, որ արևմտահայ գավառից հայ գաղթականները շարունակում էին Հալեպի ու Մերսինի վրայով

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:

հասնել Բեյրութ[1]: «Եկողները զրկուած են ամեն բանէ: Հալէպի և այստեղի Ազգ. Միութիւնները վերակազմուած են և կ'աշխատին տեղատրել գաղթականները: Թշուառութիւնը այնքան մեծ է, որ թափուած ջանքերը չեն բաւեր կարօտութիւնը մեղմելու: Բազմահազար գաղթականներ առանց պատսպարանի և ուտելիքի մնացած են: Տեղական օգնութիւնները կաթիլներ են միայն ծով կարիքին մէջ»,- գրում էր լրագրողը[2]: Նա առաջարկում էր հայկական մյուս գաղութներին օգնության ձեռք մեկնել, ապա թե ոչ ապիտակ ջարդի զոհ էին դառնալու հայության վերջին բեկորները[3]:

«Գաղթականներու փոխադրությունը առժամապես կդադրի» թղթակցությունը արտատպված էր «Դեյլի տելեգրաֆ»-ից[4]: Այդ թերթի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում էր, որ 10 օրով դադարեցվել էր արևմտահայ գավառից մայրաքաղաքում կուտակված հայ և հույն գաղթականների տեղափոխումը Սև ծովի եզերքներով դեպի այլ երկրներ[5]: «Ներկայիս Պոլսոյ մէջ 10.000 գաղթականներ եկեղեցիներու և կայաններուն մէջ խճողուած են: Ասկէ զատ տաժանելի ճամբորդութենէ մը վերջ ամեն օր երկաթուղիով մեծ թիւով հայ և յոյն գաղթականներ կը հասնին»[6],- գրում էր թղթակիցը: Միաժամանակ տեղեկացնում էր նաև, որ Բոսֆորի սփերում կայանած հունական շոգենավերը առաջիկայում ևս շարունակելու էին փոխադրել

---

[1]Նույն տեղում, 1923, թիվ 3105 («Անատոլուի գաղթը կշարունակվի»):

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1923, թիվ 3105 («Գաղթականներու փոխադրությունը առժամապես կդադրի»):

[5]Նույն տեղում:

[6]Նույն տեղում:

մնացած գաղթականներին[1]: Նշվում էր նաև, որ միայն սեպտեմբեր ամսին Մերձավոր Արևելքի Ամերիկյան Նպաստամատույցը 2.000.000 դոլար էր ծախսել 17.000 հայ և հույն որբերին ու 165.000 գաղթականներին Հունաստան և Լիբանան (մասնավորապես՝ Բեյրութ) փոխադրելու նպատակով[2]:

«Ամեն տեղ նույն տխուր պատկերը» վերլուծական հոդվածում Աթենքում հայ գաղթականների խնամատարության կապակցությամբ ստեղծված իրավիճակը բնորոշվում էր քառասային բառով[3]: Պատասխանատվությունը հոդվածագիրը հավասարապես դնում էր Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Տ. Չալյանի, Իզմիրի նախկին առաջնորդ Ե. Դուրյան եպիսկոպոսի և Աթենքի Գաղթականական հանձնաժողովի վրա: «Դրամաբաշխությունը հիմնական դարման մը չէ երբեք: Անհրաժեշտ է կորովի միջոցներու մասին մտածել, տեւական ապրուստի պայմաններ պատրաստել»[4],- այս առաջարկն էր անում լրագրողը: Նա վստահ էր, որ անհնար չէր ասվածի իրագործումը, եթե հաշվի առնվեր Ամերիկյան Նպաստամատույցի պատրաստակամությունն այս խնդրում: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Աթենքում հայկական ավանդական 3 կուսակցությունների կողմից հիմնվել էր ՀՕՄ-ի տեղական մասնաճյուղը[5]:

Հունական Լարիսա քաղաքից «Գաղթականներու վիճակը Հունաստանի մեջ» վերնագրով՝ «Ճակատամարտին» ուղարկված թղթակցության մեջ հունական կառավարության քաղաքականությունը հայ գաղթականների նկատմամբ բարյացա-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1923, թիվ 3113 («Ամեն տեղ նույն տխուր պատկերը»):

[4]Նույն տեղում:

[5]Նույն տեղում:

կամ բառով էր բնութագրվում[1]: «Ամեն կերպ դիւրութիւններ կը տրուին անոնց: Հայկ. թաղին մէջ,- Քօքինիատեսայ տաղաւարներ, ուր կը պատսպարուին առժամաբար, առանց տան վարձք վճարելու, անկարող հայ գաղթականներ: 200ի մօտ հայութիւն մը կայ Լարիսայի մէջ: Շատ քիչերը միայն ապրուստ մը ճարելու ի վիճակի են: Մեծամասնութիւնը անգործ է և օգնութեան կարօտ: Կառավարութիւնը օրական 2 տրախմի նպաստ մը կուտայ մարդ գլուխ: Ասիկա մեծ բաւարարութիւն մըն է ամեն միջոցէ զուրկ գաղթականներուն համար»,-կարդում ենք թերթում[2]:

«Բուենոս Այրես գաղթողներու ուշադրության» նամակով տեղի Գաղթային վարչությունը Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին տեղեկացնում էր, որ հայ գաղթականների մեջ ծայր էր առել ալիք դեպի Արգենտինա[3]: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ լուրեր էին տարածվել, իբրև թե Արգենտինայի կառավարության անունից առ այն, որ հայ գաղթականներին այդ երկրում տրվելու էին հողակտորներ՝ միևնույն ժամանակ նրանց ապահովելով աշխատանքով և նպաստով: Նամակագիրը պարզաբանում էր, որ այդ տեղեկատվությունը հեռու էր իրականությունից, որ արգենտինական կառավարությունը որևէ աջակցություն այդ պահի դրությամբ չէր խոստացել հայ գաղթականներին: «Իւրաքանչիւր գաղթական իր անձնական միջոցներուն ապաւինած՝ օրապահիկ մը ճարել աշխատելու է: Բնակարանի նուազութիւնը մանաւանդ կացութիւնը անտանելի դարձուցած է: Գաղթային կեդրոնը իր

---

[1]Նույն տեղում, 1923, թիվ 3113 («Գաղթականներու վիճակը Հունաստանի մէջ»):

[2]Նույն տեղում:

[3] Նույն տեղում, 1923, թիվ 3120 («Բուենոս Այրես գաղթողներու ուշադրության»):

անձուկ միջոցներով ամեն կարելին ի գործ կը դնէ նորահաս գաղթականները տեղաւորելու համար, սակայն կը հաղորդէ, որ եթէ սրհեստ չունեցողներ և լեզուի անտեղեակ գաղթականութիւնը մեծ համեմատութիւն ստանայ, կացութիւնը անտանելի կը դառնայ»[1],- կարդում ենք թերթում:

1923 թվականի հունիսի 9-ին Փարիզից ուղարկված «Խորհրդակցություններ որբերու և գաղթականներու փոխադրության մասին» վերնագրով մասնավոր թղթակցության մեջ ներկայացվում էին Ֆրանսիայի մայրաքաղաքում Ամերիկյան Նպաստամատույցի ընդհանուր քարտուղար Չ. Վիքրիի և նույն կազմակերպության Եվրոպայի ներկայացուցիչ Պերրիի նախագահությամբ տեղի ունեցած խորհրդակցության արդյունքները հայ որբերի պատսպարման, փոխադրման, խնամքի ու դաստիարակության և առհասարակ հայ գաղթականների խնամատարությանն առնչվող խնդիրներին վերաբերող հարցերի կապակցությամբ[2]: Նշվում էր, որ Ամերիկյան Նպաստամատույցի կենտրոնը նույնպես զուտ չէր տիրող վիճակից: «Բոլորը համաձայն էին, որ թէ գաղթականները, թէ որբերը աստիճանաբար փոխադրուին Հայաստան, որքան կը թոյլատրեն պարագաները: Որբերէն պիտի ղրկուին անոնք, որ լրացուցած են 14-15 տարին: Բարեգործականը արդէն վճռած է փոխադրել իր պահած 1500 որբերը և կ'ուզէ, որ Ամերիկեան Նպաստամատոյցը հողագործական կրթութիւն տայ 16էն վեր 100 որբերու»,- կարդում ենք թերթում[3]:

Չ. Վիքրին տեղեկացրել էր ներկաներին, որ Խորհրդային Հայաստանում առաջիկայում նոր շենք չէին տրամադրելու նոր

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, 1923, թիվ 3229 («Խորհրդակցություններ որբերու և գաղթականներու փոխադրության մասին»):

[3] Նույն տեղում:

որբանոցի համար և նույնիսկ նախկինում հատկացված շենքերն էին հետ վերցնում իբր պետական գործածության նպատակով: Նա վստահեցրել էր, որ հայ որբերին ճիշտ կլիներ Հունաստանից, Լիբանանից և այլ վայրերից տեղափոխեին Խորհրդային Հայաստան, իսկ գաղթականներին՝ նաև Հյուսիսային Կովկաս, բայց՝ ոչ ավելի հեռու[1]:

«Ճակատամարտը» նույն թղթակցության մեջ տեղեկացնում էր, որ Միացյալ Նահանգներում Նպաստամատույցին կից, Հենրի Մորգենթաուի նախագահությամբ, ամերիկացի և հայ անդամների մասնակցությամբ հիմնվել էր հայ որբերին ու գաղթականներին արհեստներ սովորեցնելու նպատակով կազմված մի մասնախումբ[2]: Նրանց գործունեության համար կար լուրջ մտավախություն. «Ամերիկացիները պատրաստ են խոշոր գումարներ տրամադրելու, եթե վստահ ըլլան, թէ պիտի կրնան անխափան գործել Խորհրդային Հայաստանի մէջ»[3]:

«Ճակատամարտը» տպագրել էր «Ռուսճուքի գաղթ. հանձնախումբին տեղեկագիրը»[4]: Ըստ այդմ՝ մինչև 1923 թվականի հունիսի կեսերը Ռուսաստանում ապաստանել էր ավելի քան 1300 հայ գաղթական, որոնցից 66-ը որբերն էին, ու գրեթե նույնքան էր այրիների և ծերերի թիվը[5]: «Մինչեւ վերջին տարիներս շարունակաբար ասունցմէ 600 անձի նպաստ տրուած է, իսկ առ հասարակ ամէնքին ալ փայտ տրուած է ամբողջ

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում, 1923, թիվ 3229 («Ռուսճուքի գաղթ. հանձնախումբին տեղեկագիրը»):
[5]Նույն տեղում:

ձմրան ընթացքին»[1],- կարդում ենք այդ տեղեկագրում: Կազմվել էր մի հանձնախումբ հայերի ջանքերով բժիշկ Մ. Գարաճյանի հսկողությամբ[2]: Մահերի թիվը 12 էր եղել հիվանդանոցում և տներում, իսկ ծնվողները շուրջ 35-ն էին[3]: Գործում էին նաև ծերանոց 120 սենձով ու 45-50 գաղթական աշակերտներով ազգային վարժարան[4]:

1923-1924 թվականներին «Լուրեր Հայաստանեն» բաժնում «Ճանկատամարտը» պարբերաբար արտատպում էր «Խորհրդային Հայաստան» թերթից լրաքաղ՝ ներկայացնելով բնակչությանը մտահոգող կենսական կարևորությամբ խնդիրները և որոշակի տեղեկատվություն դրանց լուծման նպատակով կատարված աշխատանքների մասին, որն, իդեպ, Խորհրդային Հայաստանում վարդագույն ակնոցից նայելով էին ներկայացնում[5]: Այդ հրապարակումների մեջ արդեն շատ քիչ տեղեկատվություն կար որբերի և գաղթականների հիմնահարցերի մասին: «Հայկական կյանք» բաժնում «Հայաստանի վիճակը» լուրից կրկին կեղծ տեղեկատվություն էին ստանում հայրենիքից[6]: Էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրվելու նպատակով մեկնած Գևորգ Ասլանյանը, վերադառնալով Կ. Պոլիս, ասում էր, թե Հայաստանի վիճակը գոհացուցիչ էր, իսկ տվի երկյուղը փարատված էր, ու ժողովուրդն էլ նվիրված էր խաղաղ աշխատանքին[7]: Թղթակցություններից մեկում նշվում էր, որ հունիսի 30-ին Երևանում հարկային հանձնաժողովի խորհրդակ-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում, 1923, թիվ 3305 («Լուրեր Հայաստանեն»):
[6]Նույն տեղում, 1922, թիվ 3064 («Հայաստանի վիճակը»):
[7]Նույն տեղում:

ցությանը մասնակցել էին գավառների գործադիր կոմիտեների նախագահները[1]: Կոտայքի շրջանի պատգամավորի զեկուցումից պարզվում էր, որ այդ տարածքի գյուղերում ցրտահարվել էր ցորենի ցանքի մեծ մասը[2]: Ցրտահարվել էր Հրազդանի գավառակի աշնանացանը, իսկ Բաշգառնիում այդ աղետին գումարվել էր ծղրիդների պատճառած վնասը[3]: Լոռիում կարկուտից ու հեղեղներից վնասվել էր գյուղերի գրեթե կեսը[4]: Լրաքաղի մեկ այլ նյութից տեղեկանում ենք, որ հացահատիկի գնի անկման հետևանքով ծանր կացություն էր ստեղծվել գյուղացիների համար:[5] Հունվար ամսվանից սկսած՝ փակվել էին 400-500 տուն ունեցող գյուղերի մասնավոր խանութները, և բնակիչները 1 տուփ լուցկի գնելու համար տասնյակ վերստ էին ոտքով կտրում՝ քաղաք հասնելու նպատակով[6]: Բացի դա՝ գյուղացիները 1 կանգուն կտավի համար տալիս էին 1 փութ ցորեն[7]:

Վերոհիշյալ լրաքաղին «Ճսկատամարտը» կցել էր նաև մի արտատպված լուր, որն ուղարկել էր «Մարտակոչի» Ալեքսանդրապոլի թղթակիցը[8]: Նա հաղորդում էր, որ իրենց գավառում շատ բնակավայրերում բերքի չէին սպասում[9]: Առաջին գավառամասի մի շարք գյուղերում 1 ամիս առաջ էին ցանքերը ոչնչացել հեղեղների պատճառով, իսկ երկրորդում բնակչութ-

---

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3]Նույն տեղում:
[4]Նույն տեղում:
[5]Նույն տեղում, 1923, թիվ 3305 («Լուրեր Հայաստանեն»):
[6]Նույն տեղում:
[7]Նույն տեղում:
[8]Նույն տեղում:
[9]Նույն տեղում:

յանը Նպաստամատույցն էր կերսւկրել վերջին 2 ամսվա ընթացքում. «Չքաւորութիւնը սարսափելի է: Մարդիկ գրեթէ մերկ են»[1]: Թղթակիցը գրում էր, որ 6-րդ գավառամասի Թալինի շրջանում, որտեղ բնակչության մեծ մասը տաճկահայեր էին, երաշտն ու դաշտամկներն էին վնասել արտերին[2]: «Եթէ շուտափոյթ օգնութիւն չհասնի, արտագաղթը կը սկսի, և կարելի չըլլար առաջքն առնել: Առանց ատոր ալ, վերջերս շատցած են դիմումները՝ Հիւսիսային Կովկաս և նոյն իսկ Ամերիկա երթալու համար»[3],- եզրակացնում էր թերթի աշխատակիցը:

1922-1923 թվականներին պարբերականն անդրադառնում էր նաև ցեղասպանությունից մազապուրծ հայության բռնի և ինքնակամ ուծացման խնդիրներին: Ասենք՝ «Ամեն դուռ կփակեն» վերնագրով խմբագրականում թուրքական «Իլերի» պարբերսւկանում տպագրված հոդվածն էր մեջբերում «Ճակատամարտը»[4]: Այնտեղ գրել էին, թե Անատոլիայի հայերը խելքի էին եկել ու գտել էին փրկվելու ուղիղ ճանապարհը, քանի որ «պնդում» էին հետևյալը.

« 1. Անատօլուի մէջ Գրիգորեան (Լուսաւորչական) քրիստոնեաները ոչ մէկ կապ ունին հայութեան եւ հայ լեզուին հետ,

2. հայ սազգ մը կայ, բայց չկայ հայկական հայրենիք,

3. հայերը ոչ մէկ տեղ մեծամասնութիւն ունին, մեծամասնութիւն ունեցող Հայերը կը գտնուին Պարտիզակ, Սասուն եւ Զէյթուն, բայց անոնք ալ փոքր գիւղեր են,

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1922, թիվ 2859 («Ամեն դուռ կփակեն»):

4. այսօր Հայ կոչուած մարդոց շատերը, բուն թուրք ցեղէ սերած ըլլալով, հազար տարի առաջ Գրիգորեան (Լուսաւորչական) կրօնքը ընդունած են,

5. ոչ մէկ ուժ մեր կրօնէն չի կրնար բաժնել մեզ, սակայն մեր թրքութիւնն ալ նուիրական է»[1]:

Խմբագրակազմը վստահ էր, որ այս տեղեկատվությունը ծայրից ծայր հերյուրանք էր, քանի որ դարեր շարունակ Թուրքիայի իշխանությունները ցանկացել էին կայսրության բոլոր ազգերին ձուլել թրքության մեջ: Անհրաժեշտության դեպքում օգտագործել էին յաթաղանը և այլ զենքեր:

Մուդրոսի զինադադարից հետո թուրք պաշտոնյաները նոր քաղաքականություն էին մշակել: «Ատեն մը «ազգով Հայ, Յոյն, Հրեայ, բայց օսմանեան քաղաքացի» կ'ըսէին. այսօր՝ ոչ ուրիշ ազգ, ոչ իսկ լեզու կայ, բացի Թուրքէն և թուրքերէնէն. կան միայն տարբեր կրօններ,- իսլամ և քրիստոնեայ,- իսկ այդ կրօններուն մէջ ալ՝ տարբեր դաւանանքներ,- Գրիգորեան, Կաթոլիկ և Բողոքական: Թուրքիոյ վարիչները մէջտեղ կը հանեն իրենց թաքուն ծրագիրները՝ միանգամ ընդմիշտ ազատելու համար «փոքրամասնութեանց» հոգէն»[2],- գրում էր թերթը:

«Ճակատամարտը» տպագրել էր նաև «Իլերի» պարբերականի վերոհիշյալ հոդվածը՝ իբրև վերնագիր ընտրելով՝ «Անատոլուի մեջ հայերը կթրքացնեն»[3]: «Իլերի» թերթը գրում էր, թե իրենց խմբագրությունն Անատոլիայի տարբեր մասերում ապրող հայերից հանրագրություն էր ստացել, որի մեջ նրանք ասում էին հետևյալը: «Բուն Անատոլուի մէջ ապրող Լուսա-

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 2859 («Անատոլուի մեջ հայերը կթրքացնեն»):

տրչական քրիստոնեաները հայութեան և հայ լեզուին հետ ոչ մէկ առնչութիւն ունին: Այդ վայրերու իսլամն ալ, օրթոտոքսն ալ և Հայը թուրքերէն կը խօսին: Մանաւանդ Հռոմի ենթակայ Հայերուն մէջ հայ լեզուն մուտք գտած չէ: Մեր եկեղեցիներուն և ժողովներուն մէջ մեր խօսած լեզուն զուտ թուրքերէնն է: Բարոյական աւանդութեանց և աւվորութեանց տեսակէտով ալ ուրիշ Թուրքերէ մենք ո և է տարբերութիւն չունինք»[1]:

Սփյուռքի համայնքներում ապաստանած գաղթականներին և որբերին էլ սպառնում էր մայրենի լեզուն և ազգային ավանդույթները մոռանալը: Թերթում բազմաթիվ հրապարակումներ կան այս շեշտադրմամբ: Օրինակ՝ «20.000 հայ երեխաներ անգլերեն կսորվին» լուրով «Ճակատամարտը» տեղեկացնում էր, որ Հայաստանում Ամերիկյան Նպաստամատույցի որբանոցներում 20.000 որբեր անգլերեն էին սովորում[2]: «Իրաքանչիւր երախայ պէտք է նախ և առաջ սորվի իր մայրենի լեզուն և յետոյ ռուսերէնը: Եթէ բաւական յառաջդիմեն այս լեզուներուն մէջ, այն ատեն թոյլ կը տրուի, որ սորվին նաև անգլերէնը»[3],- գրում էր թերթը:

Բնօրրանից արևմտահայության տեղահանման, ցեղասպանության, ուծացման քաղաքականությունը շարունակվում էր նաև քեմալական Թուրքիայում: «Ռիզա Նուր բեյի հայտարարությունները» նյութում «Ճակատամարտը» ներկայացրել էր Լոզանի խորհրդաժողովից հետո այդ քաղաքում թուրք պատվիրակ Ռիզա Նուր բեյի ասուլիսի ուշագրավ հանգամանքները[4]:

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում, 1922, թիվ 2913 («20.000 հայ երեխաներ անգլերեն կսորվին»):

[3]Նույն տեղում:

[4]Նույն տեղում, 1922, թիվ 3064 («Ռիզա Նուր բեյի հայտարարությունները»):

«Կ'ըսեն, որ մենք կը վտարենք Հայերը: Ասիկա ճիշդ չէ: Գալով հայ որբերուն, ահաւասիկ տեղի ունեցածը: Ամերիկացի միսիոնարներ, որոնք որբերը խնամելու հոգը ստանձնած էին, խիստ ցրուած որբանոցներուն ծախքը խնայելու մտքով, բոլոր այդ որբերը Պէյրութ համախմբելու արտո- նութիւն խնդրեցին մեզմէ: Մենք անպատեհութիւն չտեսանք այդ խնդրանքին գոհացում տալու մէջ»[1],- ասում էր Նուր բեյը: Անդրադառնալով ազգային փոքրամասնությունների փոխանակման նախագծին՝ նա նշում էր, որ Թուրքիայից արտասահման տեղահանվող հայերի ու հույների փոխարեն Մակեդոնիայից և Թրակիայից Թուրքիա պետք է փոխադրվեին իսլամ դավանող 400.000 անձինք, որոնց պետք է, այդ ծրագրի համաձայն, տեղավորեին հայերից և հույներից դատարկված բնակավայրերում[2]:

Միևնույն ժամանակ «Հակատամարտին» ուղարկված «Տեսակցություն մը Խորհրդ. Հայաստանի ներկայացուցիչ պ. Ա. Բեկզատյանի հետ հայկական դատի մասին» վերնագրով մասնավոր թղթակցության մեջ ներկայացվում էին թերթի թղթակից Ա. Պատրիկի հարցազրույցի մանրամասները 1922 թվականի ապրիլին Ջենովայում տեղի ունեցած խորհրդակցության՝ ԽՍՀՄ պատվիրակության անդամներից Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ալեքսանդր Բեկզադյանի հետ[3]: Պաշտոնյան ասում էր, որ այն օրերին Հայաստանում ապաստանել էր 250.000 արևմտահայ գաղթական[4]: «Մեր երկրի տնտեսական այս ծանր ճգնաժամին մէջ ահագին բեռ մը

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

[3]Նույն տեղում, 1922, թիվ 2873 («Տեսակցություն մը Խորհրդ. Հայաստանի ներկայացուցիչ պ. Ա. Բեկզատյանի հետ հայկական դատի մասին»):

[4]Նույն տեղում:

կը կազմեն անոնք, և ներկայ կացութեան պատճառներէն մին է այդ խճողումը: Հայաստան իր ներկայ սահմաններուն մէջ ի վիճակի չէ զանոնք պարփակելու: Մեր կառավարութիւնը կը խորհի յարմար ատենին հասկացողութեան մը գալ Տաճկաստանի հետ, այդ հարցը կարգադրելու համար բարեկամական ճամբով, առանց զրգռելու ազգայնական զգացումները: Համաժողովի ընթացքին, երբ նկատի առնուին երկիրներու տնտեսական դրութիւնը վատթարացնող շարժառիթները, Հայաստանի համար իբրեւ առաջին պատճառ երեւան պիտի գայ ստուար գաղթականութեամբ իր խճողուած ըլլալը, որով հարց պիտի ծագի թրքահայ գաղթականութիւնը իր բնակավայրերը վերադարձնելու մասին: Այդ պարագային մենք կրնայինք ուղղակի բանակցութեան մէջ մտնել թուրք պատուիրակութեան հետ եւ համաձայնութեան մը գալ, բայց դժբախտաբար համաժողովը չէ ընդունած անոնց մասնակցութիւնը»[1]:

Ահա այսպիսի լղոզված պատասխան էր տվել Ա. Բեկզատյանն այն հարցին, թե մտադի՞ր էր Խորհրդային Ռուսաստանն իր ազդեցությունը գործադրել ի նպաստ հայության դատի[2]:

---

[1]Նույն տեղում:

[2]Նույն տեղում:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ի մի բերելով մեր այս ուսումնասիրության արդյունքները՝ փաստենք հետևյալը.

- գաղթականների և որբերի հիմնախնդիրները գտնվել են «Ճակատամարտ» օրաթերթի ամենօրյա ուշադրության կենտրոնում,
- «Ճակատամարտը» ոչ միայն պարզապես նկարագրել է գաղթականների և որբերի դրությունը, ոչ միայն ներկայացրել է նրանց կենսապայմանների և ապրելակերպի պարզ նկարագրությունը, այլև վերհանել է այս խավին պատկանող մարդկանց սոցիալական ծառացած խնդիրներն ու դրանց պատճառները,
- պարբերականը բացեիբաց խոսել է թուրքական իշխանությունների կողմից հայ գաղթականների և որբերի նկատմամբ մշակած անտարբեր ու նրանց ֆիզիկական ոչնչացմանը միտված հայասպան քաղաքականության մասին,
- թերթը վկայել է ցեղասպանությունից մազապուրծ հայ գաղթականների և որբերի ունեզրկման, ինչպես նաև բռնի կրոնափոխման և նրանց կամքին հակառակ՝ թուրքացման դեպքերի մասին, ընդ որում՝ խոսել է փաստերով և օրինակներ բերելով,
- Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից, Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից և այդ երկրում ստեղծված նոր՝ հայ ժողովրդի հա-

մար առավել անբարենպաստ ու հայաջինջ պետական քաղաքականության ընդունումից հետո «Ճակատամարտն» այլևս դադարել է սեփական հրապարկումներով հանդես գալ մասնավորապես հիշյալ կարևոր հիմնահարցերի վերաբերյալ՝ բավարարվելով լոկ Խորհրդային Հայաստանի պարբերականներից արտատպումներով, որոնք, բնականաբար, արտացոլել են խորհրդահայ իրականությունն այնպես, ինչպես պարտադրվել է ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից,

- ինչ վերաբերում է քեմալական Թուրքիայում հայ որբերի և գաղթականների խնդիրների լուսաբանմանը, ապա «Ճակատամարտն», ստեղծված քաղաքական հանգամանքներում և կրկին վերահաստատված գրաքննության պայմաններում, արդեն անկարող էր արտահայտել մեր ժողովրդին մտահոգող բոլոր, այդ թվում նաև որբերի ու գաղթականների հիմնահարցերի վերաբերյալ սեփական տեսակետներն ու մոտեցումները,

- «Ճակատամարտն» իր հրապարակումների միջոցով պատկերացում է տվել ոչ միայն Թուրքիայում հայ գաղթականների և որբերի հանդեպ եղած վերաբերմունքի և տարվող պետական քաղաքականության, այլև Հայաստանի Առաջին հանրապետությունում և հետագայում Խորհրդային Հայաստանում մշակված և իրագործվող ծրագրերի մասին՝ ցույց տալով, որ հայկական 2 պետություններն էլ սրտացավ են եղել գաղթական ու որբ դարձած իրենց հայրենակիցների նկատմամբ և իրենց սուղ միջոցներով ձգտել են

թեթևացնել նրանց խնդիրները՝ վերջիններին ներառելով հասարակական կյանքում և այդ նպատակը կենսագործելու համար համագործակցելով հայկական և օտարերկրյա բարեսիրական կառույցների ու կազմակերպությունների հետ;

- թերթի տեսադաշտից չեն վրիպել նաև հայկական գաղթօջախների կողմից հանուն հայ գաղթականների և որբերի արված ձեռնարկները, որոնք, սակայն, չեն խանգարել «Ճակատամարտի» խմբագրակազմին մատնանշել նկատվող թերություններն ու բացերը:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Ազատյան Տիրուհի 47, 48, 49, 50, 51
Աղբյուր Սերոբ 42
Անդրանիկ 42
Ասլանյան Գևորգ 173
Ասլանյան Մանուկ 7
Ավետիսյան Սուրեն 84
Ատյան 64

Բ

Բազրունի Հ. 98, 100, 101, 104, 106
Բակու-բեկ 133
Բարթոն 165
Բեկզադյան Ալեքսանդր 178, 179
Բիչ 91
Բշարի Չաթո 133
Բոյաջյան Թ. 161, 162, 163, 164
Բրայս Ջեյմս 33, 138

Գ

Գաբիկյան Կարապետ 146, 147
Գասպարյան Շահեն 71
Գարագաշ Ե. 126
Գարաճյան Մ. 172
Գյուլբենկյան Գալուստ 121
Գրիգորյան 175, 176
Գևորգյան Կարո 45, 46
Գևորգյան Պ. 53

Դ

Դերոյի աղա 134
Դուրյան Ե. 168
Դուրյան Ղևոնդ 69

Ե

Եփրեմյան Փառանձեմ 17

Է

Էիմարտ Հ. 125, 126
Էնվեր 104

Թ

Թալեաթ 16, 104
Թորոս 155

Լ

Լաքրրզ 155
Լուկաշին (Սրապիոնյան) 126
Լյան Մարսել 137
Լորա 160

Խ

Խալաֆ 135
Խանլարյան Կարեն 36

Խաչատուրյան Գարեգին 142, 148
Խաչատուրյան Հարություն 150
Խատիսյան Ալեքսանդր 92
Խոսրովյան Հմայակ 33

Կ
Կարիբյան Պ. 156
Կուլիխան բեկ 135

Հ
Համբարձումյան Ս. 126
Հասան աղա 68
Հարությունյան Վահան 32, 94, 95
Հյուսեին աղա (Տախմանիսցի) 136
Հյուսեին փաշա (Քյոռ) 135
Հոխիկյան Վաղարշակ 98, 131

Ղ
Ղազարոս 14

Մ
Մաթևոսյան Հմայակ 34
Մանուկյան Հ. Մ. 93
Մարտիկյան Վրթանես 7,
Մաքսապետյան Ա. 36
Մելքոնյան Ռուբեն 36
Մեսիա 64
Մեքեֆին Մաթե 151, 154
Միլս 125
Միլոան 138
Միսաքյան Շավարշ 7,
Մորգենթաու Հենրի 138, 171
Մուամմեր 147
Մուսա բեկ 134

Ն
Նազարեթյան Պ. 128
Նանսեն 161
Նեպ Մաք 118
Նիհատ Ռեշատ բեյ 138
Նիլենտ 166
Նոռ բեկ 134

Շ
Շահլամյան Գ. 55
Շեյխի աղա 133
Շիրակունի Վազգեն 41, 42, 43, 44, 51, 52, 53

Չ
Չալյան Տ. 168
Չաքրյան Առաքել 79
Չիչերին Գեորգի 128

Պ
Պալթանյան Սուրեն 22, 23
Պատրիկ Ա. 147, 178

Պեզճյան Զենոբ 74
Պետերիսանզադաներ 133
Պետրոսյան Մ. 60, 61, 93
Պերրի 170
Պոդոս Նուբար 42

Ջ
Ջեմալ 138
Ջեմիլ 133

Ռ
Ռշտունի Սամվել 59

Ս
Սահակյան Ավետիս 91
Սաղյան Գրիգոր 87
Սամարցև 104
Սայեղյան 74
Սարունի Սարգիս 39
Սարթիպ 134
Սաֆրաստյան Արամ 60
Միրունի (Ճոլոյյան) Հակոբ 6
Սվաճյան Միհրան 64
Ստեփանոս 146
Սրենց Սուրեն 56, 57, 122

Վ
Վանվուշ 102
Վեհունի Արսեն 69
Վիքրի Չ. 145, 170, 171
Վրացյան Սիմոն 83
Վուդի Էդիթ 145

Տ
Տաթևիկ 44
Տեր-Եղիայան Զավեն 24, 37, 54, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 76, 77, 78, 79, 81, 82, 145

Ր
Ռիզա Նուր բեյ 177, 178
Ռոլընտ (Ռոլանդ) 118

ՌՒ
Ռուկկեր 91

Ք
Քսուջազնունի Հովհաննես 91
Քեմալ Մուստաֆա 27, 130, 144, 158
Քենեդի 160
Քոթանցի տոհմ 133

Օ
Օսյան Երվանդ 64

Ֆ
Ֆաստուլայի աղա 134
Ֆերիտ փաշա 73

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա
Ադաբազար 9, 12, 13, 140
Ադանա 12, 37, 131
Աթենք 82, 150, 157, 162, 166, 168, 169
Ալաշկերտ 135
Ալեքսանդրապոլ 85, 86, 98, 99, 103, 104, 105, 108, 109, 120, 124, 125, 174
Ալեքսանդրետ 39
Ալեքսանդրիա 116
Այուր 136
Ալջավազ 135
Ախլաթ 132, 133
Աղբակ 139
Աղթամար 136
Ամասիա 139, 149
ԱՄՆ 38, 67, 81, 93, 125, 126, 130, 143, 146, 150, 153, 167, 171, 175
Այգեստան 136
Այնալը Չեշմե 148
Այնթապ 24, 38, 151
Անատոլու (Անատոլիա) 56, 80, 115, 139, 140, 144, 154, 155, 159, 167, 175, 176
Անգլիա 38, 156
Անդրկովկաս 128
Անտիոք 25
Անտոնյանց վանք 148

Աշտարակ 99, 100, 102
Ապաղա 135
Ավանդ 136
Ատրպատական 84, 93
Արաբկիր 144
Արազդայան 127
Արարատ 135
Արգենտինա 170
Արիֆյե 9
Արճակ 136
Արմավիր 24, 129
Արտամետ 136, 137
Արփաչայ 91
Արևելյան Հայաստան 35, 85
Արևմտահայաստան (Արևմտյան Հայաստան, Էրզիր, Երկիր) 24, 38, 56, 68, 69, 89, 93, 96 116, 139, 140, 144, 153

Բ
Բադուբա (Պադուպա) 112
Բագրևանդ 98
Բաթում 99, 109, 116, 125, 128
Բաղդադ 64, 70, 93, 152, 154, 156
Բաղեշ 131,132, 135

Բայազետ 135
Բաշգառնի 173
Բաշկալա 136
Բասեն 65
Բասրա 112
Բարդնոց 135
Բարթըն (Պարթըն) 40
Բաքով (Պաքով) 122
Բաքու 35, 36, 99, 100, 127
Բաքուբա (Պաքուպա) 127
Բելգիա 121
Բեյրութ 39, 151, 152, 154, 155, 167, 168, 177
Բերա 43, 44
Բերդի թաղ 103, 133
Բերկրի 136
Բիթլիս 27, 139
Բոթուշա (Պոթուշա) 122
Բոլու-Դյուզչե (Պոլու-Տիւզճէ) 140
Բոհտան 133
Բոստոն 120
Բոսֆոր 168
Բրայիլա (Պրայիլա) 122
Բուենոս Այրես 169
Բուլղարիա 81, 93, 117, 141, 160
Բուքրեշ (Պուքրեշ) 122, 123
Բուքովինա (Պուքովինա) 122
Բուլանուխ 134

Գ
Գաթմա 9
Գավաշ 137
Գարակ-Կոլոտցի 99
Գարաչիչակ 103, 105
Գատրգյուղ 45, 47, 148
Գերմանիա 38, 81
Գյուզալզատե 132
Գուլելի 41, 56, 123
Գուզկունճուք 165
Գումզափու 148

Դ
Դամասկոս 39, 150
Դավալու 104
Դատվան 133
Դարաչիչակ 125
Դեր Զոր 152
Դերջան 65
Դիարբեքիր 64, 139
Դիլիջան 99, 100, 103, 105
Դյորթյոլ (Տէօրթ Եօլ) 38, 150

Ե
Եգիպտոս 38, 93, 130
Եկատերինոդար 129
Եվրոպա 161, 170
Երուսաղեմ 112, 154,155

Երևան 35, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 108, 117, 120, 124, 125, 173

Զ
Զեյթուն 175
Զիլանի ձոր 135
Զոնկուլտաք 139

Է
Էնկյուրի 30, 115, 144, 149
Էջմե 11
Էջմիածին 85, 99, 100, 101, 102, 103, 105, 125, 173
Էսկիշեհիր 143, 144
Էրզրում 27
Էրունի 132

Ը
Ըոզախ 134

Թ
Թալին 174
Թախտալու 132
Թավրիզ 126, 127, 131
Թեղուտ 132
Թիմար 136
Թիֆլիս 88, 91, 92, 99, 125, 128, 129
Թոքատ 139
Թրակիա 138, 141, 159, 178
Թուխպա 162
Թուրքիա 4, 6, 14, 17, 20, 26 27, 28, 29, 35, 36, 37, 38, 72, 73, 82, 89, 90, 96, 107, 113, 138, 139, 141, 148, 153, 159, 160, 164, 175, 176, 177, 178, 180, 181

Ի
Իգդիր 103, 105
Իզմիր 130, 132, 157, 158, 168
Իմանշալու 103
Իջևան 103
Իսկենտերուն 150
Իտալիա 121

Լ
Լաթաքիա 153
Լաստրաքի 165
Լարիսա 169
Լիբանան 37, 38, 150, 154, 164, 168, 171
Լիմ 136
Լոզան 29, 128, 160, 177
Լոնդոն 156, 160
Լոռի 173

Խ
Խասգյուղ 47, 48, 49, 134, 148

Խարբերդ 14, 15, 35, 130, 139, 145, 152, 154
Խարդկոդ 132
Խիզան 132
Խնուս 65
Խոշաբ 136
Խորհրդային Հայաստան 81, 108, 109, 110, 111, 117, 118, 119, 120, 121, 123, 124, 126, 127, 128, 129, 130, 153, 156, 159, 160, 168, 171, 172, 173, 177, 178, 179, 181
Խորհրդային Ռուսաստան 128, 172, 179
ԽՍՀՄ 178, 181
Խվներ 134
Խույթ 134
Խույթի դաշտ 134

Ծ
Ծաղկանց լեռներ 135
Ծղակ 132

Կ
Կալաց 122
Կառկառ 137
Կարին 35, 65, 66
Կարմկան 137
Կարմիր վանք 65
Կարս 27, 85, 91, 99, 108
Կեյվե 11
Կեսարիա 155
Կիլիկիա 24, 26, 27, 28, 36, 37, 62, 82, 96, 113, 116, 121, 130, 131, 138, 154, 157, 159
Կիպրոս 159
Կծալի 104
Կծվակ 132
Կոնիա (Գոնիա) 8, 9, 10, 132, 134, 155
Կոնստանցա 122, 123
Կովկաս 36, 83, 84, 98, 118, 119, 120, 125, 141
Կուտայք 173
Կորդվաց լեռներ 133
Կ. Պոլիս 4, 6, 8, 12, 13, 22, 33, 36, 37, 38, 40, 45, 47, 48, 55, 56, 57, 58, 60, 62, 66, 67, 70, 72, 75, 78, 79, 93, 94, 106, 116, 121, 122, 123, 130, 138, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 148, 159, 160, 164, 165, 166, 167, 168, 169, 173
Կտուց անապատ 136
Կուբան 128

Հ
Հալալ Օղլի 104
Հալեպ 22, 38, 39, 93, 143, 146, 151, 152,153, 167

Հաճն 38
Հայաստանի Առաջին հանրապետություն 25, 62, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 100, 101, 102, 104, 107, 181
Հայոց ձոր 136
Հարավային Ռուսաստան 120
Հեքյար 139
Հյուսիսային Կովկաս 24, 85, 128, 129, 171, 174
Հռոփոս 166
Հռոմ 81, 147, 176
Հրազդան 173
Հունաստան 38, 81, 130, 141, 159, 160, 164, 168, 169, 171

Ղ
Ղալաթիա 60, 148
Ղամարլու 103, 105
Ղարաքիլիսա 85, 99, 103, 118, 124, 125
Ղութլիկ 132
Ղուտուղուլի 103
Ղուրլուղուլի 99

Մ
Մալաթիա 139, 145
Մալկարա 11
Մակեդոնիա 178
Մամոտանք 137
Մանազկերտ 134
Մասաչուսեց 120
Մարաշ 38, 114, 130, 143, 151
Մարզարա 103
Մարդին 139, 151, 152
Մարզվան 17
Մարմարա 36
Մարսել 121, 157
Մաքրիգյուղ 148
Մեծ Ղարաքիլիսա 98, 105
Մերձավոր Արևելք 86, 108, 111, 120, 126, 161, 168
Մերսին 38, 131, 167
Մերտեկյոզ (Մերտեկեոզ) 15
Միջագետք 109, 112, 156
Մոկս 137
Մոսկվա 35, 84, 99, 100, 101, 102, 103, 105
Մոսուլ (Մուսուլ) 10, 22, 93, 152, 154
Մոտկան 133
Մորխ 132
Մուդրոս 4, 6, 8, 12, 16, 17, 23, 25, 37, 49, 56, 70, 78, 138, 147, 176
Մուշ 131, 133, 135
Մշո դաշտ 134

Յ
Յալաքտերե (Եալաք-Տերե) 15
Յալթա 128
Յալովա (Եալովա) 15
Յաշ (Եաշ) 122
Յոզոսատ 155

Ն
Նահր էլ Օմար 109, 112, 155, 156
Նիկոմիդիա 146
Նյու Յորք 125, 143
Նովորոսիյսկ 128
Նոր Բայազետ 99,.103, 104
Նորդուզ 136
Նորտուղ 129

Շ
Շահբազ 136
Շամիրամ 132
Շատսախ 136

Ո
Ոզմ 137
Ոստան 137

Չ
Չխուր 134

Պ
Պարսկաստան 141
Պարտիզակ 11, 175
Պեշիկթաշ 44, 148
Պետրոգրադ 99
Պիրեոն (Պիրէօն) 157

Ջ
Ջալալ Օղլի 99, 101, 124
Ջեբել (Ճէպէլ) 151
Ջենովա 178
Ջրխոց 132

Ռ
Ռահվա 132
Ռոդոսթո 121, 145, 146
Ռումինիա 81, 122, 165
Ռուսաստան 35, 83, 85

Ս
Սալախանե 68
Սաղմոսավանք 124
Սամաթիա 148
Սամոս 157
Սամսոն 141, 142, 149
Սյուրմենե 142
Սանահին 99
Սասուն 35, 131, 133, 135, 175
Սարա 136
Սարիղամիշ 98

Սեբաստիա 35, 114, 146, 147, 149, 150
Սելանիկ 157, 161, 163
Սիլիստրե 123
Սիրիա 10, 37, 38, 81, 83, 130, 150, 151, 154, 157, 159
Սկյուտար 148
Սղերդ 133, 139
Սղկա 149
Սոխում 99
Սպարկերտ 137
Սպեր 65
Սվազ 139
Ստամբուլ 36, 37
Սուետի 25
Սուլթանյե 10
Սուչովա 122
Սուրմալու 85, 92
Սև ծով 140
Սևր 138
Սևքար 103

Վ
Վան 27, 35, 68, 98, 109, 131, 135, 136, 149
Վաշինգտոն 143
Վասպուրական 98
Վարագա վանք 68, 136
Վրաստան 84, 85, 87, 93, 101, 109, 120

Տ
Տաճկահայաստան 27
Տատիկ 132
Տարոն 35
Տարսոն 131, 150
Տիացին 135
Տիգրանակերտ 35, 133, 151
Տրանսիլվանիա 122
Տրապիզոն 141, 142, 147
Տութաղ 135

Ր
Ռես-Յուլ-Այն (Ռեսյուլային) 22, 23

ՈՒ
Ուրդափ 132
Ուրմիա 131
Ուրֆա 38, 151, 152

Փ
Փաղարճըլք 123
Փարիզ 116, 157, 170
Փարխանդ 132
Փոքր Ասիա 157
Փոքր Հայք 146
Փրխուս 13

Քանաքեռ 99, 103, 105

Քեշիշքենդ 103
Քիշինև 122
Քիլիս (Քիլիսե) 134, 151
Քորֆու 160, 165
Քուֆրա 133

Օ
Օհանավանք 124
Օսմանյան կայսրություն 22, 35
Օրթաքյուղ 49, 50, 51, 52, 53, 148
Օրթաքեո 164

Ֆ
Ֆիլիպե 116
Ֆրանսիա 82, 170

ՄԱՐԻԱՄ ՎՌԱՄԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Կ.ՊՈԼՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ (1918-1923 ԹԹ.)

Տպագրիչ՝ Է. Մուրադյան
Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

ՄԱՐԻԱՄ ՎՈՒԱՄԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ծնվել է 1968 թ. մայիսի 19-ին Երևանում: 1990 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: 1990-ից աշխատում է Հայաստանի Հանրային ռադիոյում՝ նախ՝ որպես լրագրող, խմբագիր, ավագ խմբագիր, հետո՝ հեղինակ և վարող մի շարք, այդ թվում՝ «Բարի լուր», «Հայկական բանակ», «Իմ իրավունքը», «Հայկական գաղթօջախներ» և «Հայկական հարց» հաղորդաշարերի: 2006-ից ցորս աշխատում է ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնում: 2019-ից առաջատար գիտաշխատող է: 2001 թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2001-2015 թթ. դասախոսել է մայրաքաղաքի տարբեր բուհերի, ի թիվս որոնց՝ ԵՊՀ և ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ժուռնալիստիկայի ֆակուլտետներում: 2011 թ. պարգևատրվել է «ՀՀ Ջինված ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալով: 2013 թ. արժանացել է Գովեստագրի՝ պատմության ինստիտուտի հիմնադրման 70-ամյակի առթիվ և արդյունավետ գիտական գործունեության համար: 2015 թ. որպես փորձագետ ընդգրկվել է www. armeniangenocide100.org կայքի «Մամուլը 100 տարի առաջ» բաժնում: Զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Հեղինակ և համահեղինակ է մենագրությունների, ուսումնական ձեռնարկի և 30-ից ավել գիտական հոդվածի:

- «Կ. Պոլսի ՀՅԴ պարբերական մամուլը ազգային-ազատագրության ջահակիր 1909-1915 թթ.», Ե., 2003:
- «ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.)», Ե., 2009:
- «Արևմտահայ մամուլի պատմություն (1832-1915 թթ.) դասախոսություններ», Ե., 2014:
- «ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերական մամուլը Օսմանյան Թուրքիայում 1909-1915 թթ. և 1918-1923 թթ.», Ե., 2016:
- «Հայ պարբերական մամուլի պատմություն 1900-1922» (հեղինակներ՝ Ա. Խառատյան, Լ. Գևորգյան, Մ. Հովսեփյան և այլք), հ. 2-րդ, Ե., 2017:
- «Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թ. մամուլի էջերում (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու)» (խմբագրական կազմ՝ Գ. Մանուկյան, Ա. Մարուքյան, Ժ. Պէօճէքեան, Ա. Ոսկանյան, Մ. Հովսեփյան), հ. 1-ին, Ե., 2018:
- «Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թ. մամուլի էջերում (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու)» (խմբագրական կազմ՝ Գ. Մանուկյան, Ա. Մարուքյան, Ժ. Պէօճէքեան, Ա. Ոսկանյան, Մ. Հովսեփյան), հ. 2-րդ, Ե., 2018: